





4

2004



1016-674

# ՃԵՌ

ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐԴՈՅ ԿԸ-  
ՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ

ՅՕՐԻՆԵԱՅ ՊԱՏՈՒԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ ԿԱ-  
ՐԱՊԵՏԵԱՆ ՉԱՄՈՒՌՃԵԱՆՑ ՊՐՈՒՍԱՅԻ



ՏՊԵՑԱԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ  
ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԱԶԱՏՐՈՅ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆ

1843 = ՌՄՊԲ



576-2004

# Յ Ա Ն Կ

ՅԼՈՒԽ . Ա . Կրթութիւնը հին ըլլալուն վրայ :	1
ՅՕԴՈՒԱԾ . 1 . Մարդը կատարեալ ստեղծ- վեցաւ :	3
ՅՕԴՈՒԱԾ . 2 : ՀԱՏՈՒԱԾ . 1 . Լեզուն հնա- րոջը ո՞վ է :	14
ՀԱՏՈՒԱԾ . 2 . Նախնեաց երկայնակեցու- թեան վրայ :	33
ՅՕԴՈՒԱԾ . 3 . Կառավարութիւն ու օրէնքը որկէ՞ց և ե՞րբ հաստատուեցաւ :	77
ՅՕԴՈՒԱԾ . 4 . Գիւրը ե՞րբ հնարուեցաւ :	110
ԳԼՈՒԽ . Բ . Առաջին կրթութիւնը ավրովե- լուն սլաւոնները :	128
ՊԱՏՃԱՌ . 1 . Բազմաստուածութիւն և ան- աստուածութիւն :	129
ՊԱՏՃԱՌ . 2 . Լեզուաց բաժանումն :	136
ՊԱՏՃԱՌ . 3 . Կենաց կարճութիւնը :	144
ՊԱՏՃԱՌ . 4 . Բանական կառավարութիւնը :	153
ՊԱՏՃԱՌ . 5 . Սուտանուն գիտութիւնը :	161

8 5 0

1. ... .. 1

2. ... .. 2

3. ... .. 3

4. ... .. 4

5. ... .. 5

6. ... .. 6

7. ... .. 7

8. ... .. 8

9. ... .. 9

10. ... .. 10

11. ... .. 11

12. ... .. 12

13. ... .. 13

14. ... .. 14

15. ... .. 15

16. ... .. 16

17. ... .. 17

18. ... .. 18

19. ... .. 19

20. ... .. 20



## Լ.Օ, Գ.Լ.ՐԼ.ՐՈՒԹԻՒՆ

Ղոյայի Քաղաքավարութե գրոց՝  
երրորդ հատորին 206 և 207 թղթա-  
համարները մէկ ծանօթութիւնով մը  
Ղոյայի և այն գրոցէն ելող ուրիշ  
փիլիսոփայներուն կրթութե վրայօք  
մէկ սխալնին նշանակելով՝ այն նիւ-  
թոյն վրայ ընդարձակ խօսիլ խոստա-  
ցանք • հիմա Լստուծոյ օգնութե՛ր՝  
այս ճառովըս այն խոստմունքը կա-  
տարելու միտք ունիմք •

170. 11. 11. 11. 11. 11. 11. 11.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and fading.

## ՅԼ.Ռ.Լ.Տ.Լ.Ռ.Լ.Ն

Փիլիսոփայութիւնը թաղեսի և Պիւթագորայ օրերէն մինչև հիմայ ամէն կերպարանքի տակ մըտաւ . որքան խենթ ու մենթ կարծիքներ կային նե՛ փիլիսոփայներուն մէջն իրենց պաշտպան դասն . մինչև Աիկերոն Հռոմայեցի Ատենարանը՝ որ փիլիսոփայ ալ էր, իր մէկ գրքին մէջը կրտէ . Չըգիտեմ անանկ մէկ յիմարական կարծիք մը կսյ՞ մի՛ որ փիլիսոփայներուն մէկը անոր թեր կայնած չըլլայ :

Յունաստանի մէջ փիլիսոփայութիւնը առաջները առանդութե՛ք ըլլալով՝ ամէն մէկը իր խելքին կըտարածը և իր երևակայութեան հնարածը փիլիսոփայութիւն է ըսելով երևան հանելու չէր համարձակեր . իմաստութե՛ հետամուտ եղողները ետքի փիլիսոփայներուն պէս իրենց առնը նստելով և խորհելով իրենց ուղեղէն բան գրանել չունէին . որ տեղ իմաստունի և իմաստութեան ձայն կը լսուէին նե՛ հոն կերթային . անկէց կը սորվէին . և սորվածնին ալ ուրիշներուն սորվեցընելու դպրոց կը բանային : Ասանկ էին Պիւթագորոս և Պլատոն և թաղեսի՝ որ Եգիպտոսի քուրթերէն բան սորվելու համար Եգիպտոս գացին : Այն ատենները փիլիսոփայութիւնը պատմութեան պէս բան մըն էր . ինչպէս որ պատմութիւնը՝ մէկ մարդ մը մտածելով չի կըրնար գրանել , և ասանկով գըտնըվածները

պատմութեան ձև ունինալնէ՝ ստոյգ պատմութի չեն՝ առասպել են, ասանկալ փիլիսոփայութիւնը մարդոց բանական հոգւոյն առաջին ժամանակներէն ՚ի վեր ունեցած հարստութիւններուն պատմութիւնն է. թէ որ հաւատարմութեամբ հիներուն աւանդածը չի պատմէ նէ՝ փիլիսոփայութիւն չէ՝ Սուտանուն գիտութիւն է. այսինքն՝ գիտութեան միայն անունը ունի:

Այս ըսածիս առաջին փորձը Արիստոտէլ ցըցուց իր վրան: Ասիկայ Պղատոնի աշակերտ՝ և շատ սրամիտ մարդ մըն էր. հայրը բժիշկ, և ինքնալ տղայութեւն տաճնէն բժշկութեան հեռեւած ըլլալով և մարդոցս միայն զգալի մարմինը քննելու խելք հասցընելով՝ բանական հոգւոյն գոյութեւնը և հանգամանքներուն վրան շատ սխալներ ունեցաւ. Պղատոնի ալ մէկ հակառակութիւն մը ունէր, անոր կարծիքէն հեռացաւ. որ անորը չէր, անոր ուրիշներէն սորվածն էր (1). Ինքնիրեն մտածելով Մեթաֆիզիքս մը և Բարոյական մը հնարեց. որ մեջը ինչ աղէկ բան ըսած ունի նէ՝ Պղատոնէն առած է, և ինչ

---

Ծ. (1) Գաղիանոս բժիշկը կըսէ որ՝ Պղատոն Հիբոկրատայ աշակերտ էր. այսինքն՝ անոր վարդապետութեանցը հեռեւող. և Հիբոկրատ՝ մարդկային ծանօթութեանց երկու սկիզբն կուտար. զգայարանքն ու միտքը: Արիստոտէլ Պղատոնի հակառակելու համար՝ այս երևելի բժշկապետիս վարպետութենէն ալ զատիկցաւ:

սխալ կայնէ՝ իրեն յատուկ է :

Ինքը Աստուծոյ գոյութիւնը կը ճանաչէր . բայց իրեն խելքը ամէն բանի դատաւոր բռնելով անանկ տկար և երկդիմի խօսքերով Աստուծոյ գոյութիւնը հաստատեց՝ որ իր աշակերտներուն մէջէն ելան առաջին անաստուածները . և իրենց մոլորութիւնը հաստատելու համար մինչև Արիստոտէլի գրած գիրքերէն վկայութիւն կը բերէին . և ասիկայ՝ իրենց կողմնակից դանկելու մտքով՝ այն անուանի մարդոյն վրան զրոյարտութիւն ընել չէր . քանզի մինչև հիմա մնացած գիրքերուն մէջէն ալ երկու կողմին անանկ յարմար խօսքեր կաննելի՝ որ Աստուծոյ գոյութիւնը կը հաստատուի ալ՝ կը ջրբոյն ալ . և Արիստոտէլ ինքը ինչ մըտքի վրայ ըլլալը՝ աղէկ մը չի գիտցրելիր :

Եւ յիրաւի՝ իրեն խելքը կշիռ բռնելով՝ փիլիսոփայական դրութիւն հնարող մարդը՝ ո՞րքան խելացի և զգուշաւոր ըլլայնէ՝ հակասական խօսքերէն չի կրնար աղաս մնալ . մութը մնացած մարդու պէս մէկ մը մէկ դիտու պատին կը զարնելի՝ մէկ մը մէկ ալ դիտուն : Լոյսը ճշմարիտ փիլիսոփայութիւնն է . ճշմարտութիւնն ալ մէկ է . այն ալ յայտնողը Աճ է . և ճշմարտութիւն աւանդը անմիջապէս Աստուծակաճողը՝ առաջին մարդն է . ուրիշներուն ալ անկէց անցած պիտի ըլլայ : Աւանդութեամբ ետքի մարդոց հասած փիլիսոփայութեան չի հաւնող մարդը՝ կամ հիններուն աւանդութիւնը փոխված և ավրելված ըլլալը ստոյգ յիշատակարաններէն զբանելով՝ մաքուրը հրատարակելու է . կամ ճշմարտութիւնը ես

հնարեցի ըսելու ե: Առաջինը ըսելու բառկան-  
 թիւն չունենալով՝ իրաւունք աւ չունէք Արեւ-  
 ատակ, երկրորդը ըսելով չի կըրնար ըսալ, քանզի  
 խենթի կորդ մըանելով, հիւանդանոցը մըանելու  
 արժանի կըլար, ուստի հարկաւորապէս ինչ որ  
 էր մե առաջ զրուցող չի դըրնելիւով ինքը առնէն  
 առաջ զրուցեցնէ՝ փիլիսոփայութիւն չի կըրնար  
 ըսիւլ: Սուրանուն գիտութիւն կըլայ:

Ասով ըսել չեմ ուզէք որ Պշտտն ինչ որ գրեց  
 նէ՝ ամեն աւ լման են, քանզի այն աւ իր խելքովը  
 գըտած բաներ ունի: ուրիշներուն գտածն աւ առանց  
 դատողութեան հաստատուն աւանդութեան մը պէս  
 էր գիշերուն մէջը առած կըրնայ ըսալ, մանաւանդ՝  
 Հասարակապետութեան և Օրինաց գիշերուն մէջ:  
 Սակայն ինչ որ Արեւատակի համար ըսիք նէ՝  
 Պշտտնի և ուրիշ ամեն փիլիսոփայից համար աւ  
 կըրնանք ըսել, ինչ բան որ շիտակ ըսեր են՝ հինե-  
 րուն աւանդութեանն առնելով ըսած են, և ինչ  
 սխալ որ կըխօսին՝ ետքէն մըտած է, որ կամ իրենք  
 հնարեր են՝ կամ ուրիշն հնարածները առանց  
 քննութեան ընդուներ են:

Շիտակ փիլիսոփայութիւնը՝ ասոնց ամենուն  
 դրութեանն ընարելով և սուրբ գրոց սորվեցուցա-  
 ծին համեմատը առնելով կըրնայ ըսալ, և հիներուն  
 մէջը Պշտտն մեծաֆիլիզոփայի կողմէ՝ և Ստոյիկեան  
 փիլիսոփայները՝ բարոյականի կողմէ Յշմարիտ փիլի-  
 սոփայութի մօտ են, այսինքն՝ այս գիտութիւններու  
 վերաբերեալ բաներուն մէջ ասոնց սխալը՝ ուրիշ

գրութիւններուն նայելով քիչ է: Եւ ասանկ բաները ընտրելով ձեացած փիլիսոփայութիւնը՝ կրավի Էփէֆէթիքի՝ կամ Ընտրական: Եւ ետքի դարերուս փիլիսոփայները՝ ամեն գրութեանց մէջ սխալ գրանելով այս տեսակ ընտրական փիլիսոփայութիւնը երևան հանելու ձեռք զարկին: Բայց ամեն մտղ ասոնք ընտրելու չափը և փորձաքարը չի կրնալ գիտնալով ընտրական փիլիսոփայութե միայն անունը պարասպ տեղը իրենց վրայ առած գրանդ վեցան: Բայց փիլիսոփայութիւններնուն թէ որ ճիշդ անուն մը տալ ուղեկէն՝ Խառնական ըսելը ամենէն յարմար կուգայ: Ասոնց պէս է հիմակվան Քրոնանայի Ընտրական ըսված փիլիսոփայութիւնը • և ասանկ ալ ըլլալ հարկ էր իրենց գրութեանը կողմէն: Քանզի մէկ կողմէն Պաքոնի և Քօնալլլէաքայ և ասոնց դպրոցին փիլիսոփայութիւնները կար, որ մտղ կային հողւոյն կատարելութիւնները չի ձանչնալով զգալիներուն աւելի խելք կուտային, ուստի Նիւթական իմաստասէր ըսվեցան: Մէկ ալ կողմէն՝ Պալլանչի և Պօնալտի և Տրմէսթրի և ասոնց դպրոցին փիլիսոփայութիւնը գտան՝ որ Աստուածաշունչ գրոց համեմատ եկած չին աւանդութիւնները իրենց ընտրութե՞ր կանոն բրնած ըլլալով անկէց չէին խախտեր • և ասոնք ալ Աստուածաբան իմաստասէր ըսվեցան: Մէն ալ Պիոան և Քուզէն և Լաոսմիկիէա և ուրիշները ասոնց երկուքէն խառն մէկ փիլիսոփայութիւն մը ուղեցին հանել • կամ աւելի ճիշդ խօսելով՝ Նիւթական փիլիսո-

փայութեան սկզբունքները Աստուածաբանականին  
 յարմարել . և այս որ չեղաւ նէ՝ ուրիշ կերպ դար-  
 ձուցին . Աստուածաբանականը՝ Նիւթականի յար-  
 մարեցին . բսել է որ՝ ինչ որ չի կրբցան ծռելով  
 ծրամըսկելով իրենց չափին բերելնէ՝ անիկոյ ետ  
 ձգեցին : Եւ սխալ ըսված բանը՝ ասանկ փիլիսո-  
 փայութեան էական յատկութիւնն է . քանզի հոգին  
 և միտքը նիւթ չըլլալով՝ յայտնի է որ նիւթական  
 փիլիսոփայութեան չի յարմարելու շատ անգեր ու-  
 նին . ասոնք ծրռելով յարմարելը՝ սխալ կըլլայ . և  
 ետ ձրգելը՝ սղակասաւոր ընել կըլլայ : Ուստի բուն  
 Ընտրական ըսվելու արժանի փիլիսոփայութիւնը՝  
 Աստուածաբանական ըսվածն է . և ասիկայ ուրիշ  
 դրութեանց հետ համեմատելու և այն դրութեանց  
 ու ասոր միջինը գըտնելու աշխատիլը անհնար բան  
 է . և Ե. քլէ. քթիք ըսված իմաստասէրները թէպէտ  
 շատ բաներ կըրնան մտածել . իրենց մտածածը կըր-  
 նան գրել . բայց քանի որ այս դրութիւնն՝ ճըշ-  
 մարիտ փիլիսոփայութի գըտնելիք չունին . գտածնին  
 և գըտնելիքնին՝ Մտացածին փիլիսոփայութիւն է .  
 այսինքն՝ Սուտանուն գիտութիւն :

Փիլիսոփայութեան այլ և այլ բաժանմունքներուն  
 վրայ՝ և անոնց ամեն մէկին մասնաւոր կարծիքնե-  
 բուն վրայ խօսիլը՝ մեզ բոլորովին մեր նպատակէն  
 դուրս կը ձգէ . ուստի մենք այս անգըս միայն մէկ  
 մասնաւոր կարծիքի մը վրայ խօսիմք , որ հիներուն  
 և նորերուն իրարու հետ բաղդատութենէն ելած  
 ըլլալով՝ նոր ժամանակիս փիլիսոփայութեան յա-



տակ մէկ բան մը եղած կըլլայ :

Արուեստից ե բնական զիտութեանց ե աշխարհագրութեան վրայ՝ քի 1500 թուականէն ետքը շատ բաներ գըրանելով՝ որ հիները չգիտէին կը կարծըվի (1) , շատ մարդիկ սկսան մըտովընին դնել որ՝ անանկ է նէ հիները իսկոտ շատ բաներու անդէտ էին : Անկէց ետքը սկսան քննել թէ ինչ գիտէին ե ինչ չէին գիտեր • ե այս քննութեանս մը պարծանաց ոգի մըն ալ մտաւ • քանզի քննիչները նոր ժամանակի մարդիկ ըլլալով՝ քանի տեսակ բանի զիտութիւն հիներէն վերցընելին նէ՝ իրենք այժբան ատիճան աւելի խելացի սեպըած կըլլային : Եւ ասոնց մը անհաւատութեան ոգի մըն ալ խառնըվելով՝ քննութիւնընին աւելի ծըռեցին :

Տանն ե ութերորդ դարուն մը՝ Ինկիլթէոս ե Նէմցէտանն ե Քոանսա էղ մը փիլիսոփայներ էլան՝ որ որպէս թէ ամեն բանին քննութիւնը լըմընցուցած ըլլալով՝ սկսան այն քննել որ մարդկային

Ծ. : (1) Հիներուն զիտցածին վրայ՝ միայն իրենց զիւքերէն տեղեկութիւն կըրնանք ունենալ • ե ամեն զիւքերէնին ալ ամբողջ ձեռվընիս հասած չըլլալով՝ չենք կըրնար անոնց համար այս ինչ բանը չէին գիտեր աւելի վճռել • կարելի է որ՝ նորերը հնարեցին ըսած բաներնուս շատը առաջկուց եղած՝ ե ետքը մոռցըված ըլլան • որ նորերը այն մոռցըվածը գտան ըսելը աւելի ճիշդ կուգայ :

ընկերութիւնը ի՞նչ պարագայներով հաստատուած  
 կըրնայ ըլլալ, և ըսին որ՝ մարդոց առաջին վիճակը  
 վայրենութիւնն ու բարբարոսութիւնն է • ետքը  
 բարբարոսական վիճակէն ձանձրանալով՝ շատ մը  
 մէկ անդ եկան, ընկերական կեանք մը հնարեցին •  
 Իրենք իրենց օրէնքներ գրին • գլխաւոր իշխաններ  
 և թագաւորներ հաստատեցին • ընկերական կապը  
 չի քակելու պայման և դաշինք գրին • և ասով ընկե-  
 րական կեանքը հաստատեցաւ : Այս դրութեանս  
 գլխաւոր պաշտպան կեցաւ Ժան Ժազ Ռուսօ ա-  
 նուն Ճինէվայի Քոանսըզ փիլիսոփայն • և  
 Մարդկան վիճակին անհաւասարութեանը վրայ շի-  
 նած ճառովը՝ և Գաշն ընկերական ըսված գիրքովը  
 այս դրութիւնս հաստատելէն ետքը՝ Էմիլ ըսված  
 առասպելական պատմութեանը մէջ՝ այս դրութիւնս  
 համեմատ աղայ կըրթելու ճամբաները սորվեցընե-  
 լու ելաւ : Եւ այս գիրքերուս մէջ միշտ այն կըլսօ-  
 սի որ՝ վայրենութեան վիճակը մարդոց առաջին  
 վիճակն է • ուստի մարդոցս բնական է • և կրթութիւնը  
 ետքէն ըլլալով մարդոցս բնականին դէմ է, կրթեալ  
 մարդ ըսելը՝ բնութիւնը ավերված մարդ ըսել է :  
 Ասիկայ կարդալով Աիկերանի ըսածը միտքըդ պիտի  
 դայ՝ որ վերը պատմեցինք, թէ չեցայ յիմարական  
 կարծիք մը՝ որ փիլիսոփայներուն մէկը անոր թեր  
 կեցած չըլլայ : Այս կարծիքս էր մնացեր պաշտպան  
 չունեցող • Ռուսօին բաժնին ալ այս լինաւ : Բայց  
 իրեն ներքին միտքը՝ ասիկայ հաստատելով՝ երկու  
 բանի կը նայէր : Մէկ մը ըսածներէն այն հեռու

Թիւնը պիտի հաներ որ՝ որովհետև կրօնքը առանց ընկերութեան չըլար. ընկերութիւնը ետքէն հնարված և մարդկային օրէնքներով հաստատված ըլլալով կրօնքնալ մարդկային մտաց հնարք եղած պիտի ըլլայ: Երկրորդ հետևութիւն՝ կրթութիւնը մարդկային բնութեան դէմ ըլլալով կրօնքնալ որ կըրթութեան ծնողէ՝ մարդկային բնութեան դէմ է: Ասանկով անկրօնութիւնն ու անաստուածութիւնը փիլիսոփայական դրութեան տակ խօթել ուղեց:

Եւ իր ըսածը հաւանական ընելու համար՝ սուան ու իրաւը իրար խառնելու շատ վարպետ էր:

Բայց այս դրութիւնս իրեն տակը անձոռնի հակասութիւններ պարունակելով չէր կըրնար մարդոյս մտքին մէջ տեղ գըտնել, և ասոր դէմ ծանր ծանր և անլուծանելի անարկութիւններ ելան. որ պատասխան տալը անհնար էր: մինչև նոյն իսկ Վօլթէն՝ որ առաջները շատ բարեկամ էր հետը, ըսկաւ ծաղր ընել կը մեղքընամ Ռուսօ կըսէր՝ որ խելքը փախուցեր է. անձ տար որ մէկ բարեկարգեալ հիւանդանոցի մը մէջ դնէին և վարպետ բժիշկի մը ձեռք իյնար՝ որ խելքը շուտով գըտը գար կըսէ: Այս դժուարութիւններուս մէկ քանին՝ այս ճառիս մէջը երբ որ կարգին գայնէ՝ կը տեսնես:

Որովհետև այս դրութիւնը նոր ելած տեղները շատ մարդու մըտքին համեմատ էր, և Ռուսօ ալ բացատրելու անանկ վարպետ խաբէական ձևեր բանեցուցեր էր՝ և անանկ գեղեցիկ ճարտասանական սձերով գրեր էր՝ որ կարգացողը կը զմայլէր, դա-

տեղու ատեն չէր կրնար ունենալ (1) : ասոր համար շատ մարդոց ընդունելի եղաւ . և ասոնք ալ դրութեանը մէջէն քանի մը սրարդայները՝ որ շատ անճառնի էին և կարկրտան ամենեկին չէին վերցրներ , մէկ դի ձրգելով , առաջին մարդիկը անկիրթ էին , կրթութիւնը ետքէն մտաւ ըսելը ընդունեցին : Ասոնց կարգն է նա և ճոյս փիլիսոփայն . ինչպէս որ քաղաքավարութեան մէջ շատ տեղերը , մանաւանդ երկրորդ մասին վերջին գիրքը կարդալով կը հասկընաս :

Բայց չգիտեմ որ՝ Ռուսոյի դրութեան հիմը ընդունելէն ետքը՝ մէկալ ըսածները չընդունելու ի՞նչ իրաւունք ունեին : Արթութիւնը ետքէն հընարված ըլլայ նէ՝ մարդոյս հարկաւոր եղած չըլլար . հարկաւոր չէ նէ՝ բնականալ չէ . բնական չըլլալով՝ բնականին վրան դայնէ կալուէ . անանկ է նէ՝ կրթութիւնը ետքէն հնարված է ըսողը՝ հարկաւորացէս կրթեալ մարդը բնութիւնը ավրած մարդ է ըսելու է . բնութիւնը ավրած ըսելէն ալ մարդկային բնութէ դուրս ինկած ըսել կը հեռի . վերջապէս՝ մարդ չէ ըսելու լոմընցընելու է :

---

Ծ. : (1) Մասամ Էթաէլ անուն փիլիսոփայ կին մը կըսէ որ՝ Ռուսոյի էմիլը կարդացած ատենըս զմայլելով՝ ասկէց ալէկ փիլիսոփայական դրութի չի կրնար ըլլալ ըսի . ետքը մտածելով՝ ասանկ անճառնի դրութեան մը հաւնած ըլլալուս ես ալ զարմացայ :


Եւ թէ որ կրթութիւնն է որ մարդը մարդ կընէ կրտեննէ՝ ինչպէս որ Ճոյս կըսէ, կրթութիւնը ետքէն հնարովեցաւ ըսելը՝ մարդըս ետքէն մարդ եղաւ, և մարդ չեղած իքէն՝ իրեն մարդ ըլլալուն ճամբան ինք դտաւ ըսել կըլլայ. և մարդս ե՞րբ կրթութիւն սկսաւ տէյի խնդիր ընելը՝ մարդս ե՞րբ մարդ եղաւ տէյի հարցընելու պէս է: Եւ ասիկայ յայնանպէս հակասութիւն պարունակելուն համար՝ անընդունելի դրութիւն մըն է. և խնդրոյն ուրիշ պատասխան չի տրուիր, բայց թէ անոնց ուրիշ հարցում մը ընելով թէ՛ մարդս ե՞րբ մարդ չէր:

Այս հետևութիւնս հանողը ես չեմ. անաստուած փիլիսոփայներուն մէջէն Չելլիցիուս անուն մէկ մը՝ Վոլթէռի ժամանակակից՝ Յաղագս մարդոյ անունով շինած գիրքին մէջը՝ իրեն բանական ըլլալը մտնալով՝ մարդս միայն ձեռքին մտովներուն գիւրդարձ ըլլալովը անասուններէն կը տարբերի ըսաւ. բնական պատմութիւն դրող փիլիսոփայներ երան՝ որ մարդըս տեսակ մը կապիկ է ըսին. (կարելի է որ ասիկայ միայն իրենց համար ըսած ըլլային, որ ուրիշ անաստուածներուն կապիկներն էին). և ասոր պարզ հետևութիւն ի՞նչ կուգայ. ուրեմն կապիկն ալ տեսակ մը մարդ է ըսելու է. բայց ասիկայ ըսող չեղաւ. այսքան ծուռ արամբանութիւններ ունէին:

Ըսածներուս նայելով՝ առաջարկած խնդիրնիս հիմակուց լուծված կըրնանք սեպել. քանզի մենք այս ճառիս մէջը այն պիտի հասկըցընէինք որ՝ կրթութիւնը մարդոյս բնական է. և անկրթութիւնը

ետքէն մտած մէկ այսպէսնութիւն մըն է • առաջին մարդիկ թէ կրօնքի թէ գիտութեան և թէ բարոյ կողմանէ աղէկ կրթութիւն ունեկին • ետքը այլ և այլ պատճառներ մէջ մտան՝ կրթութիւնը պակսեցաւ • անկրթութիւնը և բարբարոսութիւնը շատցաւ • ուստի կրթութիւնը մարդկային բնութեան հարկաւոր ըլլալով բնական է՝ և սակզժամ ատենէն ունի • անկրթութիւնը մարդոյս հնարքն է՝ և ետքէն ստացած է • Ըսածներուս կատարեալ հաւանութի տալու համար հրաման կուղեմք ըսելու որ՝ մարդըս կրթութեամբ մարդ է • և այս հրամանըս տրրված է • Ասկէց օրինաւոր հեռութի կը հանեմք որ՝ կրթութիւն ըսելը Մարդութիւն ըսել է • և անկէց ետքը այս ըսածներըս կարդացած ատենըդ Արթութիւն բառին տեղը Մարդութիւն կարդա՛ • մեր դրութեանը ճիշդ և անհակառակելի ըլլալը դիւրաւ կը հասկընաս :

Բայց երկրայութեան տեղ բոլորովին չի մնալու համար, և փիլիսոփայից երկրայութիւն և տարակոյս հանած տեղերը լուսաւորելու և երկրայութիւնները վերցընելու համար ուրիշ ապացոյցներն ալ գնեւով այս ճառըս երկու գլուխ կը բաժնեմք • առաջին գլուխին մէջ՝ կրթութիւնը հին ըլլալուն վրայ կը խօսիմք • և երկրորդ գլուխին մէջ՝ առաջին կրթութիւնը ետքէն ավրրվելուն պատճառներուն վրան կը խօսիմք :



# Գ Լ Ո Ի Խ Ե

Կրթութիւնը հին ըլլալուն վրայ :

Մարդկային բնութեան կատարելութիւնը կրթութեամբ կը ըլլայ . և անկրթութիւնը անկատարութիւն է . ուստի առաջին քննելիքն իս այս պիտի ըլլայ որ՝ մարդըս ստեղծված ժամանակը կատարեալ՝ ստեղծվեցաւ թէ՛ անկատար :

Ընկերութիւնը՝ որ կրթութեան ամենահարկաւոր մէկ պայմանն է , իրարու հետ կապակցութիւնը ունենալով , և իրարու միտքը հասկընալով և կարօտութիւնը լեցընելով կը ըլլայ , և ասոր ալ խօսիլ հարկաւոր է . ուստի երկրորդ քննելիքն իս այս պիտի ըլլայ որ՝ խօսիլը մարդըս իմ քնիքն հնարեց թէ՛ ուրիշէն սորվեցաւ :

Ընկերութիւնը առանց կարգի չըլլար . ամէն մարդ ինք իր գլխուն անկախ և ազատ ըլլալը՝ ընկերութիւնը կը քակէ . հարկ է որ՝ ամենուն վրան ընդհանուր օրէնք մը ըլլայ , և այն օրէնքները գործադ-

րելու մեծ մը ըլլայ • ըսելէ որ՝ օրինաւոր կառա-  
վարութիւն ունենայ • ուստի երբորդ քննելիքնիս  
այս պիտի ըլլայ որ՝ օրէնքն ու կառավարութիւնը  
մարդըս հնարեց թէ ուրիշէ առաւ :

Ընկերութեան անդամները իրարմէ հեռու ըլլան  
նէ՛ իրարու հետ հաղորդութիւննին կըտրելով՝ մէկ  
ընկերութեան անդամ ըլլալէն կը դադրին • հաղոր-  
դութիւննին շարունակելու միջոց կուզէ • որ է գիրը :  
Այլև՝ ընկերութեան իրարմէ անքակ մնալուն հա-  
մար գըրված օրէնքները հարկ է որ գըրվին • որ  
ետքէն եկող մարդիկն ալ անոր ծանօթ ըլլան , և  
ամէննալ անոր համեմատ վարվին : Երկրորդն  
եղած երևելի անցքերուն պատմութիւններն ալ  
գըրվիլը հարկաւոր բան է • մէկ մարդ մը պիտանի  
արուեստ մը գտաւնէ՛ հեռուի և ետքէն եկող մար-  
դոցը սորվեցընելու համար գիր պէտք կըլլայ •  
ուստի գիրն ալ շատ հարկաւոր բան է : Անոր հա-  
մար չորրորդ քննելիքնիս ալ այս է • գիր գրելը  
էրբ հնարվեցաւ :

Արթութիւնը մօտ եղողներուն ալ բերնով աւան-  
դել հարկ ըլլալով՝ նախնիք ասոր մէկ ուրիշ դիւ-  
րութիւն մը նալ երկայնակեցութիւն ունէին • ուստի  
երկրորդ քննելիքներնուս տակը նահապետաց եր-  
կայնակեցութիւնն ալ հաստատելով՝ բոլոր այս գը-  
րուիրս չորս Յօդուած , և երկրորդ յօդուածը՝  
երկու Հատուած կը բաժնըվի :



## ՅՕԴ ՈՒՆԾ . 1

Մարդըս կատարեալ ստեղծվեցաւ :

Մարդըս հարկաւ ուրիշէ մը ստեղծուած պիտի ըլլայ ըսելը՝ ամենեւին երկբայութի չի վերցըներ • ստեղծական զօրութիւնն ալ Աստուծոյ յատուկ ըլլալով մէկ ստեղծեալ էակ մը՝ ճանճի մը թեւ պիտի չի կրնար ստեղծել • ուստի մարդու պէս գերազանց էակ մը՝ միայն Աստուծոյ ստեղծուածը կրնայ ըլլալ : Եւ մենք ամենքըս ծընած ատեննիս տղայ ըլլալով կամաց կամաց տարիքնիս կառնենք • տղայութենէն երիտասարդ՝ և ետքը ծեր կըլլանք • մէկը մեզի հարցունէ սր՝ արդեօք առաջին մարդը տղայ ըստեղծվեցաւ և ետքը մեծցաւ, եթէ չափահաս մարդ ստեղծվեցաւ, ասոր ի՞նչ պատասխան տալու է :

Բուն խնդրոյն էութենէն ասոր պատասխան չեւ լեր • բնաւ մարդ չի կեցած իբէն ստեղծող Աստուածը՝ առաջին մարդը տղայական վիճակի մէջ ալ կրնար ստեղծել, և սնուցանելով և խնամելով մեծցընել և չափահաս ընել : Արնարաւ չափահաս վիճակի մէջ ստեղծել : Ասոնց մէկը մէկալէն աւելի պակաս դժուարութիւն կամ դիւրութիւն չունի • երկուքն ալ Ամենակարողին առաջը միապէս դիւրին

են . և մեր տկարութեանը չափելով միապէս դժ-  
ուարին և անհնար են : Ուստի ասանկ բաներուն  
վրան թէ որ պատմութիւնը բան ըսած չէ՛նէ՛ մենք  
մեր խելքովը պատասխան չենք կրնար գրանել .  
երկու կողմն ալ միապէս հնարաւոր ըլլալուն հա-  
մար՝ կամ մէկն է կամ մէկալն է պիտի ըսեմք , որ  
ըսելէ՛ չեմք գիտեր :

Բայց երբ որ պատմութիւնը ձեռվընիս անցնի  
և սորվինք որ մարդըս չափահասակ ստեղծվեցաւ ,  
այս պատմութեւս վրայ երկբայելու տեղ չենք կրը-  
նար ունենալ , մինչև որ ասոր հակառակը ըսողմը  
չի գրանեմք : Եւ այս ալ գրանելուս ետքը՝ սրով-  
հեռու երկուքին ըսածն ալ հաւանական են , քննել  
պէտք է թէ այս երկու պատմիչին ո՞րը առաջ է ,  
ըսել է որ մարդոյս ստեղծման ժամանակին ո՞րը  
մօտ է . և պատմութիւնը քիչ բերնէ բերան անց-  
նելով և ավրելու կամ ծռելու ժամանակ քիչ ու-  
նենալով որո՞ւ հասեր է : Մովսէսի հետ բաղդա-  
տելու ասանկ պատմութիւն մինչև հիմա չկայ . և  
ասկէց ետքն ալ չի կրնար ըլլալ . քանզի Մովսէ-  
սէն առաջ գրրված պատմութեան գիրք կար ալ՛նէ՛  
մեր ձեռքը հասած չէ :

Մովսէս իր պատմութիւնը Սինայի անապատը  
գրեց Խորայէլացւոց ազգին համար՝ Եգիպտոսէ  
ելլելէն ետքը . և քահանայից և զևտացւոց պահպա-  
նութեանը յանձնեց , գիրքը Հրէից ազգէն դուրս  
չելաւ . մինչև որ Պաղոմոս Եղբայրասէր ըսված  
Եգիպտոսի Թագաւորը՝ շատ գրասէր մարդ ըլլա-

րով և Աղէքսանդրիայի գրատանը մէջը ամէն ազգի գիրքերէն ունենալ ուզելով՝ Քրիստոսէ 273 տարի առաջ Աստուածաշունչը՝ Յունարէն լեզու թարգմանել արժաւ, որ եօթանասնից թարգմանութիւն ըսվեցաւ: Ուրիշ ազգաց մէջ Աստուածաշունչ գիրքը տարածվիլը ասկէց առաջ չէ՝ ասկէց ալ շատ ետքը և քրիստոնէութեան ժամանակները եղած է: Քանզի Հռոմայեցիները որ Եգիպտոս Հռոմէական տերութեան դաւառ ըրին Օգոստոս կայսեր առաջին տարիները՝ Վղէսոսաթրէ թագուհին մեռնելէն ետքը, Քրիստոսէ 30 տարի առաջ, Աղէքսանդրիայի գրատանը ամենեկին հոգ չի տարին: Հրէից ազգին պատմութեանը ամենեկին անտեղեակ էին, ինչպէս որ Տակիտոսի և Սուեդոնի մեծ մեծ սխալները յայտնի կը ցըցընեն: մինչև որ Վեսպասիանոս կայսեր ատենը՝ Քրի 72 թուին՝ Յովսեպոս անուն Հրէայ իմաստուն մարդ մը իր ազգը Հռոմայեցիներուն ճանչցընելու համար՝ Աճաշունչէն և արտաքին պատմութիւններէն ժողովելով պատմութի մը շինելու հարկադրեցաւ. և այս գիրքս մինչև հիմա կը կենայ, և իմասանոց առջին շատ յարգի է: Ուրիշ ազգերը քրիստոնէայ ըլլալէն առաջ Մովսէսը կը ճանչնային կամ գրած գիրքերուն վրայ քիչ շատ տեղեկութիւն ունէին տէյի ամենեկին նշան մը չունիմք: Այս ազգերուն քովը Մովսէսի պատմածին համեմատ պատմութիւններ և յիշատակարաններ գըտնենք նէ՝ ի՞նչ կըրնանք ըսել: յայտնի նշան չէ՞ մի՞ որ հին աւանդութի-

ներէն Մովսէս ի՞նչ տրվեր է նէ՝ հաւատարմութիւն  
անիկոց գրեր է (1) : Հիմա տեսնենք հին աստուծոյ  
ի վեր կապալաւ աղագայ մէջ մնացած աւանդութիւն-  
ները , որ Մովսէսի ի՞նչպէս համաձայն կուգան :

Արակապաշտ Պարսից Վէնտիտադ Սատէ անուն  
գրքին մէջ՝ որ մօտ տարիներըս Քաանազի լեզու  
Թարգմանվեցաւ և Փարսիզ տըպվեցաւ , գրած է որ՝  
Որմըդդ առաջին մարդիկը ստեղծեց • և մեկուն ա-  
նունը Մէշիա և մեկալինը Մէշիանէ գրաւ • ( Մէ-  
շիա՝ առաջին երիկ մարդ , և Մէշիանէ՝ առաջին  
երիկ մարդուն կինը ըսեւէ ) : Ահրէմէն ասոնք  
տեսնելով՝ որովհետև ամենամաքուր ստեղծուած  
էին , նախանձեցաւ • և օձի կերպարանք մըտնելով  
քովերնին մօտեցաւ • պառուներ տըվաւ • ձեր և բո-

Ճ • : (1) Մովսէսին աստուծոյ հին ժամանակէ մնա-  
ցած գիրք ըլլալուն՝ և Մովսէս ալ անոնցմէ վը-  
կայութիւն ասնելուն յայտնի ապացոյց ունիմք  
նոյն իսկ Մովսէսի գրած խօսքերէն • և Վասն  
« այնորիկ ասի ՚ի գրի • Պատերազմ տեսան՝  
« զովդ հրձիգ արար , և զձորն Անտիլայ :  
( Թիւք , ին • 14 ) : Եբրայական բնագրին մէջ  
Պատերազմ տեսան բառերը՝ գիրքին անունը  
եղածի պէս են : Աղբիւր նամակաց անունով քա-  
ղաք ալ կը յիշվի ( յեսուց • ին • 29 ) • որ Եբրայ-  
ականը՝ Այնի ճէնիմ կըսէ • և անունէն կերևի  
որ՝ այն տեղը գրասուն եղած պիտի ըլլայ :  
Ասոր վրայ 7 յօդուածին մէջն ալ պիտի խօսիմք :

լըր աշխարհի արարիչը ես եմ ըսաւ . հաւատացին ,  
և այն ատենէն ետքը Ահրէմէն անոնց տէր եղաւ .  
և բնութիւննին ավրրվեցաւ (1) :

Մօսիս անուն Ինկիլիզ ճանապարհորդը Հին-  
տիսաանի պատմութե՛ առաջին հատորոյն 11 գը-  
լուխը , և Հինտիսաանի հնութեանց հինգերորդ  
հատորին մէջ կը պատմէ որ՝ Ադամայ պատմութիւնը  
և Էյնալը՝ Մովսէսին պատմածներուն յար և նման՝  
Հնդկաց յիշատակարաններուն և աւանդութիւն-  
ներուն մէջ կը գըրանըվի : Եւ նոյն իսկ Վօլթէո՝  
Հնդկաց քուրմերուն կամ Պրահմաներուն համար՝  
մարդըս ետքէն ավրրված և բնական աղէկութիւն-  
նին գէշի փոխված կը ճանչնան ըսելէն ետքը՝ հին  
ժողովուրդները և աղգերը ամէնն ալ ասանկ գիտեն  
կըսէ Յաւելուած յընդհանուր պատմութիւնն ըս-  
ված գիրքին մէջ : Ինչ որ ըսինք և պիտի ըսենք  
նէ՛ Վօլթէոսայ այս խօսքին հաստատութիւն է :

Չինաց աղգին երևելի փիլիսոփայներէն մէկը՝  
Չուանձէ անուն , նոյն աղգին Քինկ ըսված և սըր-  
բազան համարված գիրքերուն վարդապետութե՛ր  
համեմատ ինչ որ կը խօսի նէ՛ Մովսէսի ըսածին  
ալ շատ համեմատ է . և Քինկ ըսված գիրքերը

Ծ. : (1) Որմըզդ և Ահրէմէն սվ ըլլալնին ընդար-  
ձակ կը գըրեն Եղիշէ՛ իր պատմութեանը մէջ .  
(Թղթ . 41 = 43 . ասյ . վէնէա . 1828) . և Եզ-  
նիկ՝ Եղծ աղանդոցին մէջ . (Թղթ . 113 = 198 .  
ասյ . վէնէա . 1826) :

Քրիստոսէ չորս հարիւր տարիէն ելեւ առաջ դըր-  
 ված են: « Առաջին երկնից ժամանակը (1) մար-  
 « դըս ներսէն գերագոյն խնայականութեան հետ  
 « միացեալ էր • և դրսէն արդարութե՛ւ ամէն գործ-  
 « քերը կը կատարէր: Եւ սիրտը ճշմարտութիւնը  
 « վայելելով կը զուարճանար • և ամենեկին ստութե՛ւ  
 « խառնըված չէր: Այն ատենը տարւոյն չորս ե-  
 « ղանակներն ալ անշիտթ կարգաւ իրարու ետեւ  
 « կը յաջորդէին (2): Բնաւ մէկ բան մը մարդոցս  
 « չէր փնասեր • և մարդ բանի մը փնաս չէր դըպր-  
 « աներ: Բնութեան մէջ մէկ աղջոր համեմատութե՛ւ  
 « մը տիրած էր: Բայց մարդս Աստուծո՛ւ սպըս-  
 « տամբելով՝ երկինքին սիւները կտորեցան (3) •  
 « երկրիս մինչև հիմունքը խախտեցան • բոլոր ախ-  
 « և եղերս տակն ու վրայ եղաւ • գէշութիւնն ու յան-

---

Ծ. : (1) Առաջին երկինք ըսելով՝ ջրհեղեղէն ա-  
 ռաջ եղած ժամանակը իմանալը՝ խօսքին կար-  
 դէն յայտնի է:

(2) Աստուած ջրհեղեղէն ետքը Նոյի ըսա-  
 որ՝ « Ո՛չ ևս յաւելից հարկանեւ զո՞ւմ մարմին  
 « կենդանի որպէս արարի: Այսուհետև զո՞ւմ  
 « աւուրս երկրի՛ սերմն և հունձք, ցնւրա և  
 « ասթ, ամառն և գարուն, զօիւ և զգիշեր մի՛  
 « դադարեցեն (ծնն . ը . 22): Յայտնի է որ՝  
 « գոնէ ջրհեղեղի ատենը եղանակներուն յաջոր-  
 « դութեան մէջ շիտթութիւն մտած էր:

(3) « Սահմէք երկնից բացան (ծնն . է . 11):

Այսինքը աշխարհքի վրայ լեցվեցան և աշխարհ  
 և կոխեցին :

Ամերիկայի հիւսիսային մասը՝ Բենսիլվանիա  
 դաւառին արեւմտեան կողմը Պրուէզվէլ տեղին մօ-  
 տերը սաստիկ մերկի մը ելլելով՝ ահագին կաղնի  
 (մէշէ) ծառ մը փրւյուց : Արմատը տեղէն քակվե-  
 լով՝ արմատին տակէն քարայտակ (տէօշէմէ) մը  
 ելաւ , որ 16 քառակուսի ոտնաչափ տեղ բըռնած  
 էր , (որպէս թէ՛ 4 ոտնաչափ երկայնութիւն և 4  
 ոտնաչափ լայնութիւն) . և այս քարայտակիս վրան  
 շատ մը ձևեր և պատկերներ քանդակած էին կըսէ  
 ականատես պատմիչ մը : Մէկ տեղն ալ զատ պատ-  
 կեր մը ձևացուցած էր . երկու մարդու կերպարանք .  
 մէկը երկի մարդ և մէկը կընիկ մարդ . երկուքին մջ  
 տեղն ալ ծառ մը տնկած : Արնկանը ձեռքը քանի  
 մը պտուղներ կային . և քարին վրան պարսպ մնա-  
 ցած տեղերն ալ եղնիկ և արջ և թռչուններ փոր-  
 ված էին : Տընկաբանները ծառը քննեցին . և հաս-  
 կըցան որ վեց հարիւր տարվան ծառ կայ . և ասկէց  
 յայտնի է որ՝ այս պատկերներու քարին վրան  
 քանդակվելը՝ Քոլումբոսին Ամերիկա գըտնելէն  
 շատ առաջ եղած է . ըսելէ՛ 300 տարի մը չափ  
 առաջ : Ասոնց համաձայն վկայութիւնը՝ որ տահա  
 շատ կըրնայինք գըտնել՝ Մովսէսի պատմածին  
 ստուգութիւնը ապացոյց են . և սձային յայտնութիւնը  
 չի հաւատացողին ալ հարկ է որ՝ այսքան վկայից  
 համաձայնութիւնը տեսնելէն ետքը՝ Մովսէսի պատ-

մութեանը հաւատայ : (1)

Մովսէսի պատմութիւնը կարդալով յայտնի կը տեսնենք որ՝ Ադամ ստեղծված ատենը տղու պէս չէր՝ որ տեղեկութիւնները կամաց կամաց ստանայ, և մարմնոյ և մտքի կատարելութիւնը բացվելու և զարգանալու համար ժամանակի կարօտ ըլլայ • այլ ստեղծված ատենը՝ մարդոյս պէտք եղած կատա-

Ճ : (1) Մովսէսի պատմութեանը հաւատալ՝ և Աստուածային յայտնութեանը չհաւատալ՝ անհր- նար բան է • քանզի նոյն իսկ Մովսիսական պատ- մութի գլխաւոր մասն է : Մովսէսի պատմածները այնքան վկայներով հաստատվելէն ետքը չհաւա- տալ՝ այն ալ անհնար է : Ասանկով ճշմարտութի- ները իրարու հետ կապված ըլլալով՝ ամբողջ մի- ութիւն կը բաղկացնեն • և Աստուածային յայտ- նութեանը չի հաւատացող մարդը աչքովը տե- սածին և ականջովը լսածին ալ հաւատալու իրա- ռուէք չունի • քանզի ուրիշներուն միաձայն վը- կայութիւնը չընդունելէն ետքը ի՞նչպէս կըրնայ հաստատել որ՝ ամէնուն աչքը և ականջը և միտ- քը և դատումը կըրնան սխալիլ, միայն ինքը ան- սքսալ է : Ուստի անաստուած եղողը թէ որ փիլիսոփայ է՝ նէ՛ Երկուական կամ Պիւսոնեան ըլլալու է, որ հիշ մէկ բանին իրաւը գիտնալ ան- հնար է կըսէր • և յիրաւի Տիտոս և Պառթէ և Վօլթէո և Հիւմ անհաւատները՝ Պիւսոն- եան էին :



բերութիւնները ամեննալ ունէր: Եւ ասիկայ ալ Մովսէսի պատմութիւն յայանի կը սորվիմք. քանզի անբաններուն իշխելու հրամանին հետ հարկաւորապէս կարողութիւն տրված է. « Աճեցէք և բազմացարձք և լցէք զերկիր և տիրեցէք դժա, և իշխեցէք ձկանց ծովու և թռչնոց երկնից և ամ անասնոց երկրի և ամ սողնոց որ սողին ՚ի վերայ և երկրի (ծնն. ան. 28): Եւ այս իշխելու իրեն օգտին բանեցընէլ ըլլալուն համար՝ թէ անասուններն և թէ երկրէս ինչ օգուտ կըրնայ հանելնէ՝ անոնք ամեննալ գիտցած պիտի ըլլայ: Այս (գիտցած պիտի ըլլայ) ըսելու՝ սլըզտիկ մէկ խօսք մըն է. բայց տակը որքան գիտութիւն կը պարունակի՝ գիտե՞ս: Գեանի տիրելը կըլլայ երկրագործութիւն, երկրագործութիւնը գործիքով. գործիքը պէտք եղած բանին յարմարի տէրի երկամէ ըլլալու է. երկամը երկրագործին պէտք եղած ձևովը շի բուսնիր. անիկայ ձևի բերելու ճամբան գիտնալու է: Արթութիւնը ետքէն հնարվեցաւ ըսող փիլիսոփայներէն՝ սա երկամը երկրագործութեան գործիք չինել հընարողին անունը սորվիլ կուզէի: Առասպաշտ Հելլենացիներուն խելքը հասած էր որ ասանկ գործիք մը՝ հասարակ մարդու հնարած չէր կըրնար ըլլալ. ասոր հնարողը Եփեսոսս անունով շատուած մըն էր ըսին. չեմ յուսար որ այս փիլիսոփայներս ալ Եփեսոսսի ասն դարբնութեան արուեստին սկիզբը: Աստուածաշունչը՝ Ադամայ որդի Այլէնէն վեցերորդ Թոբէլ անունով մէկուն համար դարբն

էր կըսէ . բայց դարբնութեան սկիզբն ալ անոր չենք  
 կըրնար տալ : « Սէլլա ծնաւ զԹորէլ , և էր ճար-  
 և տարապետ դարբին՝ սլինճոյ և երկաթոյ (ծնն .  
 և 7 . 22) : Այս խօսքըս միայն այնքան կը ցըցընէ  
 որ՝ վարպետ երկաթագործ էր . արուեստ հնարելը  
 ուրիշ զրուցվածքով կը հասկըցընէ . ինչպէս որ նոյն  
 տեղը Յովբէլի համար՝ « Նա է հոյր այնոցիկ որ  
 և բնակեալ են ՚ի վրանս խաշնարածաց ) կըսէ . և ա-  
 և նոր եղբօրը Յովբազայ համար՝ " Նա է հոյր՝ որ  
 եցոյց զերգս և զքնարս ) կըսէ : Միայն այս Հոյր  
 և ճարտարապետ բառերուն տարբերութիւնը կը  
 ցըցընէ որ՝ Հոյր ըսածը՝ Նոյն արուեստին կամ  
 գործոյն առաջինն է . ճարտարապետը՝ վարպետն  
 է . հնարողը կամ առաջինը ըսել չի հասկըցվիր :

Բոլոր աշխարհ պորտող ճանապարհորդները կը  
 վկայեն որ՝ Թեպէտ տեղ տեղի վրայ կերակրոց  
 տարբերութիւն կայ . մէկ երկիր անանկ բան կու-  
 տեն՝ որ ուրիշ երկիր այն բանին միայն անունը  
 գաննելիք կը բերէ . սակայն ամենևին կրակի գործա-  
 ծութիւն չգիտցող և կերակուրնին ամենն ալ հում  
 ուտող ազգ տեսնելով չէ : Թաթար ազգը հում  
 միս կուտէ . բայց ամեն ատեն կերածը այն չէ . կե-  
 րակուր եփելալ գիտեն . ասանկ հում միս ուտել  
 մեր սովորութեան մէջն ալ կայ , որ է ապուխաը  
 (պաստըրման) , բայց ասով մարդ չըսէր մեզի հա-  
 մար՝ Թէ եփած կերակուր չեմք ուտեր : Ասանկ  
 ընդհանուր և ամեն տեղ տարածված սովորութիւն մը  
 սկիզբը որ տեղէն է . հնարողը միլ է , և ի՞նչպէս եղեր

է որ՝ աշխարհքի ամէն կողմ՝ և մինչև Ամերիկայի  
անասուներուն մէջ գըրանըվող վայրենի մարդիկ կը-  
րակի գործածութիւնը գիտեն կոր։ Ովկիանոսի մէկ  
կողմը երկիր մը կը գըրանըվի՝ որ հոն երկիր կեցած  
ըլլան ալ առաջկուց գիտցող չի կայ։ Բնակիչները  
կրակի գործածութիւնը գիտեն։ Այն վայրենի և  
անկիրթ մարդիկը կրակ վառելը ո՞ր սորվեցան․  
իրե՞նք մի հնարեցին․ և ինչո՞ւ ուրիշ պիտանի բա-  
ներ չեն հնարեր․ իրենց անկիրթ և վայրենի մը-  
քովը ի՞նչպէս հասկըցան որ՝ հում իքէն չուովելու  
բանը եփելով կուտվի․ անասուներու մէջ բնակելով  
անասուններէն զատ կենդանի չէին տեսներ․ ո՞ր  
անասունն է որ իրեն պիտոյիցը համար կրակ վա-  
ռել գիտնայ։ Կապիկը ձեռվըները գիւրադարձ  
մատ ունի․ էփ աղէկ ալ խելացի կենդանի կը նմանի  
բայց կրակին գիմացը նստի՝ և կրակը մարելու ըլ-  
լայնէ՝ քովէն երկու փայտ առնել և կրակին մէջը  
ձգել խելք չըներ։ Անանկ է նէ այս ալ մարդոյս  
անասուններէն տարբերելու և գլխաւորապէս կըր-  
թութեան պիտանի մէկ բան մը նէ։

Ասանկ ուրիշ բաներ ալ կան, որ հնարումը հար-  
կաւորապէս մինչև Ադամայ ժամանակը հասցընե-  
լու է․ ցորենը հաց ընելու քանի արուեստ կայնէ՝  
ամենն ալ Ադամ պիտի գիտնար՝ որ հաց չինելու  
համար քրտինք թափեր, հոգներ, և անանկ ուտէր  
հացը․ (ծնն․ ք․ 19)․ և ծառին վրայէն քանի մը  
պտուղ՝ և գեանէն քանի մը խոտ փըրցունելը՝  
քրտինք թափելու չափ աշխատութիւն արվող բաներ

չեն: Ճարտարապետութիւնը • և մինչև քաղաք մը  
 շինելու ինչ բան պէտք կը լայնէ՝ անոնք ճարելը •  
 որ Ադամայ տղան Վային հօրմէն զատկէլէն ետքը  
 քաղաք կը շինէ • և իր Ենովք տղուն անունը կու-  
 տայ քաղաքին (ծնն. 7. 17): Արաքացի հեղինակ-  
 ները Քիմիականութե՛ր արուստն ալ Ադամայ կու-  
 տան • և յիրաւի այս արուեստս կամ գիտութի՛նս՝  
 գեանին վրայ և մէջը գրանըված նիւթերուն վրայ  
 իշխելով՝ անոնցմէ իրեն օգուտ քաղել գիտցող  
 մարդու հնարք պիտի ըլլայ:



## ՅՕԴՈՒԱԾ • 2

### ՀԱՏՈՒԱԾ • 1

#### 1. Եղուն հնարողը ո՞վ է:

Միւթական ըսված իմաստասերներէն Քօնախյ-  
 լեաք և Պօնէ՝ և ասոնց նայելով Սասէ ալ Չըն-  
 նութիւնք ընդհանուր քերականութեան գիրքին  
 մէջը՝ մարդըս խօսիլը ի՞նչպէս սորված կըրնայ ըլ-  
 լալ տէյի հասկըցընելու և բացատրելու համար ճամ-  
 բայ մը բռնեցին • որպէս թէ հարկը մարդըս խօսե-

լու ստիպեց՝ և լեզուն բացածի պէս եղաւ . ետքը  
ասանկ մէկ գիւտի մը օգուտը հասկընալով մարդիկ  
ետեէ ինկան և ծաղկեցուցին :

Այս դրուժեանս համար համարձակ կըսեմ որ՝  
խելացիի մտածութիւն չէ : Մարդ խօսիլը ի՞նչպէս  
սորվեցաւ . բնապէս երկու կերպ կարծիք կըրնայ  
ըլլալ ասոր պատասխան տալու . կամ ըսելու է որ  
ստեղծողը սորվեցուց , կամ թէ ինքը հնարեց :  
Բայց այս երկու կարծիքսալ իրարու հաւասար  
հաւանական չեն՝ առաջին յօդուածին մէջ բացա-  
տրած երկու կարծիքներնուս պէս . որ անոնց երկու-  
քը՝ միապէս Աստուծոյ առաջը դիւրին և մարդոյ  
առաջը անհնար ըլլալուն համար՝ թէ որ պատմա-  
կան ստուգութիւն չունենայինք նէ՝ մէկը մէկալէն  
ուելի հաւանական ցըցընելու փաստ մը չէինք ու-  
նենար : Այս աեղըս՝ մարդըս լեզուն Աստուծմէ  
սորվեցաւ ըսելը՝ շատ աղէկ և դիւրաւ խելքի  
պառկելու բան է . ինքը հնարեց ըսելուն տակէն  
դժուարութիւններ կելլէ որ՝ առանց Աստուծոյ  
ամենակարողութեանը ապաւինելու լուծելը անհը-  
նար է . և Աստուծոյ ամենակարողութիւնը խոստո-  
վանող մարդուն՝ Ադամ խօսիլը Աստուծմէ սորվե-  
ցաւ ըսելը շատ դիւրին է : Մենք առաջ այն քըն-  
նեմք որ՝ խօսիլը մարդս ինք իր գլխուն հնարեց  
ըսելը ի՞նչ դժուարութիւններ ունի . և ասկէց ետ-  
քը՝ Աստուծմէ սորվեցաւ ըսելու իրաւունք ունե-  
նալնիս՝ մարդկօրէն խօսելովալ՝ դիւրաւ կըրնանք  
հաստատել :

Խօսիլը մարդըս հնարեց ըսողները՝ հնարելու  
 հարկ եղաւ և անանկ հնարեց կըսեն . ուստի ամե-  
 նէն առաջ Միջարկութիւն ըսված բառերը հնար-  
 վեցան կըսեն . այսինքն՝ մէկ դին ցաւ մը իմանալով  
 ո՛ւր կանչելը . վախնալու բան մը տեսնելով՝ ո՛հ  
 պօռալը, և այլն : Ասկէց ետքը մէկ մէկ բանի անուն  
 եղած բառերը, ասոնց մեջէն ալ յայտնի է որ առաջ  
 զգալի բաները պիտի ըլլան . և ասոնցմէ ալ՝ մար-  
 դոյս պիտանի եղածները առաջ անուն կառնեն .  
 պիտանի չեղածները ետ կը մնան : Անկէց ետքը  
 բոյները, այսինքն՝ ընել կամ ըլլալ կամ կենալ նը-  
 շանակող բառերը : Ասոնցմէ ետքն ալ կուգան  
 նախդիրը՝ որ զգալի բաներուն անզգալի պարա-  
 գայները պիտի իմացընէ . մակբայը՝ որ գործ նշա-  
 նակող բառերուն պարագայները պիտի իմացընէ .  
 ամենէն ետքը խօսք խօսքի հետ կապելու համար  
 շողկապ ալ պէտք է . այն ալ այն ատենը հնարված է :  
 Ասոնք հասկընալէս ետքը կըսեմ որ՝ մէկ մը  
 բնաւ խօսիլ չգիտնալը կը մտածեմ . մէկ մըն ալ շատ  
 լեզուաց հիմակվան հասած կատարելութեանը կը  
 նայիմ . ինծի անանկ կուգայ որ՝ հիմակվան ամենէն  
 անկիրթ սեպված ազգի մը չափ աղքատ լեզու մը  
 ունենալու համար՝ աշխարհիս ստեղծումէն մինչև  
 հիմա անցած ժամանակը չէ՝ անոր հարիւրապատիկը  
 և հազարապատիկն ալ քիչ կուգայ . և մարդոյս իրեն  
 մընայնէ՝ միլեօնաւոր տարի մի և նոյն մարդը աշ-  
 խարհիս վրայ ապրելով՝ և իր փորձերը շարունա-  
 կելով՝ չէ՛ թէ լեզու և խօսիլ հնարելը , այլ և մէկ

բառ մը նալ ստեղծելը ձեռքէն գալու բաներուն  
կարգէն դուրս է :

Խօսիլը ըսածնիս՝ քանի մը գործողութիւններ մէկ  
տեղ բերելով և անոնք իրարու հետ միացընելով  
կըլայ : և այս գործողութիւններըս զատ զատ գոր-  
ծիք ունին : Օրինակի համար , Բ գրոյն ձայնը հա-  
նելու համար՝ հարկ է երկու պաղունքը մէկ տեղ  
բերել և բերնէն ելլելու օդոյն ուժովը իրարմէ զա-  
տել : Գ Գրոյն ձայնը հանելու՝ սլըզաիկ լեզուն վար  
ինջեցունելու , և լեզուին արմատին զարնէն իքէն  
կոկորդէն օդը կամ ձայնը դուրս հանելու է : Եւ  
բերնէդ օդը ելլելու ատենը՝ լեզուին ծայրը վերի  
և վարի առդաներուդ մէջ տեղը բերելով երկուքին  
մէկէն զարնեսնէ՝ Գ և Թ և Տ գրերուն ձայնը կել-  
լէ . և այլն : Չայնաւոր գիրերը՝ ձայն հանած ատե-  
նըդ միայն պըռզունքներուդ ձևը փոխելով կըլայ :

Այս գործողութիւններըս ի՞նչ բանի համար  
պիտի ընեմք : Մեր մըտքին մէջէն անցած խոր-  
հուրդը մեր գիմացինին խմացընելու համար : Բայց  
մէկ անգամ մը մտածէ՛ որ՝ մըտքին խորհուրդը մըր ,  
լեզուին և առդաներուն կամ սլըզաիկ լեզուին իրար  
զարնելով ձայն հանելը մըր . այս երկու բանիս մէջ  
կապակցութիւն ամենեւին չկայ : Գիմացինէս կըտոր  
մը հաց ուզելու մտքով իմ գիտաւորութիւնս դէ-  
մինիս հասկըցընելու համար երկու ձամբայ կոյ :  
Մէկը այս է որ՝ առաջ ձեռքըս բերնիս կը տա-  
նիմ՝ որպէս թէ բերանըս հաց դրածի պէս . և ու-  
տել կը ձեռացընեմ , և անկեց ետքը ձեռքըս կը բա-



576-2007

նամ, և ողորմուկ ձայն մը հանելով (1) դէպ ՚ի անոր կերկընցընեմ: Թէ որ ուզած բանս ալ այն տեղիանք կայ նէ՝ մատով անիկոյ ցըցընելով՝ միաքըս կատարեալ կը հասկըցընեմ: Երկրորդ կերպը այս է որ՝ բերնիս մեջի գործարանքները՝ որ դէմինըս չի տեսներ, մասնաւոր կերպով մը կը շարժեմ, որ տեսնէ ալ նէ՝ այն շարժմանքները հացի հեա և ուղելու հեա բնաւ նմանութիւն մը չունենալուն համար՝ դիմացինըս ամենեւին բան մը չի հասկընար: Հիմա խեղքըդ ի՞նչ կը կըտրէ. մէկ մարդ մը հացի փափագ ունենալը՝ դիմացինին հասկըցընելու համար ասոնց սրը գործ կածէ: Ո՞ր կերպը իր դիտաւորութիւնը դիւրաւ կը հասկըցընէ տէյի կը կարծէ: Մենք որ լեզու գիտեմք՝ այս երկու կերպիս մէկը խօսիլ գիտնալնուս համար կը հնարեմք կոր. լեզուն գործածել և խօսիլ չի գիտցող մարդուն՝ նըշանացի (իշարեթով) իր դիտաւորութիւնը հասկը-

Ծ. (1) Այս ձայնըս անոր համար կը հանվի որ՝ ըրածիս ուշադրութիւն ընէ դէմինըս՝ և ինձի նայի. քանզի վայրի մարդը բնաւ լեզու չի գիտցած և ձայնին զօրութիւնը չը հասկըցած ասեմը փորձած է որ՝ մէկ տեղաց մը ձայն մը լըսէ նէ՝ խեղքը գլուխը ժողվելով դէպ ՚ի այն կողմը կը նայի, որ ձայնը ինչ<sup>օ</sup> համար եղած ըլլալը հասկընայ: Չայնին ողորմուկ ըլլալն ալ բնական է. դիտմամբ չէ. և անօթի մարդուն ձայնը՝ տկար կեւէ:



ցընեւէն զատ եղանակ միտքը չի գար : Մենք մեր վրայալ այս ըսածըս կըրնանք ստուգել : Հաց տուր բառերը չի հասկըցող մարդու մը քով գըտնըվենք նե՝ անիկայ մեր լեզուն չի հասկընար կոր տէյի մէկ դիւրաւ հասկըցվելու նոր լեզու մը հնարել մըաքերնիս ալ չի գար • առաջին կերպովը մըտքերնիս դիւրաւ կը հասկըցընեմք • և այս եղանակըս հնարելը դիւրին է : Այս կեցած իքէն՝ ի՞նչ հարկ կըրնայ ըլլալ որ մեզ լեզուով խօսելու ստիպէ : Հարկ մը եղած ատենը մարդոյս միտքը աւելի դիւրաւ անոր չի՞ հակիր մի՞ որ ձեռքով և մատվըններովը իր միտքը հասկըցընելու նշաններ հնարէ • իրենն ամենահարկաւոր բանը առանց լեզուի հասկըցուց • անկեց ետքը լեզուն բանեցընելու և անոր կատարելուէր աշխատելու կողմը ամենեին միտքը չի հակիր :

Ի ծնէ խուլ մարդիկ չեն կըրնար խօսիլ նե՝ վարպետ բժիշկները գրած են որ՝ ասոնց խօսելու գործարանքը պակաս չէ • լըսած չըլտնուն համար չեն կըրնար խօսիլ : Այսպէս կը խօսի նա և Պիւֆօն՝ որ Նիւթական փիլիսոփայներուն կարգէն է : Ասոնց ամէն գործարանքնին լըման ըլլալով կըրնան խօսիլ • ականջնին չի լսեր նե՝ գոնէ աչքերնին կը տեսնէ որ երկու հոգի իրարու դէմ կը նստին • մէկը մէկալին դարձեր պըռզուէքները կը շարժէ • և մէկալը անշարժ կեցեր մըտիկ կընէ : Թէ որ խօսելու հնարքը մարդոյս իրեն բնական զօրութեամբը գըտնելու բաներէն էր նե՝ խուլը ասո՞ք ատենեւէն ալ առաջ մէկ խօսելու եղանակ մը հնարելու էր •

տեսնեւ ըն ետքը աւելի դիւրին կըլար. միայն ձայնաւորները, և քանի մը անանկ բաղաձայններ կը ձարէ՝ որ ինչպէս շինվելը աչքով կը տեսնէ, քանզի բերնին դուրսի գործարանքներովը կը շինվին. ինչպէս են Ի, Փ, Պ, Մ, Ղ, Ք. և միտքը գիմացնին հասկըցընելու համար ձեռքով և շարժմանքով խօսիլ մը կը հնարէ, որ ամէն բան կատարեալ կըրնայ հասկըցընել. Եւ ասով կիմանամք որ՝ մարդըս մինչև որ ուրիշին խօսիլը չի լսուէ նէ՝ ինքը չի կըրնար խօսիլ. ասոր համար անհնար է որ խօսիլը մարդըս հնարած ըլլայ. Պղատն ալ Քրիդոլասոսի արտախօսութեան մէջ ըսած է որ՝ « Թէ որ Աստուած և մարդու հետ խօսած չըլլայ նէ՝ մարդ մարդու և հետ չի կըրնար խօսիլ » . քանզի որկէց սորված պիտի ըլլայ :

Ստաւէ՝ ընկերութիւնը և լեզուն մարդըս ինչպէս կըրնայ հնարել տէյի հասկըցընելու համար շինած գիրքին մէջ՝ որ ընդհանուր և փիլիսոփայական քերականութեան պէս բան մըն է, վեցերորդ գլուխին մէջը մարդոյս լեզու հնարելը շատ կը դիւրացընէ : Չոյն հանող բաներուն ձայնին նմանութիւնը մէկ մէկ բառ շինելով այն բանը հասկըցուցնի կըսէ. ինչպէս Թօնիթոնու, որոտումն, Թօռնէնս, ուղիս. որ մէկը ամպ գոռացած ատենին քիչ մը նմանութիւն կը բերէ. և մէկալը՝ Ըուրը տասուկութեամբ վազելու ձայնին կը նմանի : Բայց այն չէ մտածեր որ՝ միայն Յոյն և Ասիան և Գաղղիական լեզուին համեմատութիւններովը բան չի լը-

մըննար • ըսել է՝ միայն մեկ լեզու ի մը մէջ (1) մեկ բան մը ինչ անուն ունի տէյի գիտնալը՝ այն բանին բնասպէս ստեղծված կամ հնարված անունն է տէյի վճռելու իրաւունք չունեցվիր • այս կըլլայ միայն՝ երբ որ ստոյգ գիտնանք որ այն լեզուն առաջին լեզուն է • և Յունաց կամ Լատինացւոց կամ Գաղղիացւոց լեզունն համար՝ առաջին լեզու է ըսող եղած չէ • Ուստի՝ Որոտումն բառը՝ (որ է ամպ գոռալը) օրինակ առնելով նայինք որ արմատական լեզուներուն մէջ՝ որոտման ձայնին նման ձայն ունի մի ասիկայ նշանակող բառը • Հայոց և Արաբացւոց և Պարսկց լեզուները երեքն ալ մայր և արմատական լեզու են • ամպ գոռալուն հայերէնն է որոտումն • և թէ որ Ո և Բ գրերուն ձայնէն՝ ամպ գոռալու պէս ձայն մը ականջդ հասնինէ՝ որոճալ (ոյսարներուն կէվիշ բերելը) և որումն (տէլիճէ) և որոնել (փընտրուել) և ուրիշ ասոնց պէս բառերը հասկընալու շատ նեղութիւն կը քաշես • և չես

Ծ • (1) Յունաց լեզուն մայր լեզու է • Լատիներէնը՝ Յունաց և Ետրուսկեանց լեզուներուն բաղադրութիւնն է • Ետրուսկեան ըսվածներն ալ՝ Թուրքանայի հին բնակիչներն են՝ որ Յունաստանէն դացած են հոն • և սկիզբնին Գորիկեան կամ Լակեդեմոնացի է • Գաղղիացւոց լեզուն ալ շատը Լատիներէնէն ելած է • հին Աեղտաց լեզուէն քիչ բառ ունին • Ասոր համար այս երեք լեզուն մեկ լեզու ըսել է • որ է՝ Յունարէն :

կըրնար ալ խմանար թէ որոնեւն ու որոտալը իրա-  
բու ի՞նչ կողմէն այնքան նմանութիւն ունին , որ  
ձայներնին նայելով պիտի ունենան . և միայն S  
գիրը՝ ն փոխակերով՝ որոտման ձայնը խափանել՝ և  
սուսիկ բուսիկ բան փընաղուել հասկըցընեւ  
ուստի՞ կուգայ : Արաբերէն Հէզէճ բառը՝ որ այս  
ալ որոտումն ըսել է . ամենևին որոտման նման ձայն  
չունի : Եւ Պարսկաց թէնտէր բառէն թէ որ որո-  
տում հասկընալ պէտք է նէ՝ տաճկերէն թանաղը ,  
և հայերէն թաար (թէադրօ) բառերն ալ՝ որոտու-  
մըն պիտի նշանակեն : (1)

Այս ընդդիմութիւններըս Սառէին միտքը ե-  
կած չըլլալով՝ դիտաւ որութեամբ կանցնի . և վերջը  
վճարաբար ալ կըսէ որ՝ առաջին անուաները ասան-  
կով հնարված կըլլան : Մեր ըսածէն ալ մենք կը  
հեանցընեմք որ՝ ասանկով հիշ մէկ անուան մը հը-  
նարված չըլլար . հնարված անուան ալ բան չի կըր-  
նար հասկըցընել . քանզի ամպերէն ելածին նման  
ձայն հանող գիր հիշ մէկ լեզուի մը մը չկայ : Եւ  
ամպերունը ի՞նչ կըսեմ . երկու կարծր բան իրարու  
զարնելով ելած ձայնն ալ՝ մարդըս իր ձայնով չի

Ծ. : (1) Որոտումն՝ Լատիներէն թօնիթաու կըս-  
վի . Պարսկերէն ալ կայ՝ թէնտէրու : Բադէր և  
Մադէր՝ Լատիներէնէն ալ Պարսկերէն ունի  
Փէտէր և Մատէր : Այս ալ՝ Լատիներէնին  
ծաղմանը վրայ բանասիրաց խորհրդածութեան  
նիւթ մըն է :

կըրնալ բացատրելուն համար դիր չունի: Թե որ  
 ձայնէ առնելած նշանակութեանը համեմատ բան  
 հասկընալ պէտք ըլլար նէ՝ Թագ բառը՝ փայտը  
 փայտին զարնելով ելած ձայնը պիտի նշանակէր •  
 և այս բառին նշանակութիւնը՝ այդ ձայնին ցըցու-  
 ցածէն իրքան հեռու ըլլալը ինքնին յայտնի է:  
 Ասոնք միայն օրինակի համար զրուցեցինք: Կարդա-  
 ցողը ինքնին ուրիշ շատ օրինակներ ալ կըրնայ հա-  
 նել: Եւ այս դրութեանըս պաշտպան եղողներուն  
 ամենադիւրին և ամէն մարդու խելք շուտ մը հաս-  
 կընալու կարծած փորձերնին և ապացոյցնին ասանկ  
 դժուարութիւններ ունենայ նէ՝ իրենց դժուար է  
 տէյի խոստովանածնին ի՞նչ կըլլայ՝ հասկըցիր:

Բայց աւելի աղէկ հասկըցընելու համար Սա-  
 ւէին ըսածը դնեմ հօսւ և Չայն չունեցող բանե-  
 ւրուն անունը ի՞նչպէս հնարվիլը՝ աւելի դժուար  
 և բին կը դուշակվի: Ասոնց ծագումը միայն դիպ-  
 ւում ածով կըրնայ ըլլալ, և ամէն կարելի դիպում ած-  
 ւաները ո՞վ կըրնայ հասկընալ: Բայց մենք այս  
 և տեղըս յայտնելու ջանամք, թէ ի՞նչ դիպումներ  
 և և ի՞նչ պատահումներ կըրնան ըլլալ որ ասանկ  
 և բառեր հնարելուն կարելի ըլլալը խելքընիս հաս-  
 ւնի: Առաջ այս կըսեմ որ՝ տղայքը խօսիլ սոր-  
 ւ վելէն առաջ մէկ բան մը շատ փափագով ուզելու  
 և ըլլան նէ՝ ձեռքով և շարժմունքով իրենց կամքը  
 և յայտնելը բաւական չի սեպելով՝ մէկ ձայն մըն ալ  
 և կը հանեն • քանզի հոգին մէկ ծանր պէտքէ մը  
 և ըստիպվի նէ՝ իր ամէն կարողութիւնները մէկէն

և կը բանեցընէ : Ասանկ ձայն հանել՝ անասուննե-  
 ւ րըն ալ ունին (1) : Մանաւանդ թէ լեզու չու-  
 ւ նեցողները թէպէտ ձայն ունենալնին ալ չեն գի-  
 ւ տէր՝ ՚ի ծննդենէ խուլ ըլլալուն համար, սակայն  
 ւ չիյտեմ ի՞նչ նիւթական շարժմունքով մը՝ իրենց  
 ւ մտքին վրայ եղելիկէկ տըպաւորութիւն րրած բան  
 ւ մը ձեռքի շարժմունքով հասկըցընեն իբէն՝ կամ  
 ւ հասկըցընել ուղածնին դժուար հասկըցընեննէ՝  
 ւ տեսակ տեսակ ձայներ կը հանեն ո : Ասանկ ձայ-  
 ներ մենք ալ կը հանեմք ամեննին խօսելու դիտա-  
 ւ որութիւն չունեցած ատեննիս ալ : Սըրտերնիս սըխ-  
 մըղեւէն հառաչել մը կուգայ • երբժարկալն իբէն ձայն  
 մը կեւէ • և Սոաւէի ըսածները՝ մարդըս ինքնիրեն  
 ձայն հանել չի կըրնար սորվել ըսողին խելքը հաս-

Ծ : (1) Բայց մեր փընտըռածը՝ անասուններուն  
 ի՞նչպէս լեզու սորվելը չէ • անասունները վախ  
 մը կամ սխտոյք մը կամ զուարճութիւն մը ու-  
 նենաննէ՝ ձայնի գործարանքներուն շարժմուն-  
 քը փոփոխութեան մը տակ կը մտնէ այն կիր-  
 քերուն ներգործելով • և մենք վախցած ատեն-  
 նիս ձայներնիս գողղըղալով կը խօսիմք նէ՝ ա-  
 նասուններուն ձայնը՝ այն գողղըղալուն պէս է :  
 Ուստի Սոաւէ՝ խօսելուն սկիզբը ցըցընեմ ըսեն  
 իբէն՝ ձայնը գողղըղալուն սկիզբը ցըցընելով իր  
 նպատակէն կիյնայ : Տղոց ձայն հանելը անասնոց  
 պէս չէ • խօսելու սկիզբ մը՝ և որպէս թէ վար-  
 ժութիւն մը նէ :

ցընելու համար աղէկ է • բայց ձայն կըրնայ հանել  
տէյի ընդունելէն ետքը խօսք չի կըրնար հնարել  
ըսողին դէմ առարկութի չի կըրնար ըլլալ • քանզի  
այս ձայները խօսելու սկզբնաւորութիւն ըլլային  
նէ՛ ձայն հանող անասունները ամենեւալ մինչև հի-  
մա խօսիլ սորվելու էին :

Տըպաօս անուն Գաղղիացի մը՝ լեզուներուն մե-  
քենական կազմութեանը վրայ շինած ճառին ՅՕ  
թուոյն մէջ՝ բաղաձայներուն այլ և այլ բաղադրու-  
թենէն՝ բառերու բնական նշանակութիւններ հա-  
նելու կաշխատի • և Սոաէ ասիկայ իր դրութիւնը  
հաստատելու օգնական կառնէ • բայց օգնական բըռ-  
նածին բերած պատճառները իրեն զրուցածներէն  
աւելի զօրաւոր չեն • Շատ լեզուներու մէջ կըսէ՛  
ՍԴ և ՍՏ դրերուն բաղադրութիւնը մէկ ամբութե՛  
մը և հաստատութեան մը նշան է • և օրինակ կըբե-  
րէ Լատինականէն՝ Սդարէ • կենալ • Յունականէն՝  
Սդադիր • որ է տեսակ մը դրամ • Հայերէն՝ Սատեր  
կամ Չորեքդրամեան ըսլածը • Ասկէց աւելի աղէկ  
կըլար Ի՛սդամէ բայը դընել՝ որ Վենալ ըսել է •  
Ուրիշ լեզուներէ ալ ուրիշ բառեր կըգըտնէ •  
Հայերէն գիտնար նէ՛ Ստանամ բայովը էփ աղէկ  
եփեփեփ ուժ մը ստացած կըլար • Ասոնց ասանկ  
ըլլալուն ինքը տարակոյս չունի • բայց պատճառը  
չի կըրնար գըտնել • իրեն հաւանական երեցած մէկ  
կարծիք մը կառաջարկէ • թէ ձայն հանելու վեց  
գործարանքներուն ամենէն ամուր և հաստատունը  
առջան ըլլալով՝ երբոր լեզուն Ս ձայնին ուժովը

առ զաներուն կը զարնէ և Պ կամ՝ Տ ձայնը կը հանէ նէ՝ ամուր բան մը նշանակել կուզէ։ Բայց Հայերէն գիտնար՝ և Տեղալ բային նշանակութիւնը տեղեակ ըլլար նէ՝ որ անձրև գալ ըսելէ, Տ գրոյն հաստատութեանը վրայ կասկած մը կուգար իրեն, և ուրիշ պատճառ փընտրուելու միտք կը հոգնեցընէր։ Առանց ասոր՝ իրեն ճանչցած լեզուներէն ալ կըրնանք հասկըցընել իրեն գրութեանը անհաստատութիւնը։ Լատիներէնին մէջ Սդարէ բառը՝ մէջը ՍԻ գիրերը գըտնըվելուն համար Աենալ ըսել է։ Սդիւօ բառին մէջն ալ նոյն գիրերը կան։ Բայց իրենց զօրութեանը վրայ հաստատուն չեն կեցած։ որ ցքահան գործիքով մէկ բանին հեղուկ և անօր բանը հանել (իմպիկէ քաշել) ըսել է։ Նոյնպէս Յունաց լեզուին մէջ Ի՛սդամէ, Աենալ ըսել է ՍԻ գրերուն համար։ Բայց Սդիւօ բառն ալ նոյն գիրերը ունի, և քալել երթալ ըսել է։ Ասանկ ոչինչ պատճառներով արամաբանող մարդը՝ ճշմարտութիւն գըտնէ ալ նէ՝ ուրիշները հաւատացընելը մէկ գի թող մնայ, ինքն ալ չի կըրնար հաւատալ։

Եւ որովհետեւ այս փիլիսոփայները ընկերութիւնն ալ մարդոյս իր հնարքն է կըսեն՝ իրաւունք ունիմ հարցընելու թէ խօսի՞լը առաջ հնարեցալ թէ ընկերութիւնը։ Այս առարկութիւնս Ռուսո ուրիշ դիտաւորութիւնով ըրած է։ Բայց այս գրութեանս պաշտպանները՝ խելք հասնելու պատասխան չեն գըտած։ Եւ յիրաւի՝ թէ որ խօսիլը առաջ հնարվեցաւ ըսեն նէ՝ ընկերութիւն չեղած



առենը որո՞ւ հետ խօսելու էր. անասունները չէին  
լեզու հասկընար. իրենք իրենց ալ ի՞նչու պիտի խօ-  
սէին. իրենց մըտքէն անցածը իրենք չէին մի հաս-  
կընար: Ընկերութիւնը առաջ հնարովեցաւ ըսեն  
նէ՛ այն իրարմէ հեռու ցըրուած մարդիկը մէկ տեղ  
ո՞վ ժողովեց. և ի՞նչ միջոցով ժողովեց. և անոնց ի՞նչ-  
պէս մտքը հասկըցուց որ այս ինչ և այն ինչ պայ-  
մաններով ամենը մէկ տեղ կենան և իրարու օգ-  
նեն, և դուրսէն եղած մեասներէն իրենք ղերենք  
և ուրիշները պաշտպանեն:

Երբ ըսենք որ՝ Աստուած մարդոց հետ խօսե-  
ցաւ, և մարդս խօսիլը Աստուծմէ սորվեցաւ, այս  
դժուարութիւններուն մէկն ալ չի մնար. միայն եր-  
կու խնդիր կը մնայ լուծելու, մէկը այն է՝ թէ կըր-  
նայ մի ըլլալ, և երկրորդ՝ թէ եղբօր է մի: Աստու-  
ծոց ամենակարող զօրութիւնը գիտցողը՝ առաջին  
հարցումը չններ. քանզի գիտէ որ՝ մարդըս յոչն-  
չէ ստեղծող Աստուածը՝ խօսք ալ կըրնայ ստեղծել  
յոչնչէ. և իր զօրութիւնը հողով երևան հանեց  
նէ՛ իր հոգևորած հողին իրեն կամքը յայանելու և  
պէտք եղած բաները սորվեցընելու համար կըրնայ  
օդը գործիք ընել: Երկրորդ խնդրոյն ալ պատաս-  
խանը Մովսէս կուտայ՝ մարդոցս ստեղծումը պատ-  
մած առենը. որ Աստուած քանի քանի անգամ  
Ադամայ հետ խօսեցաւ:

Այս հաստուածըս Տըմէսդոս փիլիսոփային գեղե-  
ցիկ խորհրդածութիւնքը քմենցընենք. «Այս կա-  
«տարեալ լեզուն՝ կըսէ, որ Պալլասի պէս ուղե-

և զին մէջէն կատարեալ կը ծնանի նէ՝ ո՞ր տեղէն  
 և կուգայ, որ սկզբնաւորութեան ատենը հնարած  
 և բառերուն նմանը հնարել ուզող մարդուն յու-  
 և սահառութի կուգայ: Մենք ալ պարզամտութի  
 և հիմակվան փիլիսոփայներուն պէս գըրենք և հար-  
 և ցընենք. "այս ինչ լեզուն հնարելու քանի՞ հարիւր  
 և տարի կուզէ" (1): Եւ յիրաւի՝ թէ որ հասա-  
 և բակօրէն կարծիք եղած կերպովը հնարված է նէ՝  
 և շատ հարիւրաւոր տարիներ կուզէ: Քոանսըզի  
 և լեզուն ետքէն կանոնի մտած է, և 842 թուին  
 և գըրված Քոանսըզերէնը որպէս թէ տղու լեզու  
 և էր. Բօանէյլ բանաստեղծին Ստախօս անունով  
 և շինված բանաստեղծութիւնը, և Բասգալ իմաս-  
 և տունին Գաւառական թուղթք ըսված գիրքը՝  
 և կատարեալ զրուցվածք ունին. միջոցը 800 տարի  
 և մը անցած կայ: Եւ համեմատական կանոնով հաշ-  
 և ուենք նէ՝ Յունաց Հելլենական լեզուն պէս լե-  
 և ղու մը հնարելու և կատարելագործելու համար  
 և երկու հազար տարին շատ չէ: Բայց Հոմերոսի  
 և ատենը բարբարոսութեան ժամանակ է. (և ասոր

Ծ. : (1) Այս փիլիսոփայներուն միտքը՝ այս հար-  
 ցու մը ընկելով՝ աշխարհի ստեղծումը շատ հին է  
 ըսել՝ և անով Մովսիսական պատմութիւնը սուտ  
 հանել էր. բայց իրենց կարծիքը հաստատելու  
 համար՝ ի՞նչ ապացոյց բըռնեցին նէ ձեռք ընին  
 մնաց. իրենց մտացածին հնութեամբը խոյ-  
 տառակեցան:

և լեզուն Յունական մտքուր լեզուի օրինակ է) •  
 և քիչ մըն ալ ասոր օրերէն դէպ ՚ի առաջ երթանք  
 և նէ՛ մենք մեզ Պեղասգեաններուն մէջ կը գըտ-  
 անենք • որ ընկերութիւննին ալ կատարեալ ձեոյ  
 և տակ չէր • Շիմա ասանկ զարմանալի լեզու մը հը-  
 անարեւու համար հարկ եղած սա երկու հազար  
 և տարին ուր տանինք դնենք • Թէ՛ լեզուի սկզբը  
 անաւորութեան և թէ ուրիշ շատ բաներու համար  
 ամէր ատենի փիլիսոփայները չի կըրցան • ճշմար-  
 ատութիւնը գըմանելնէ՛ անոր համար է որ՝ գըտ-  
 անելու վախցան • Լեզուները իրօք սկզբնաւորու-  
 ածիւն ունին • բայց բանը որ է խօսքը՝ անսկիզբն  
 և է • մարդու հետալ սկսած չէ • Հարկաւ մէկը մէ-  
 ակալէն առաջ ըլլալու է • խօսիլը՝ առանց խօսքի  
 և կամ բանի չի կըրնար ըլլալ • Ամէն մասնաւոր լե-  
 զու՝ կենդանիներուն պէս ծնանիլ ունի • բայց  
 և մարդս անխօսութեան վիճակ ամենեւին ունեցած  
 և չէ՛ որ անկէց ետքը խօսիլ սկսի • Ամէն ատեն  
 և խօսիլ ունեցած է • անոր համար Եբրայեցիները  
 և մարդոյս խօսուն կենդանի՝ Հայիմ տապէր կը-  
 ասեն • Նոր լեզու ձևանալ կըլայ • և կարգադրեալ  
 և ընկերութեան մէջ կը ծնանի • բայց հնարել և ըս-  
 տեղծանել՝ մէկ բառի մը նալ կարողութիւն չունի  
 և մարդ • Քովի գըմանըլած ազգերուն լեզուներէն  
 և կը ժողովէ • պէտք ըլլայնէ հեռուներէն ալ կա-  
 անէ • իրեն բնաւորութեանը յարմար և իրեն յա-  
 ատակ լեզու մը կը գործածէ •

Այս բանիս վերմանութեանը մէջ Վօլթէռին

այս խօսքս ալ առնելամ է, որ ընդհանուր պատմութեան ներածութեանը մէջ գրեր է. « Մարդս ինչ և որ է նէ՝ ամէն ատեն անանկ էր: Ասով ըսել չեմ և ուղէր թէ ամէն ատեն գեղեցիկ քաղաքներ, և և քսան և չորս լիպրանոց սուրբ (կիւլէ) նեաւու և թնդանօղ (թօփ) ունեցաւ. . . այլ ընկերութեւ և հիմը ամէն ժամանակ կենալով հարկաւորապէս և ամէն ժամանակ ընկերութիւն ալ կար: Չէ՞նք և մի տեսներ որ ամէն անասուն և ամէն նիւթական և էակներ՝ բնութիւնը իրենց ինչ օրէնք և յատ և կութի տրվեր է նէ՝ անիկոյ չեն փոխեր: Մարդս և ինչպէս փոխած պիտի ըլլար »: Բայց այս ըսածը իր մըտքին մէջը տեղաւորված չէ. այս ըսելէն ետքը շատ շանցնիր, խնդիր մը կը յարուցանէ. մարդս ընկերութիւն հնարեց նէ՝ առանց լեզու հնարելու ինչ ծածուկ կապ և հաստատութիւն և օրէնք ունէր որ ընտանեացը հետ մէկ տեղ կը բնար կենալ: Եւ ասոր լուծումը տալու կը լլայնէ՝ ինչ ըսելիքը չի գիտնար. այս փիլիսոփայներուն դրութիւնները այսպէս կը տոր կը տոր կտարրտած բաներ էին. մէկ տեղ բերելով և իրար կապելով ամբողջ բոլոր մը չէր կը բնար բաղկացընէլ:

Այս ըսածներըս կիմացիլի որ՝ թէ ընկերութիւն և թէ խօսիլը՝ Աստուծոյ յայանապէս մարդոյս պարգև տրված են: Եւ թէ որ ասոնց սրբ առաջ տրվեցաւ ըսես նէ՝ սուրբ գիրք կը ցըցընեն թէ լեզուն առաջ տրվեցաւ Ադամայ, և ընկերը ետքը, և Եւ պատուիրեաց տէր ան Ադամայ և ասէ. յամ

« ծառոց որ են ՚ի դրախտիդ՝ ուտելով կերիցես •  
 « Բայց ՚ի ծառոյն զխառնութեան բարւոյ և չարի մի՛  
 « ուտիցէք • զի յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ՝  
 « մահո՛ւ մեռանիցիք Կ : Ասիկայ Աստուած Ադամայ  
 « հետ խօսեցն է • և այն ատենը աշխարհքի վրայ  
 Ադամէն զստ մարդ չկար • քանզի ասոր վրայ ան-  
 « միջապէս կրսէ Աստուած • « Ա՛յ է բարւոք մարդոյդ  
 « միայն լինեւ • արասցուք դմա օգնական ըստ դմա Կ :  
 Ադամ աւայն ատենը խօսիլ սորված էր • և Աստուած  
 « անոր ամենայն անասնոց և գազանաց վրան իշխելու  
 « տուած կարողութիւն՝ նախ և առաջ բանականութիւն  
 « կամ խօսքով գործադրելու (իճրա ընելու) առիթ  
 « տալու համար՝ ամեն անասունները առաջը բերաւ  
 « և անուն դնել տրվաւ • « Եւ ստեղծ ևս տէր Աստ-  
 « ւած զամ գազանս վայրի, և զամ թռչունս երկ-  
 « ւնից, և ան զնոսա առ Ադամ տեսանել զի՛նչ  
 « և կոչեացէ զնոսա • և ամ շնչոյ կենդանւոյ զի՛նչ և  
 « անուանեաց Ադամ • այն անուն է նորա Կ : Եւ չի  
 « կարծես որ Ադամ անոնց հետ ընկերութիւ պիտի  
 « ընէր • քանզի թէպէտ ամենուն ալ մէկ մէկ անուն  
 « դրաւ, բայց իրեն ընկերութիւն ընելու իրեն նման  
 « արարած մը չի գըտնըվեցաւ • « Եւ կոչեաց Ադամ  
 « անուանս ամ անասնոց և թռչնոց երկնից և ամ  
 « գազանաց վայրի • բայց Ադամայ ոչ գտաւ օգնա-  
 « կան նման նմա (ծնն • ք • 16 = 20) :

Ընկերութիւնը լեզուէն՝ կամ լեզուն ընկերու-  
 « թենէն առաջ հաստատելուն վրայ վերը գրած դժ-  
 « ոււրութիւննիս այս գրութեանը միջ տեղ չունի •

քանզի մարդս թեղեա իրեն ընկեր չունէր՝ որ հե-  
տը խօսի, բայց որի պատկեր և նմանութի սակը-  
վեցաւ նէ՝ անոր հետը կը խօսակցէր. ուստի Ադամ  
լեզուն ստացաւ Արարչին հետ ընկերութի կտրը  
(1) և անոր խօսքը լրսելուն ու հասկընալուն մի-  
ջոյց ժամանակ չանցաւ: Եւ Եւայալ Աստուծոյ  
ձեռք սակըծվելով՝ բանականութեամբը Ադամոյ  
լեզուն դիւրաւ սորվեցաւ, և անոր ընկեր եղաւ.  
ընկերութեան հաստատվին ալ այս է:

Ծ = (1): Այս ընկերութիւնս՝ նմանութի վոյց  
հաստատելով՝ հեթանոս փիլիսոփայներն ալ կը  
ճանչնային: Պուտարքոս կըսէ. մարդս մինչև որ  
իր ձեռքէն եկածին չափ Աստուծոյ նման չըլլայ  
նէ՝ զԱստուած չի կըրնար ամ երջանկութեամբ  
վայելել: Եւ Պլատոն կըսէ. « Արդար մարդը  
« այն է որ՝ բնութեանը ձեռք տուածին չափ  
« Աստուծոյ նման կըլլայ: (քաղաքականութի .  
« դր . Ժ): Բայց նմանութիւնը հաւասարութի  
ըսել չէ. իրարմէ շատ տարբերութիւն ունին . և  
Ադամ Աստուծոյ հետ ընկերութիւն կընէր կը-  
սենք նէ՝ հաւասար հաւասարի հետ ըրածի պէս  
հասկընալու չէ. Աստուած կը խոնարհէր Ադամոյ  
հետ ընկերութեան համար. ինչպէս որ շարականը  
կըսէ. « Զաստուած տեսանէր միշտ խոնարհեալ  
« ՚ի դրախախն:

Նախնեաց երկայնակեցութեան վրայ :

Մ. առջին մարդը որքան ատեն անմեղութեան մէջ մնաց՝ և Աստուածային պատուիրանքը պահեց նէ՝ Աստուած իրեն ուսուցիչունէր . և մէկ անգամ մը խօսիլը անկէց սորվելէն ետքը՝ ամէն գիտութիւն և հանձարովալ լեցվեցաւ . թէ որ անմեղ և անարատ մընար նէ՝ անմահ պիտի ըլլար . մեղաց մէջ կյնալով մահուանալ տակը ինկաւ (1) :

Ասիկայ Մովսէս մարդարէն կը պատմէ . բայց մարդկային էութեան ալ այնքան համաձայն է որ՝ Մովսէսի պատմածը չգիտցող իմաստուններն ալ գտան որ, հիւանդութիւնը՝ որ մարդոյս մեռնելուն որպէս թէ սկզբնաւորութիւնն է, մարդկային բնու-

Ճ. : (1) Ատամ բառը՝ Արաբացւոց Տեվամ և Տամեթ բառէն ելլելով կը նշանակէ մշտնջենաւոր . և այս բառիս Ադամայ անուանը հետ համեմատութիւնը՝ նկատելու արժանի բան մընէ : Գրութեան կողմանէ այս երկու բառս տարբերութիւն չունի . կարգալու կողմանէ՝ մշտնջենաւոր ըսելու նշանակութիւն կը կարգացվի Իտամ . և Ադամայ անունն է Ատամ կամ Ատեմ :

Թեան էութենէն չէ՛ (1) : Հիներուն մէջէն բաւա-  
կան սեպենք Հիբոկրատ բժիշկը՝ որ փիլիսոփայ ալ  
էր . և թէ որ հիւանդութիւններուն պատճառ ան-  
և բաժանելին է չըսենք նէ՝ ուրիշ պատճառ գըտ-  
անել անհնար է ո՛ր կըսէ : Եւ որովհետեւ նիւթը  
անբաժանելի չի կըրնար ըլլալ . և մանաւանդ՝ նիւ-  
թը հիւանդութեան պատճառ ըլլալու համար հարկ  
է որ մասունքներ ունենայ, և մասունքներուն իրա-  
բու հետ ունեցած համեմատութիւնը ավելիւմ ըլ-  
լայ : Հիբոկրատ կըսէ որ՝ հիւանդութեան բուն  
պատճառ եղող բանը ասանկ մասունք չունենայ (2) :  
Եւ մարդոյս գոյութեան մէջ անբաժանելի սկիզբ՝  
հոգին է : Ասիկայ Հիբոկրատ բաց խօսած չէ՛ ալ նէ՝  
անցեալ դարու անսօժ փիլիսոփայներէն Պառթէ  
անուն բժիշկը՝ Նոր սկզբունք դիտութե՛ մարդոյ  
գիրքին մէջ օղակ կը բացատրէ : և Մարդոյս կեն-  
և դանութեան սկիզբը մէկ գոյութիւն մըն է կըսէ .  
և և այս գոյակը մէկ հատիկ է . և կենդանեաց մարմ-  
և նոյ անդամքներուն ասկէց զատ շարժիչ զօրութի՛

Ճ. : (1) Ասիկայ աւանդութիւն ալ սեպեսնէ՝  
մարդոյս խելքին սահմանէն դուրս բան չըլլալը  
անկէց յոյանի է որ՝ վերջին ժամանակի անսօժ  
փիլիսոփայներէն ալ ասիկայ ընդունող կայ , որ  
խօսքը վարը կը տեսնես :

(2) Անբաժանելի Թարգմանածնիս՝ յունարէն  
բնագրին մէջ է Ամբի՛, որ ըսել է Մերիս (մասն)  
չունեցող :



և չի կրրնար ըլլալ, և մարդոյս հիւանդութիւնը թէ  
 և որ դործարանքներուն կազմութեանը փնասովեւէն  
 և եկած չէ նէ՝ հաւանական կերելի որ՝ (1) այս  
 և կենդանութեան սկիզբը այն հիւանդութեանն ալ  
 և սկիզբ ըլլայ, և այս սկիզբը՝ մարդոյս մարմինէն  
 և կախում չունի։ Այս հիւանդութիւնս ալ կեն-  
 և դանութեան սկզբանը վրայ դուրսէն գալու է՝  
 Պառն մտածէ որ՝ հոգւոյն վրայ դըրսէն ներգոր-  
 ծող և անոր հիւանդութիւնը բերելով մարմնոյն  
 ալ հիւանդութեան պատճառ եղող ի՞նչ էակ կրր-  
 նայ ըլլալ, ի՞նչ որ ըլլայնէ՝ հարկաւորապէս սա  
 երկու յատկութիւնս պիտի ունենայ, իմացական  
 էակ պիտի ըլլայ որ ներգործել և բան մը ընել ու-  
 նենայ, քանզի իմացական չեղող էակը բան մը ընէ  
 նէ՝ հարկաւ ընել տրվող կայ, և ընողէն ընել տը-  
 վողը շարունակ ելլելով՝ հարկաւորապէս անանկ  
 ընող մը գըտնելու է որ ընել տրվող չունենայ։  
 Ուստի երկրորդ յատկութիւնն է որ ազատ պիտի  
 ըլլայ, ուրիշէ մը կախում չունենայ, և մարդոյս ան-  
 բաժանելի մասն՝ որ է հոգին, անոր ներգործութե-  
 տակը իյնալով՝ անկէց կախում ունեցած ըլլայ, և  
 այս սահմաններէս՝ ես չըսած իքէն ալ կը հասկընաս  
 որ այս ազատ և իմացական էակը՝ Աստուած է, և

Ծ՝ (1) Պառթէ իր ըսածներուն հետևութիւնը  
 ուր երթալ հասնիլը գիտնալով՝ վախնի վախը կը  
 խօսի, քանզի նիւթական փիլիսոփայութե՛ հիմը  
 կը խախտէ ասիկայ։

կրքնաս հեռեցընէլ . ուրեմն՝ մարդոյս հիւանդու-  
թիւնը անմիջապէս Աստուծմէ կուգայ . Բայ Աս-  
տուածաշունչս , և պատճառն ալ կը գըրանեն . « Որ  
« մեղանչէ առաջի արարչին իւրոյ՝ անկցի ՚ի ձեռս  
« բժշկի ( սիրտք . շԵ . 1 ) : Մովսիսական պատմու-  
թիւնն ալ ասիկայ կը հաստատէ : Ադամայ երբ որ  
Աստուած պատուիրեց որ իր ցըցուցած ծառին սը-  
տուղէն չուտէ՝ ըսաւ . որ որ անկէց ուտես նէ՝ պիտի  
մեռնիս ( ծնն . Բ . 17 ) . և երբ որ Ադամ պտուղը  
կերաւ նէ՝ Աստուած կըսէ . որովհետև կընկանդ  
խօսքը մըտիկ ըրիր , և միայն ասկէց մի ուտեր ըսած  
ծառխս պտուղէն կերար՝ աշխարհ քու գործոյդ  
մէջք անիծեալ ըլլայ ( պերեքէթ չունենայ ) ( 1 ) .  
քեզի փուշ ու տատասկ բուսցընէ . վայրի խոտ ու-  
տես . քու հացըդ երեսիդ քըրտինքովք ուտես մին-  
չև գետինը դառնաս՝ որ անկէց առնըվեցար . քանզի  
հող էիր , և հող պիտի դառնաս ( ծնն . Գ . 17 . 18 .  
19 ) : Այս խօսքովքս՝ առաջին պատուիրանքին մէջ՝  
կերած օրըդ պիտի մեռնիս ըսելուն միտքը բացատ-  
րած ըլլալը յայտնի բան է . անոր համար կըսենք որ՝  
Ադամ պատուիրանազանցութիւնն ըրած օրէն ըսկը-  
սաւ մեռնիլ . քանզի այն օրէն վերոյգրեալ սպառ-

Ծ. : ( 1 ) Պերեքէթ բառին՝ Արարացուց լեզուին  
մէջ բուն նշանակութիւնն է՝ Օրհնութիւն . և  
ասկէց կելէ Միւսպարեք բառը , որ է Օրհնեալ :  
Ուստի Պերեքէթսիզ՝ կըլայ Օրհնութի չու-  
նեցող . օրհնութենէ զըրկըված . անիծեալ :

նախքները կատարվել սկըսան :

Ենկէց ետքը Ադամ՝ Աստուծոյ ընկերութենէն զրկվեցաւ . Աստուծոյ խօսքէն ելել Եւայի խօսքը մտիկ ընելուն համար՝ Եւա իրեն ընկեր մնալը իրաւունք էր . և որովհետև Աստուծոյ սորվեցուցած բաները իրեն մըտքին մէջը անջնջելի մնացեր էր՝ իրեն սերունդին ուսուցանելու պաշտօնն ալ անոր մնաց : Ասոր զոյց գիտելու արժանի բան մը կը դըռնեմք Աստուածաշունչ պատմութեան մէջը :

Մովսէս Վայնի ծնանիլը պատմելով կըսէ .  
 « Ծնաւ զՎային և ասէ . ստացայ մարդ Աստու-  
 « ծով (ծնն . 7 . 1) : Յայանի է որ՝ մարդ բառը արևելեան լեզուաց մէջ , և յատկապէս Արաբաց-  
 « ւոց լեզուն մէջ՝ Ատամ կը թարգմանի : Վային ծնած ատենը Ադամայ այնքան նման էր կերպարա-  
 « րանօք՝ որ Ադամ իր անունը անոր օրվաւ . որպէս  
 « թէ պըզտիկ Ադամ մըն ալ ստեղծված սեպելով :  
 « Ըսել է որ՝ Վային Ադամայ կերպարանաց և պատ-  
 « կերին նման աղայ մըն էր : Մովսէս ինչո՞ւ համար  
 « ասիկայ այս տեղըս համարձակ չի զրուցեր , մէզի  
 « գուշակել կուտայ , և ետքը Սէթայ համար՝ ծնուն-  
 « դը երկու տեղ պատմելով , մէկ տեղը կըսէ . « Ծնաւ  
 « որդի և անուանեաց զանուն նորա Սէթ . ասէ . զի  
 « յարոյց ինձ Աստուած զաւակ այլ փոխանակ  
 « Հաբելի՝ զոր սպանն Վային) : և ետքը կըսէ .  
 « Եկաց Ադամ ամս երկերիւր և երեսուն , և ծնաւ  
 « ըստ կերպարանաց իւրոց և ըստ պատկերի իւ-  
 « րում , և անուանեաց զանուն նորա Սէթ (ծնն . 7 .

« 25. Ե. 3 ) Ե Այն հասկըցընէլ կուզէ որ՝ Ադամ միայն մարմնաւոր կերպարանքին նմանութիւնը բանի տեղ չէր դներ, կուզէր որ՝ իր զաւակը իրեն պատկեր ըլլայ, իրեն ունեցած հոգւոյ և մտայ կատարելութիւնները անիկայալ ունենայ:

Այլէն Հաբելը ըստաննելովը՝ Աստուծոյ անեծքին տակը իյնալով հօրմէն զատվեցաւ, և իրեն բնակելու զատ քաղաք շինեց (ծնն. 7. 17): Աբէլ ալ մեռած էր. Ադամայ ցեղը շարունակելու մարմնաւոր զաւակ կար, բայց իրեն իմաստութիւնը ժառանգելու արժանի չէր. քանզի Այլէնի պէս շարաբուեստ մարդուն մտքին մէջ իմաստութիւն մը անելիք չունէր. « Յանձն շարաբուեստ՝ իմաստութիւն և ոչ մտցէ (Իմաստ. 1. 4), և Այլէն Աստուծային բարկութիւնը իմաստութիւն մերժելեցաւ. « Մերժեցաւ և ՚ի նմանէ անիրաւն իւրով բարկութիւն. ընդ եղևայրաստպան սրտմտութիւն կորեաւ (Իմաստ. 3. 3): Եւ թէպէտ Այլին բողբոջին անտեղեակ մարդ չէր. յայտնի է որ հիմայալ քաղաք մը շինելու համար արուեստներէ զատ էփ աղէկ ալ բնական գիտութեանց տեղէկութիւն կուզէ, որ ամէն մարդու բաւականութեան աստիճանէն վեր է. բայց միայն ասանկ բաներ գիտնալով Ադամայ զաւակը՝ Ադամայ պատկեր չէր կրնար ըլլալ: Ուստի Ադամ շատ տրամութեան մէջ էր Հաբէլ մեռնելէն ետքը, որ իրեն գիտութիւնները իրեն քով պիտի մնայ, զաւակներուն չանցնի, և իրեն հետը մեռնի պիտի. և Սէթոյ ծնած ատենը շատ ուրախացաւ, որ Հաբէ-

լին տեղը Աստուած իրեն ուրիշ զաւակ մը տըլաւ  
աստուած պաշտութեան մէջ կրթեւում և իրեն գիտ-  
ցածները լրման անոր սորվեցընէլու, որ Աստուա-  
ծային աւանդութիւնը աշխարհիս մէջէն չի կորսալի:

Այս աւանդութիւնս Սէթայ ցեղին մէջը անա-  
պահան մընալու համար՝ Սէթայ և Վայէնի ցեղերը  
իրարմէ զատկեցան, և իրարու չի խառնըլէլու պատ-  
ուէր մը եղած պիտի ըլլայ առաջկուց, քանզի Մով-  
սէս՝ Սէթայ տղայքը Վայէնի ցեղէն աղջիկ առ-  
նէնին՝ մէկ նոր բանի մը և օրինազանցութեան մը  
պէս կը պատմէ, « Եւ եղև իբրև սկսաւ մարդիկն  
և բազմանալ ՚ի վերայ երկրի, և դասերք ծնան նոցա:  
« Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդասերսն մարդկան  
« զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանոցս յամե-  
« նեցունց զոր ընարեցին: Եւ ասէ տէր Աստուած,  
« մի՛ մնասցէ ոգի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ յաւի-  
« տեան: Վասն լինելոյ դոցա մարմին (ծնն. Է. 1.  
2. 3) (1): Սէթայ զաւակները Աստուծոյ ճամ-  
բովը կրթեւում ըլլալովն ին՝ Որդիք Աստուծոյ ըս-  
վեցան. քանզի Սէթ մինչև 700 տարիան եղաւ  
նէ՝ Ադամայ քովէն չի զատկեցաւ. Սէթայ տղան  
Ենովս՝ 495 տարի, և անոր տղան Վայնան՝ 305

Ճ. (1) Հրեայները՝ սուրբ գրոց Որդիք Աստու-  
ծոյ ըսածը՝ հրեշտակները կը հասկընան. բայց  
այն ատենը հարկ կը ըլլայ ըսել՝ որ այս հրեշտակ-  
ներըս ջրհեղեղին խեղդըվեցան, որ անոնց մե-  
զացը պատիժ տըրվեցաւ:

Թարի, և անոր տղան Մաղաղայէ՛Լ՝ 135 Թարի  
 Աղամայ քով մնացին: Ասոնք ամենն ալ այսքան  
 երկար Թարիներով Աղամայ ձեռքին տակը մնալով՝  
 և անոր կենդանի բարբառը լսելով՝ ՚ի հարկէ  
 Աղամայ ունեցած Աստուածային և բարոյական և  
 բնական գիտութեանց ամենուն ալ տեղեակ ըլլալու  
 ատեն ունեցան: Եւ ասոնք ալ իրենց երկար կե-  
 նացը մէջ իրենց զուակներուն կատարելապէս ի-  
 րենց իմաստութիւնը հաղորդեցին: Սուրբ Էուսա-  
 ւորիչ հայրն ալ նահապետաց երկարակեցութեան  
 պատճառ Աստուծոյ խնամքը կուտայ՝ որ Աստու-  
 ծային վարդապետութիւնները իրենց զուակներուն  
 սորվեցընելու ժամանակ ունենան: « Ամենայն նա-  
 « հապետացն շատակեաց եղեալ, իբրև ՚ի բարերա-  
 « րութենէ անախ Աստուծոյ սերեալ բազմացան: »  
 « նոյնպէս և յեա ծննդոցն յերկարակեացս արար-  
 « եալ. զի որք Աստուծովն սրացան՝ պատմեցեն  
 « հարք որդւոց, զի իբրև պատուիրանք զգուշացու-  
 « ցիչք լինիցին՝ առ ՚ի ծանօթ առնելոյ զնոսս  
 « Աստուծոյ. որպէս եասացաւ իսկ, թէ հարցըիր  
 « դու զհարս քո և պատմեցեն քեզ, և զծերս քո  
 « և ասացեն քեզ: Որով յայտնի իսկ է՝ թէ վասն  
 « այնորիկ երկայնակեացք, և ոչ վասն բազմութեան  
 « ծննդոց (Ագաթանդեղոս. գլուխ. ի՛Ղ. թղթ.  
 220. Թղ. վէնէա. 1835):

Կարծիք ընել պէտք չէ՝ որ՝ ասոնք երկար ապ-  
 րելնուն համար տղայութիւնն ալ երկար կը քը-  
 շեր. ուստի անոնց 900 և այսքան Թարին՝ մեր

ատենական 90 տարվան հաւասար էր նե՝ 230 տարին ալ մեր 23 տարվան չափ կըլլար. ուստի երկարակեցութիւննին ասանկ բաներու խեր չէր ընէր, սովորական մարդոց կենացը չափ հազիւ օգուտ կընէր: Այս համեմատութիւնս արմատէն սխալ է. ուրիշ համեմատութեան կանոն մը կայ աւելի խելքի մօտ. և այն կանոնը ձեռք առնելով համարձակ կըսենք որ՝ այն ատենական 900 տարին՝ հիմակվան հաշուով հիչ որ չէ նե՝ 1800 տարի մը պիտի ընէ:

Երկարակեցութե՛ պատճառ բնասկէս՝ մարմնոյն առոյգ կազմութիւնը կըրնանք տալ, ասիկայ հակառակութիւն չի վերցընէր: Առոյգ ըսելը՝ մարմնոյն ամէն գործարանքները իրենց ինկած գործը պէտքին պէս անխափան կատարելով կըլլայ. այս ալ շիտակ է: Բանական հոգին ամէն ատեն նոյն է, գործերը նոյն չեք իր նե՝ գործարանաց այլևայլութիւնն է պատճառը, որ հոգւոյն տպաւորելու շարժմանը և ազդեցութեանը բաւականութիւն չունին: Առոյգ մարմնոյն վրայ հոգին ալ կատարեալ կը ներգործէ: Ասիկայ այն ատենը անանկ չէր ըսելու համար պէտք է ըսել և հաստատել՝ որ նահապետաց բանական հոգին մեր հոգիէն մեծ էր, որ անոնց մարմինը այն հոգւոյն ներգործութիւնը կրելու բաւական չէր ըլլար: Ասիկայ ալ ըսելը յայտնի յիմարութիւն է, և խելք հասնելու բան չէ. քանզի աննիւթ և ամ մարմին կակին իրարմէ մեծ կամ պըղտիկ ըլլալը՝ ի՞նչպէս կըրնանք իմանալ, մեծութիւնը և պըղտիկութիւնը չափի վերաբերելը, և չափը նիւթական

բաներու յատուկ ըլլալը գիտնալով (1) : Այս ասանկ ըլլալով՝ նահասպետաց միտքը աղայութեան ատեննին մեր միտքէն կանուխ կը բացվէր . ճիշդ անոր համար որ՝ առոյգ մարմին ունէին . անանկ որ՝ առոյգ մարմին ունենալնին հէմ՝ մըտքերնին կանուխ բացվելու և մեզի չափ աղայական անմիա վիճակի մէջ չի մնալու պատճառ էր , հէմ՝ երկար ապրելու : Ասով կարդարանայ սուրբ Լուսաւորչին՝ ըսածը , որ անոնց երկարակեցութիւնը միայն սորվելու և սորվեցընելու համար կըրնար ըլլալ . միտքերնին բացվելու համար երկար ժամանակի կարօտ չէին :

Պիտի ըսես որ՝ ամէն մարդ զգայարանք ունէր . և զգայարանքն ալ գործածելը կանուխ կը սորվէր . և այն զգայարանքներով փորձով ամէն բան ալ կըրնար սորվիլ . ինչ պէտք էր գըրսէն ուսուցչի , որ այնքան երկան ապրի : Ասիկայ խորհեցարնէ՝ այն

Ծ. : (1) . Աննիւթ էակները իրարմէ ելլել կատարելութիւն կըրնան ունենալ . այն ալ՝ այլ և այլ կարգի էակ ըլլան նէ : Քանզի մէկ տեսակի մէջ գըտնըլած անմարմին էակներուն ամէնուն ալ կատարելութիւնը բնապէս մէկ աստիճան է : Ամէն մարդու բանական հոգին ալ մէկ տեսակ ըլլալով՝ իրեն բնութեանը մէջ իրարմէ տարբերութիւն՝ և ելլել պակաս կատարելութիւն չին կըրնար ունենալ : Անկատարութիւննին միայն գործքերնուն վրայ կերևի . ուստի իրենցը չէ , իրենց բանեցուցած գործիքնն է :



ալ մտածէ որ, զգոյարանքներուն առաջնորդութիւնը  
 ապաւինիլը երկու մեծ և գլխաւոր պահասութիւնն  
 ունի . մէկն է այն՝ որ զգոյութեան տակ չիյնալու  
 բաները (1) զգոյարանքը չի կրնար սորվեցնել :  
 Երկրորդ՝ ամէն բան անձամբ փորձելով սորվիլը՝  
 մարդըս մեծամեծ վտանգներու մէջ կը ձըգէ : Ար-  
 դարութիւն և անիրաւութիւն ըսլած բաները՝ որ  
 աչքի երևելու բաներ չեն , և մէկ մէկ գործքի ա-  
 նուն գըրված են . մանաւանդ թէ մի և նոյն գործ  
 երբեմն արդարութիւն կըլլայ՝ երբեմն անիրաւու-  
 թիւն . ինչպէս՝ մէկին առաջկուց փոխ ըստակ ար-  
 վեր ես՝ և կառնես . մէկին ալ ամենևին բան մը ար-  
 ված չունիս և տալու միտք ալ չունիս՝ և կառնես .  
 ասոնք երկուքն ալ ըստակ առնելէ . բայց առաջինը՝  
 արդարութիւն , և երկրորդը՝ անիրաւութիւն է .  
 մարդըս ասիկայ իրեն զգոյարանքներուն մնալով՝  
 երբ պիտի սորվի . մէկէն բան մը առնելը՝ արդարու-  
 թիւն պիտի գիանայ թէ անիրաւութիւն . և այս

Ծ. : (1) Չգոյութեան տակ չիյնալու բան կըլ-  
 լայ մի : Չի կրնար ըսալ ըսողները՝ անլուծա-  
 նելի խնդիրներ լուծելու պարտաւորելով չի  
 կրնալ վերցընելու բեռան տակ կը մընանն . և  
 խնդիր մը շատ դժուար գոյնէ՝ ատանկ բան չի  
 կրնար ըսալ տէյի մէկ վճաբար զուցվածք մը  
 ունին : Ասով փիլիսոփայ եմք ըսելն իքէն՝ ան-  
 մըտութիւննին կը յայտնեն : Ասոր վրայ երկար  
 խօսելու տեղը չէ :

բառերս ալ որիկ՞ պիտի գիտնայ. որ հիմայ ալ ամ-  
 նուն ծանօթ բաներ են տէյի կարծըլած իբէն՝ չի  
 գիտցող շատ կայ: Ասոնց պէս հաղարաւոր բաներ  
 կան որ՝ զգայարանքնիս մեզի խնայընելիք չունի:  
 Եւ միայն զգայարանաց առաջնորդութեամբ բան  
 սորվիլ և կատարեալ կրթութիւն ստանալ ուզողը՝  
 հարկաւորապէս անկատար կը մնայ: Բայց զգալի  
 բաներուն ամէն մէկը հասկընալու և ըսկիզբէն մին-  
 չև իր այտենը եղած փորձերը չի գիտնալով կամ  
 անոնց վրան կասկածելով ինքը անձամբ ստուգե-  
 լու ըլլայ նէ՝ որքան մեասներու կը հանդիպի, և  
 որքան վասնդներու տակ կիյնայ: Մոլեխիմաբ  
 թունաւոր և կարսոնը (մաղտանօսը) անմիտս ըլլա-  
 լը՝ մէնք մեր վրայ փորձած ունիմք մի. փորձելու  
 համարձակութի կուգայ մի: Բայց զգայարանք ու-  
 նեցած իբէն ասիկայ մէնք փորձելու եմք. ուրիշի  
 ըսածին ինչո՞ւ կը հաւատամք: Մոլեխիմոզը (սալ-  
 տըրանը) ուտողը կը մեռնի եղեր. անկէց չըլլալը  
 կարելի չէ՞ մի. ո՞վ պիտէ ինչ ծածուկ հիւանդութի  
 ունի եղեր. զխորաւոր անանկ բերեր է որ մոլե-  
 խիմոզ կերած օրը զոյրանայ՝ և մեռնի. իրիկվընէ  
 կարսոն ուտող և այն գիշերը մեռնող չիկայ մի:  
 Պիտի ըսես որ՝ կարսոն ուտողներէն մեռնող քիչ  
 և ողջ մնացող շատ կայ. մոլեխիմոզ ուտողներէն ապ-  
 րող չկայ: Ի՞նչ գիտես ասանկ ըլլալը. ամէն ողջ  
 մնացող մարդոց կերած խոտեղէնները տեսաք՝ և  
 մէկիկ մէկիկ քննեցիր. կարելի չէ՞ մի որ քու չի  
 գիտցածներէդ քանի մի հոգի ալ կերած՝ և անմիտս

մնացած ըլլան : ինչպէս որ հօբաւ Թաշուհը (եա-  
տան կիւղէրճինին) կուտէ՝ և բան չըլլար : Այս  
խօսքերէն քիչ մը խելքըդ հակի ալնէ՝ ձեռքըդ ա-  
ռաջ չերթար այս Թաշուհոր խոտը ուտելու : և  
աղէկ կընես : քանզի մնասակար է ըսածնին մնասա-  
կար է : Թէ որ ըսած չըլլայիր նէ՝ որովհետև վրան  
մէկ մնասակարութեան նշան մը չկայ՝ կուտելիր : և  
մնասը կը կրէիր : Ասոր պէս շատ բաներ կան որ՝  
զգայարանաց վկայուէ կասովիլը՝ և ամէն բանին փոր-  
ձը անձամբ ընելը վտանգաւոր է աէյի կը ցըցընեն :

Աստուած զգայարանքը մարդոյս օգնական տա-  
ու : որ ամէն բան անոնցմով սորվի և անոնցմով  
կատարէ : բայց նոյն Աստուածը մարդոյս մէկ զար-  
մանովի կարողութիւն մըն ալ տրվաւ՝ որ ամէն մար-  
դու և ամէն ատեն կըլլայ, և զգայարանքներով եղած  
կը նմանի, բայց անոնցմէ բոլորովին կախում չունի :  
Եւ աւելի զարմանալին այն է որ՝ ասիկայ անա-  
սուններուն ալ կը պատահի : ըսե՛լէ որ՝ անասուն-  
ներուն ալ ներսը մէկ կարողութի մը կայ՝ մարդոյս  
բանական հոգիէն ասրբեր : բայց անզգալի (1) :

Ծանօթ (1) Անասուններուն կենդանութեան սկիզբը  
կամ հոգին ինչ ըլլալը քննող փիլիսոփայները  
մեծ տարակուսի մէջ են : Հոգի չունին չսովիր •  
հոգինին անմահ է ըսելը դժուարութիւն ունի •  
մահկանացու է ըսելն ալ դժուարութի ազատ չէ :  
Բայց ասոր վրայ ընդարձակ խօսիլը՝ փիլիսոփայ-  
ութեան կը վայլէ :

Մարդ արթնութե՛ ժամանակը զգայարանիներուն միջնորդութեամբը ինչ կիմանայ, և գործարանիներովը ինչ կընէ նէ՛ երազին մէջն ալ նոյն բաները առանց զգայարանիի և առանց անդամքները գործածելու կընէ: Աչքը գոց է՝ և շատ բաներ կը տեսնէ, իրեն բան մը ըսող չի կայ՝ և բան կը լսէ և կը հասկընայ և պատասխան կուտայ. պառկած տեղէն ելած չունի՝ և հեռու տեղեր կերթայ. և այլն: Յերեկվընէ լըսածը՝ միտքը մնացեր է, և գիշերը երազին մէջ անոնք կը նորոգին ըսելը՝ մէկ դիւրին կերպով պատասխան տալ մըն է. բայց շխտակը նոյնիք նէ՛ պատասխան տալ չէ. մէկ դժուարութիւնէն փախչիմ ըսելն իբէն ուրիշ աւելի ծանր դժուարութիւններու մէջ իյնալ է: Լըսած բաներնիս արթուն իբէն ալ կը յիշեմք. բայց երազներնուս մէջ տեսնելածին մէկն ալ չենք տեսներ՝ թէ որ առողջ ենք նէ: Գաղափարները քնացած ատեննիս կը չեփոթին ըսելք. բայց ինչէ՛ն: Արիւնը շատ կերթայ գլուխը՝ անոր համար: Բայց արիւնին գլուխը շատ երթալը՝ թմբութեան և անզգայութեան պատճառ կըրնայ ըլլալ. որ երակները լեցվելով ջիղերուն արմատը կը սըլտեն, և զգայութիւնը կը կանգնի: Ուստի խնդիրնիս միշտ նոյնը կը մնայ. զգայութիւնները կապլած ատենը այս գործքերըս ընողը միլ է: Գաղափարները նիւթական բան չեն՝ որ արիւնը անոնք շփոթելու և իրար խառնելու կարողութիւն ունենայ. և շփոթին նէ՛ ետքէն միլ կը զատէ. ինչէ՛ն է որ աղայութեան ատենը ըստացած

գաղափարն իս անշփոթ կը մնան : Եւ թէ որ գաղափարները մէկ նիւթական բան մը ըլլային նէ՝ մէկ մարդ մը մեռած ատենը վարպետ բժիշկները ուղեղին մէջը քննելով կը ընային գոնէ այնչափը հասկընալ որ՝ մեռած ատենը ի՞նչ գիտէր . և ասիկայ եղած և ըլլալու բան չէ : Եւ ասով Աստուած մարդոյս իմացընէ և ուղեց որ՝ իր ներսի եղած բաներուն պիլէ ինչպէս ըլլալը չի հասկընալով՝ միայն իր զգայարանաց վկայութիւնը ամեն բան հասկընալու բաւական չի սեպէ : անոնցմէ զստ իրեն բան սորվելու աղբիւր փնտրուէ (1) :

Զգայարանքներէն զստ կըսեմք նէ՝ բոլորովին զստ ըսել չէ : քանզի յիրաւի դուրսէն եղած բաները մինչև զգայարանքներէն ներս չի մըտնեն նէ՝ մեր միտքը չեն լուսաւորեր : Խօսքին կարգէն յայտնի է որ՝ զգայարանաց գործածութիւնը չէ չընդու-

Ճ. : (1) Յիրաւի երազի բացատրութիւնը փիլիսոփայները յուսահատեցուցած է : Անոնց վճաբար և իշխանօրէն՝ այս այս է ըսելու պէս զրուցածներուն մի նայիր . բացատրութեան եղանակ մը կը գըտնեն . բայց անոր հակառակ զրուցվելու առարկութիւնները չեն յիշեր . քանզի յիշեն նէ՝ պատասխան ալ տալու է . և իրենք ասոր պատրաստութիւն ունեցած չեն ըլլար . ուստի լուծեամբ անցնիլը աղէկ կը սեպեն : Մարդոյս երազ ատենը՝ չի հասկըցվելու բան է . և անանկ կը մնայ :

նածնիս • քանզի այլոց ըսածը հասկընալու և սոր-  
վելու համար ականջ պէտք է՝ որ զգայարանաց մէկն  
է • այլ՝ ուրիշներէն ըսած և լսուելու բաներուն  
ստուգութիւնն ինքը անձամբ փորձելուն անտեղզ-  
ութիւնն է որ չենք ընդունիր (1) : Եւ կըսենք որ՝  
մեզնէ առաջ եղող մարդոց վկայութիւնը մարդ-  
կային տեղեկութեց մէջ՝ մեր անձամբ ըրած փոր-  
ձէն աւելի տեղեկութիւն կուտայ մեզի : Եւ թէ  
որ ասիկայ ասանկ չըլլար նէ՝ պատմութիւն գրելը  
և կարդալը՝ պարագայ բան մը պիտի ըլլար • ամեն  
մարդ իր փորձովը սորվելու և իր խելքովը դատե-  
լու սահմանի մէջ գոցվի մնայ նէ՝ պատմութիւնը  
անոր ինչ պիտի սորվեցընէ • թէ որ լոկ զբօսանաց  
համար է նէ՝ պատմութիւններէն շատ աղէկ կըլլան  
շինծու առասպէլները • որ վարպետ մարդու շէնք

Ծա : (1) Էքլէքթիք փիլիսոփայներէն Տալիսօն  
անուն մէկ մը՝ ժԹ դարուն փիլիսոփայութեանը  
պատմութիւն անունով շինած գիրքին մէջ Լա-  
մէննէ փիլիսոփային ըսածները քննելով՝ պար-  
զապէս իրեն ծուռ հասկընալը երևան կը հանէ •  
քանզի անոր ըսածէն կը հետևեցընէ որ՝ մարդ  
իր ականջովը ըսածին ալ պիտի չի կըրնայ հաւա-  
տալ • որովհետև ականջն ալ զգայարանք է : Թէ  
որ փիլիսոփայի անուն վաստակելը՝ ուրիշին ըս-  
ածը ծուռ հասկընալով և անկեց ծուռ հետևութի  
հանելով կըլլայ նէ՝ առիկ մարդոց մէջ Տալի-  
սօնէն մեծ փիլիսոփայ շատ կը գըրանդվի :

ըլլան նէ՝ ստոյգ պատմութիւններէն աւելի կը  
 զուարճացընեն (1) : Եւ հիներուն խօսքը մեր տե-  
 ղեկութեանը մէկ աղբիւր մը սեպենք՝ նէ՝ շատ ծեր  
 մարդիկ մեզի վարժապետութեան համար աւելի  
 յարմար պիտի սեպենք, ուստի Սողոմն ինաստասերը  
 Եգիպտոսի քուրմերէն բան սորվնալու գացած  
 ատենը՝ քուրմերը իրեն ըսեն. ո՞վ Սողոմն. Յունաց  
 մէջ ծեր մարդ բնաւ չկայ, և ծեր ըսելով՝ բանգէտ  
 մարդ ըսել կուզէին : Ծեր ՚ի տանէ քումնէ մի  
 պակասեցի ըսելն ալ՝ մէկ օրհնութեան մը տեղ  
 կանցնի, ամենուն գիտցածն է :

Արդ Աստուած՝ որ նախախնամութեամբը կու-  
 ղէր որ՝ Ջջմարիտ գիտութիւնը և հաւատքը և մար-  
 դոյս այս աշխարհքիս մէջ կարելի եղածին չափ եր-  
 ջանկութեք պատճառ ըլլալու տեղեկութիւնները  
 չի պահսին՝ նահապետներուն կեանքը երկընցընե-  
 լով՝ անոնք մարդոց կենդանի վարժապետ դրաւ :

Շատ մարդիկ կան որ՝ Աստուածաշունչի պատ-  
 մութեան տեղեակ չըլլալով, կամ ասոր պատմած-

---

Ծ. : (1) Վօլթէնին համար կը զրուցեն որ՝ գրած  
 պատմութիւններուդ ըստուգութեք ի՞նչու չես  
 նայիր և սուտ բաներ կը գրես ըսէր են նէ՝ պա-  
 տասխան տրվեր է որ, պատմութիւնը զուարճալի  
 ըլլայ տէ՛ իրաւ կամ սուտ ըլլալը հոգ չէ : Ասիկայ  
 իր փիլիսոփայութեք համեմատ պատասխան մըն  
 է, բայց մեզի ալ այն կը սորվեցընէ որ՝ պատմած  
 բաներուն չի հաւատալք :

ներն ալ ուրիշներուն պատմածներուն պէս սուտ  
 կը վերցընէ կարծելով, և փիլիսոփայութիւն անուամբ  
 պարծենցող անհաւատներն ալ Մովսիսական պատ-  
 մութեան ստուգութիւնը տկարացընել ուղեւով կը-  
 սեն որ՝ մարդոյս կեանքը սովորաբար 75 կամ 80  
 տարի կըլայ • 100 տարի ապրող քիչ կայ • 150  
 տարին հասնող ըլլայ նէ՝ հրաշալի բան մը կերենայ •  
 Անանկ է նէ՝ 900 և աւելի տարի ապրեցաւ ըս-  
 վելը սուտ է : Ոմանք որպէս թէ շնորհ մը ընելով  
 և Մովսէս մարգարէն բողբոլին սուտ չի ձգելու  
 համար կըսեն թէ՝ կարելի է որ Մովսէս տարի  
 ըսելով ամիս կը հասկընայ • կամ երէք ամիսը՝ որ է  
 մէկ եղանակը՝ տարի մը սեպելով՝ անոր չորս տա-  
 րին մեր հաշուով մէկ տարի մը կըլայ • և այն •  
 Բայց որովհետև Մովսէս տարին ու ամիսը ճանչ-  
 նալը յայտնի կը ցըցընէ (ծնն • է • 11 • ը • 4 • 5 •  
 13 • 14) , թողունք որ Դիոդորոս Սիկիլիացի հե-  
 թանոս պատմիչը՝ Եղիսպատացոց ժամանակագրու-  
 թեան վրայ այդ կարծիքը ընէ , որ քանի ամիսը  
 տարի մը կը սեպեն նէ՝ մեր հոգը չէ • Մովսէսի հա-  
 մար այդ շնորհին կարօտ չեմք • նախ և առաջ պատ-  
 մութեանը և պատմիչին պարագայները քննենք •  
 ետքը փիլիսոփայութեան և Քիզիքական գիտութիւն  
 ալ հարցընեմք թէ անոնք ի՞նչ կըսեն :

Մովսէս գիտէր որ՝ 175 և 180 տարի ապրող-  
 ները՝ օրերնին լեցուցած և աղէկ մը ծերացած կըլ-  
 ան • (ծնն • ին • 7 • 8 • լն • 28 • 29) : 138 տարին  
 ալ ծերութիւն կըսէ • քանզի Յակոբ Եսաւայ



ձեռքէն անդրանկութիւնը առաւնէ՝ հայրերնին  
 Իսահակ՝ ժամանակագրաց հաշուովը՝ 138 տարւան  
 էր (1) • և Մովսէս կըսէ • Եւ եղև իբրև ձերացաւ  
 և Իսահակ , և վատեցին աչք նորա ՚ի տեսանելոյ ,  
 և և այլն • (ծնն • իԷ • 1) : Հիմակվան հաշիւներուն  
 ալ բաղդատեմք նէ՝ օտար բան չէ • քանզի 180  
 տարի ապրողներ հիմայալ թէպէտ քիչ՝ բայց եր-  
 բեմն կը գըտնըվեն : Հիմայ՝ իր ասեմվան և իրմէ  
 300 տարի առաջ եղող մարդոցը կենաց սահմանը  
 գիտցող մարդը՝ իրեն ժամանակակից մարդոցը գը-  
 բելով , թէ որ ձեռքը հաստատուն և անջրելի ըս-  
 տուգութի չունենարնէ՝ մէկ մարդուն 900 տարի  
 ապրելը՝ ի՞նչպէս կըրնար հաւտացընել • և ասանկ  
 անհաւատալի բան մը պատմելու ի՞նչպէս կը հա-  
 մարձակէր : Թէ որ Ադամ 120 տարի ապրեցաւ  
 նէ՝ 930 տարի ապրեցաւ ըսելէն իրեն ի՞նչ շահ  
 կըլար : Արդեօք կը վախնա՞ր որ՝ նահապետները  
 քիչ ապրած ըլլաննէ՝ իր ժամանակի Իսրայէլացի-  
 ները իր խօսքը մտիկ չեն ըներ • կամ անոնք ինչո՞ւ  
 ննական հարիւր տարի ապրեցան չըսիր տէյի ա-  
 պըստամբութիւն կը հանեն : Մանաւանդ՝ թէ որ  
 Մովսէսը իր խելքին եկածին չափ անոնց տարեքը  
 երկընցուցած ըլլարնէ՝ թշնամիները այն ատենը ոտք  
 կելէին , և ստախօս է ըսելով կը խայտառակէին և  
 իշխանութենէն կը ձգէին • քանզի Մովսէս՝ իրեն

Ծ. : (1) Ասանկ կըսեն Բեթօ և Քալմէ Ֆրանսըզ  
 քահանայները , և Ըշըր Ինկիլիզ եպիսկոպոսը :

Իշխանութիւնը նախանշող է՛վ աղէկ թշնամի ունէր ժողովրդոց մէջ . (տես թուոց . ԺԳ) . և Եզրիպտոսէ ելլող վէց հարիւր հազար հոգիին մէջ՝ հին պատմութիւններու տեղեակ քանի մը հոգի չէր գըտնըվեր չէնք կըրնար ըսել : Մովսէսի պատմածները ասոնց անհամաձայն ըլլային նէ՛ ՚ի հարկէ շշկոց մը կելէր : Եւ Մովսէսի պէս խելացի մարդ մը ասանկ անօգուտ բանի համար իր իշխանութիւնը վտանգի մէջ ձգելը՝ անխոհեմութիւն էր : Ասոնք մէկ դի կեանայ . ամեննալ կը խոստովանին որ՝ հիմակվան գըտնըված պատմութիւններուն ամենէն հինը՝ Մովսէս մարգարէին գրածն է (1) . անոր համար ասոր վը-

ճ . (1) Հնդիկներուն Մընիւ օրէնսդրին գրոցը համար՝ Վիլեամ Զօնէս խմատուն Ինկիլիզը՝ Պրահմաներէն առնելով՝ Մովսէսի գիրքերէն առաջ գըրված կը կարծէ : Բայց Բիմբերթըն աշուն ուրիշ խմատուն մը՝ Քրիստոսէ 1300 տարիի չափ ալեաք է ըսելու զօրաւոր պատճառներ ունենալով՝ Պրահմաներուն սուտ պարծանքին վրան կը խնդայ : Վօլթէօի և անոր հետեւողներուն այնքան ապաւինած Չինաց հնութիւններն ալ սուտ ու փուտ ելան . հիմակվան գըտնըված պատմութիւններնուն ամենէն հինը՝ Քօնֆուձէօ (Վոնփուախոս) փիլիսոփային շինածն է, որ Ք՞է 550 տարի առաջ ծնած է . Վիւձըաֆ անուն Ինկիլիզ մատենագիրը՝ Չինաց Եանկձէօ հեղինակին մէկ խօսքը կը թարգմանէ, որ է այս . « Հին

կայուծիւնը իրմէ ետքը եկող պատմիչներուն վկայ-  
ութիւններէն զօրաւոր է՝ մարդկօրէն խօսելով . և  
իրմէ ետքիւններն ալ որովհետև ջրհեղեղէն առաջ  
եղած բաներուն պատմութիւնը չեն գրած՝ ասոնց  
պատմիչ կը մնայ մինակ՝ Մովսէս : Չինաց պատ-  
մութիւնները՝ իրենց Քօհի անուն թագաւորէն ա-  
ռաջ եղած բաներ կը պատմեն . և նոր ատենի քըն-  
նիչները կը կարծեն թէ՝ ասոնց Քօհի ըսածն է  
Նոյ . քանզի Քօհիին օրը Չինաց աշխարհը ջուրը  
կոխեր է . և բոլոր աշխարհ ջուրը կոխելը՝ Նոյի  
օրը եղաւ կըսէ Սուրբ գերբք : Բայց թէ որ ամէն  
տեղ և ամէն ատեն ջուր կոխելը ջրհեղեղ ընենք  
նէ՝ Նոյերը կը շատնան, և պատմութիւնը կը շփոթի :  
Մանաւանդ՝ նոյն իսկ Չինաց պատմութիւնը Քօ-

---

« Ժամանակներուն պատահմունքները ո՞վ կըրնայ  
« ճանչնալ, որ հաւատալու արժանի պատմութիւն  
« մը ձեռվընիս հասած չէ : Այս պատմութիւն-  
« ներըս կարդացողը չի կըրնար հաւատալ . և  
« քննելով կը հասկընայ որ անհիմն բաներ են :  
« Հին ատենները պատմութիւն չէին գրեր :  
« Եւ որովհետև Յին ցեղին առաջին կայսրը հին  
« ժամանակաց վրայ պատմող գերբքերը բոլորն ալ  
« ժողովեց երեց . հիմայ առասպելները պատմութիւն  
« տեղ ինչո՞ւ մըտիկ պիտի ընենք » : Եւ այս  
ըսած կայսրը՝ Քրիստոսէ երկու հարիւր տարի  
առաջ է : Մովսէսէ առաջ գըրված պատմու-  
թիւնները հիմայ մէկ տեղ մըն ալ չկան :

հիմն ասեմք եղած հեղեղին համար՝ ինն տարի քը-  
շեց կըսէ . և Քօհի՝ ջուրերուն առաջը բանալով և  
եղէրքները թումբ շինելով՝ երկիրը ջուրերէն ազա-  
տեց . որ Նոյեան ջրհեղեղին պատմութենէն շատ  
տարբերութիւն ունի :

Մովսէսէն զատ ուրիշ պատմիչները՝ ջրհեղեղէն  
առաջ եղած մարդոցը համար բան չգիտնալով՝ տա-  
րիքնին ալ չգիտեին . և ջրհեղեղէն ետքը մարդոցս  
կեանքը կարճընալը՝ Մովսէս ալ կը վկայէ : Բայց  
որովհետև այն ասեմներն ալ հիմակլանէն շատ  
եղև կապրելին մարդիկ, թէ որ հեթանոս պատմիչ-  
ներուն մէջ ասոնց երկարակեցութեանը վրայ վկայ-  
ութի գտնենք նէ՞ Մովսէսին ստոյգ պատմած ըւ-  
լալուն է՞ փ աղէկ մեծ զօրութիւն կուտայ : Եգիպ-  
տացւոց հին արձանագիրներուն մէջ՝ իրարու ետեւ  
շատ մը թագաւորներու անուն կայ՝ որ ոմանք Աճ  
անունով ալ կը յիշվին . և ասոնց միայն թագաւո-  
րութեանը հարիւրաւոր տարիքներ կուտան : Գիտ-  
դորոս Սիկիւլացի հին պատմիչը ասոնք կարգալով՝  
անանկ կարծիք ըրած է որ՝ ասոնց տարիքը մէկ մէկ  
լուսնական ամիս պիտի ըլլան (1) : Ուրիշ հին ազ-  
գաց աւանդութիւններուն մէջ ալ ասանկ երկարա-  
կեաց մարդիկ կը պատմըվին . և Վարրոն Հռոմացե-

Ծ. : (1) : Խորենացին ալ այդպէս կը կարծէ .  
« Այլ և ոչ որպէս Եգիպտացիքն զլուսնականսն  
« հաշուին ծագմունս . . . եթէ տարիս որ վարկ-  
« ցի » (Պատմ. ն . 4) :

ցին ասոնց համար ալ կըսէ որ՝ հնար է որ ամիսը տարի մը սեպած ըլլան։ Աղովրոս անուն թագաւորի մը համար Քաղդէացւոց զիւքերը կը պատմեն եղեր որ՝ երեսուն և վեց հազար տարի միայն թագաւորութիւն ըրաւ։ Ասոր վրայ Դիոդորոսի և Վարրոնի հաշիւներն ալ ընե՛քնէ՛ չափազանց շատութիւն կայ․ քանզի միայն թագաւորութե՛ր երեք հազար տարի տալու կըլլանք․ որ նահապետաց մը ըման հազար տարի ալ ապրող չիկայ։ Վօլթեուեան փիլիսոփայները՝ որ մէկ կողմէն նահապետաց երկար ապրիլը չեն ընդունիր, և մէկ կողմէն՝ աշխարհս Մովսէսին ցըցուցած ասենէն շատ հին է կըսեն ։ Աղովրոսի երեսուն և վեց հազար տարին ձեռքէ չի հանելու համար վարպետութիւն մը բանեցուցած են․ կըսեն որ՝ Աղովրոս մէկ մարդու մը անուն չէր․ այլ մարդուն անունով անոր յաջորդները կը զուց-վէին․ ինչպէս հին Եգիպտացւոց թագաւորները՝ Փարաւոն ։ և Աղէքսանդր Մակեդոնացիէն ետքը Պաղոմէոս կըսվէին․ և Յուլիոս Աեսարէն ետքը Հռոմայու թագաւորները Վայսր կոչվեցան․ և այլն ։ Եւ այս Աղովրոս ըսված թագաւորներն էին որ՝ իրարու ետեւէ յաջորդելով՝ ամենուն մէկէն թագաւորութիւնը երեսուն և վեց հազար տարի քըչեց ։ Բայց սորվիլ կուզէինք որ այդ գեղեցիկ մեկնութիւնը ո՛ւր գտեր են ։ Պատմութիւն առաջին գըրոջն է Պետրոս Քաղդէացի քուրմը ։ և Աղէքսանդր Բօլիսիսթօն ըսվածը․ ասոնցմէ ստած է Աբիւղենիոս, երեքին զիրն ալ հիմայ չիկայ ։ Բայց

Եւսեբի և Մովսէս Խորենացին և Վեդրենոս՝  
 Աբիւղենոսի գիրքը կարդացեր են . այդ մեկնու-  
 թեանը համեմատ բան մը չեն գրտեր մէջը, և սուտ  
 է ըսելով համարձակ կը հերքեն . ասոնք իրենց գը-  
 տած մեկնութիւնը ո՞ր տեղաց պիտի հաստատեն .  
 կամ սլաւոնական բանի մը վրայ հաղարաւոր տարի  
 ետքը գըտնելված կարծիքը զօրութի կունենայ՞ մի .  
 Ուստի մենք համարձակ կըսեմք որ՝ Աղովրոսի  
 այդքան տարի ապրելը բոլորովին սուտ էր . և Քաղ-  
 դէացիները որովհետև գիտէին որ առաջին մար-  
 դիկը երկար կապրէին, և կամաց կամաց քիչցան  
 տարիքները, մտածեցին որ՝ իրենց առաջին թագա-  
 ւորներուն իրքան շատ տարի տան նէ՞ աղգերնին  
 և թագաւորութիւննին այնքան հին կըլլայ . և հը-  
 նութիւնը ասանկ բաներու մէջ պարծանաց նիւթ  
 մը ըլլալը ամենուն գիացածն է . ուստի այսքան շատ  
 տարի առին . Ուստի կըսենք . Աղովրոսի այսքան  
 տարի ապրելը սուտ է . բայց հիմը ճշմարիտ է .  
 Եգիպտացիներուն պէս ասոնք ալ գիտէին որ՝ հին  
 ստենի մարդիկ շատ կապրին եղեր . Ասանկ աւան-  
 դութիւն Չինաց մէջն ալ կայ . Քօհի ինքնակալն  
 ետքը՝ (որ վերը յիշեցինք) . Նուուա անուն թա-  
 գուհի մը կը յիշվի, որ 130 տարի միայն թագա-  
 ւորութիւն է ըրեր . Յունաց մէջն ալ կայ . և Հո-  
 մերոս՝ Նեսսոր անունով թագաւոր մը կը պատմէ  
 Տրովադայի պատերազմին ատենը՝ որ 300 տարվան  
 է եղեր . Այս պատերազմըս Մովսէսի մեռնելն  
 267 տարի ետքը կը գնեն երևելի ժամանակագիր-

ները . և այն ատենը այոքսն երկար ապրելը շատ  
 հաւանելի չէ . բայց դուն անոր նայել որ՝ Հովերո-  
 սէն 250 տարի առաջ է . և Հովերոս գիտնալով որ  
 առաջին մարդիկ շատ կապրէին՝ Նեստորի՝ ալ 300  
 տարի արվաւ . Եւ ուրիշ տեղ նոյն Հովերոս կը  
 գանկաի որ՝ մարդոց կեանքը առաջկու պէս չի մը-  
 նաց , շատ կարճըցաւ . Յովսէպոս Եբբայեցին ալ  
 որ Եբբայեցւոց հնուԹեանը վրայ գիւրք շինեց ,  
 նահապետաց երկար ապրելուն վրայ խօսած ատենը  
 Յունաց երևելի պատմիչներուն և բանաստեղծնե-  
 րուն խօսքովը սուրբ գրոց պատմութիւնը կը հաս-  
 տատէ : Բերած վկայներուն մէկն ալ՝ որ է Եսի-  
 դոս բանաստեղծը , Հովերոսի ժամանակակիցն է .  
 Ասանկով օտար աղգաց մէջ գըտնըված հին աւան-  
 դութիւնն ալ Մովսէսի ըսածին համեմատ՝ նահա-  
 պետաց երկար ապրելը կը վկայեն նէ , տեսնենք որ  
 բնական գիտութեանց ճանչցըված կանոններուն ալ  
 կը համեմատով մի մարդոյս երկար ապրելը : Հիբոկ-  
 րատ , որ մեծ իմաստասէր էր , և ալէկ բնագէտ , և  
 ճարտար բժիշկ (1) . մարդըս ինքը զինք առողջու-  
 Թեան մէջ պահելու համար արված կանոններուն  
 գիւրքին մէջը կըսէ որ՝ մարդոյս իրեն կութեանը  
 մէջ կենաց սկիզբ կայ , անանկ էակ մը՝ որ ինքնին

Ծ. : (1) Հիբոկրատոյ ճարտարութիւնը այնքան  
 զարմանալի է՝ որ երկու հազար հինգ հարիւր  
 տարիի մօտ է՝ մինչև հիմայ ամէն բժիշկ անոր  
 կը հետևին :

կենդանի է , և մարմնոյն հետ միացեալ ըլլալով  
անիկայ կը կենդանացընէ : Բայց կենդանութեանը  
չափ դնող պարագայները իրմէն դուրս են : Մար-  
մինը կենդանի մնալու ընդունակ ըլլալու համար՝  
դուրսէն բաներ պիտի ընդունի և իրեն հետ միա-  
ցընէ՝ կերակուրը ուտելով . ջուրը՝ խրմէլով . և օդը՝  
շնչելով : Թէ որ մարդս ու անոր սնունդ արվող  
նիւթերը ամէն ատեն իրարու հետ մէկ անփոփոխ  
համեմատութի՛ն ունենային նէ՝ մարդ ամենեին կա-  
րօտ չէր ըլլար կերակուրներուն իրեն վրայ ներ-  
գործելուն չափ դնել : Բայց մարդոյս խառնըված-  
քին փոփոխութիւն արվող ուրիշ պատճառներուն  
հետ՝ օդը և ջուրը և գըրանըված երկրին կլիման  
(արդը) կը խառնըվին . տարւոյն եղանակները և  
օդոյն փոփոխութիւններն ալ մէջ կը մըտնեն : Հի-  
բոկրատոյ այս ըսածին նայելու ըլլանք նէ՝ մար-  
դոյս իրեն կազմութեանը նայելով անմահ ըլլալը  
աւելի դիւրին էր՝ քան թէ մահկանացու ըլլալը .  
ինչպէս որ ջուրին աւելի դիւրին է միշտ վազելը՝  
քան թէ վազելէն դադարիլ և հօտիլը : Վազելը իր  
բնութեանը աւելի համեմատ ըլլալով ինքնիրեն կը  
վազէ . առաջը արգելք մը ելէ նէ կը կոյնի : Ասոր  
նման՝ մարդոյս իր բնութեանը աւելի համեմատ  
պիտի գայ ասորիլը՝ քան մեռնիլը . քանզի հոգին՝  
որ մարմնոյն կենդանութեանը պատճառ է , մարմինը  
միշտ կը հոգևորէ և կը շարժէ . մարմնոյն վրայ դըր-  
սէն մէկ ներգործող մը ըլլալու է՝ որ հոգւոյն շարժ-  
մանը չի հնազանդի . և մահ ըսածնիս ոյս է :



Ասանկ պատճառ մը պատահելու՝ և մարդոյս մարմնոյն գործարանքը հոգւոյն շարժիչ զօրութիւնը դէմ դնել տալու համար՝ քանի՞ տարի կըրնայ յատկացընել Ֆիզիքայ գիտցողը և բժիշկը և քիմիագէտը և փիլիսոփայն։ Թէ որ ուղիղ տրամաբանել գիտէ նէ՝ ասոր ժամանակ չի կըտրուի . ինչպէս որ մէկը մեզի հարցընէ որ Քեաղըտխանէին գետակին ջուրը վազելէն դադրելու և հոտելու քանի՞ տարի կուզէ, պատասխան չի տրուելէն զատ՝ հարցընողին խելքին վրայօք ալ՝ արդեօք ամբողջ է մի պակասձ է մի տէյի մէկ կասկած մը կըմըտնէ միաքերնիս։ Արտենք որ՝ ջուրին իրեն մնայնէ՝ միշտ վազելու վրայ է . օտար պատճառ մը վրայ գալու է որ վազելը դադրի, և այս պատճառըս կարելի է որ բնաւ չգայ . կարելի է որ մէկ տարիէն կամ մէկ օրէն գայ։ Մարդոյս համար ալ ինչո՞ւ անանկ պիտի չըսեմք։ Բայց խօսքերնիս աւելի դիւրին հասկըցընելու համար հարցմանքը ուրիշ կերպ ընեմք։

Վարպետ մէքենագէտ մը՝ ժամացոյցին մջի գործիքնէրը շարժող երկաթին երկայնութիւնը և կարծրութիւնը և ուրիշ պարագայները իրարու հետ համեմատելով և հաշուելով կըրնայ վճռել որ՝ այս ժամացոյցը 32 ժամ կը բանի . անկէց ետքը կը կայնի։ Մարդոյս ոսկորներուն և ջիղերուն և մկանայնքներուն մջ, կամ արեան շրջանին կամ շնչառութեան գործիքներուն կամ կերակուրը մարտելու գործարանին մջ անանկ մէկ նշան մը ունի՞մք մի գուշակելու՝ որ այս մարդըս 60 կամ 80 կամ 120

տարի կապրի , անկէց ետքը կը մեռնի : Պըւտար-  
քոս՝ որ իմաստուն պատմիչ և իմաստասէր և բազ-  
մազմուտ մարդ մըն էր , փիլիսոփայական հանդար-  
տութեան վրայ գրած գիրքին մէջ խնդիր մը կը յա-  
րուցանէ . ինչէ՞ն է որ կըսէ՝ Եթովպացիները 30  
տարվան հասնիննէ ծեր կը սեպվին . Պրէթօնները  
(1) մինչև 120 տարի կապրին : Եւ պատասխա-  
նին՝ Հիբոկրատոյ ըսածին նըման՝ օդոյն և կիւ-  
մային և ջուրին տալէն զտա՝ ուրիշ պարագայներու  
ալ կուտայ . որ պազի տեղ պատահելով մարդոյս  
կեանքը կը մաշեցընեն կըսէ , և պազի տեղ ասոնք  
չըլլալէն զտա ասոնց հակառակը կըլլայ . և կենաց  
երկարութեան պատճառ կուտայ : Ասիկայ ամենան  
ալ խելքը հասնելու՝ և դիւրաւ հաւատարու բան  
մըն է . և որքան որ երկարակեցութիւնը հիմա առաջ-  
նոյն նման չկայնէ՝ գաղափարը մեր մտացը մէջ  
կայ . չէ՛ թէ երկայնակեցութեան , այլ բընաւ չմեռ-  
նելու : Մէկ մարդ մը որքան ծերութեան հասակին  
մեռնինէ ծեր էր՝ անոր համար մեռաւ ըսել չու-  
նիմք . և մէկը ըսելու ըլլայնէ՝ նոյն հետոյն անոր  
կը հարցընեմք . սա մարդըս վերջին հիւանդութիւնը  
մէջ ինկած ատենը վարպետ բժիշկի մը ձեռք իյնար  
նէ չէ՞ր մի ապրեր . և պատասխանին կուզեմք որ  
կապրէր ըսեն : Ասիկայ տարիքի սահման մը չունի .

Ճ. : (1) Քրահայի արեմտեան կողմը՝ հիմակիան  
Քինխթէն և Մօռպիհան գաւառներուն բնա-  
կիւներն են :

եասուն տարվան մարդուն ինչպէս կըլայնէ՝ 130  
տարվան մարդուն ալ անանկ կըլայն:

Եւ յիրաւի, ձերութենէ մեռնիլը ի՞նչ ըսել է:  
Ներսի գործարանաց մանր և բարակ և կակուղ մա-  
սունքները ետեւէ ետե կարծրանալով՝ ոմանք ար-  
եան շրջանը պիտի խափանեն կամ ծանրացընեն •  
ուրիշները արիւնին ճամբոյ պիտի չի տան՝ որ բա-  
րակ երակներուն ամենուն մէջն ալ մըտնելով մարմ-  
նոյն ամեն կողմը երթոյ և սնուցանէ (1) • շունչ  
առնել տալու գործարանքները պիտի թունան •  
ստամոքսին քովը՝ առաջինին պէս կերակուր մար-  
սելու զօրութիւն պիտի չի մնայ • և այլն: Այս  
ըսածներըս երբեմն երիտասարդներուն ալ կը պա-  
տահին • բայց անոնց մահ չի պատճառելէն զամ՝  
բժշկութիւն ալ կընդունին • կամ կերակրոյ փոփո-  
խութիւն՝ կամ մաքուր և բարակ օդ շնչել՝ այս հի-  
ւանդութիւններուս դեղ կըրնայ ըլալ կըսեն բը-  
ժիշկները: Այս դեղերըս ձերերուն խեր չընելուն  
պատճառը ձերութիւնը չէ • ուրիշ բաներ կան, որ  
բացատրելը երկար՝ և մեր նպատակէն դուրս կըլ-  
լան • բայց այս ամենէս սա՛ կը հեռացընեմք որ՝ դեղը  
ձերերուն խեր ընէ նէ՝ անոնք ալ պիտի ապրին:  
Ասոր չէ ըսելը՝ հակասական ըլալուն համար ան-

Ծ.՝ (1) ձերերուն կաշին թորշտնելուն պատճա-  
ռը այս է • շատ մը մանր երակներու ճամբոյ  
գոցված ըլալով՝ մէջերնին արիւն չի մըտնել •  
պարսպ կը մնան և կը թռուսին:

հնար է : Եւ այս դեղերըս ինչ կըրնան ըլլալ ,  
 Հիբոկրատ բժիշկը ցըցուց թէ կերակուրը և ջուրը  
 և օդը և կլիմայն պիտի ըլլայ : Ասոնք ամփոփելով  
 կըրնանք երկուքի իջեցընել : Կերակուր ըսածնիս՝  
 խոտեղէն ըսելէ (1) • խոտերը թէպէտ ամէն մէկը  
 զատ սերմ ունին և բնութիւննին զատ է • բայց  
 բուսած տեղերնուն հողին և դիրքին որպիսութիւնը  
 ասոնց բնութեւն մէջ կըրնայ փոփոխութի խօթել :  
 Սխտորը կծու խոտ մըն է • արևի դէմ աւազուտ  
 հողի մէջ անկածը աւելի կծու կըլլայ • Թանձր հողի  
 մէջ բուսածը , մանաւանդ թէ որ տեղը շիտակ ըլ-  
 լայ , և արևը շիտակ վրան չի զարնէ , այնքան կծու  
 չըլլար , թէպէտ երկուքն ալ սխտոր են : Մտադիր  
 երկրագործները ամէն խոտեղինաց մէջ ասոր պէս  
 տարբերութիւններ գտած են : Անանկ է նէ՛ խոտին  
 օգտակար կամ փեսասակար զօրութեանը վրան կը  
 ներգործէ կոր ջուրը և արևը : Քանզի թանձր հող  
 ըսածէս ջուրը հանեանէ՛ աւազ կըլլայ : Արևուն  
 ներգործելն ալ՝ կըլիմաներուն ներգործելը ըսել

Ծ. : (1) Ասոնց միսն ալ ասոնց կարգը դնելք •  
 քանզի միս կապելնին՝ խոտ ուտելով է • և փե-  
 սակար խոտ ուտելով ավրած կենդանիին միսը՝  
 ուտողն ալ կազրէ : Խոտը աղէկ եղած տեղին՝  
 ոչխարին և հորթուն միսը աղէկ ըլլալը յայտնի  
 է • և խըվրոճըլտի և դառնապատի ոչխարներուն  
 տարբերութիւնը՝ միայն արծած խոտերնուն տար-  
 բերութենէն է :

է: Չորն ալ թէ որ ըստ մեծի մասին անձրևէն պիտի գայ նէ՝ օդէն կախում ունեցած կըլլայ . ուստի ամէնը՝ օդ և կլիմայ ըսել կըլլան . և թէ որ օդոյն մէջ եղած փոփոխութիւններուն ալ պատճառ՝ կլիման տանք նէ՝ ամէնը մէկ պատճառի գլուխ կը կապէ . և ասով ալ Պլուտարքոսի խնդրոյն պատասխանը դիւրաւ կը հասկըցվի . որ շատ ապրիլը Պրեթաններուն՝ և քիչ ապրիլը Եթովպացիներուն արվաւ . որ իրարմէ շատ տարբեր կլիմայներ ունին :

Երկարակեցութեան պատճառ ասոնց սրբ տանք նէ՝ մեզի մէկ է : Ելեկէլ անուն Նէմցե փիլիսոփայ մը՝ առաջին ժամանակը օդը ալէկ ըլլալուն կուտայ : և Արևուն տարութիւնը կըսէ, ընդհանրապէս ամէն և բանի կենդանական զօրութիւնը կը բանեցընէ և և կարծընցընէ . երկիրըս իրեն թմբութեան վիճակէն կը հանէ . բարեխառն կլիմայի տակ բնակող և մարդն ալ՝ իրեն բարեբար և օգտակար ներգործութիւններովը կը պատէ : Անոր համար բազմ և նիքի պէս բան մը կըլլայ . որ բոլոր կենսական և ոգիքները կը նորոգէ . և այս տարութեան օգուտը՝ և ամէն տեսակ տարութեան օգուտներէն շատ եվել է : և Լուսինն ալ՝ որ գիշեր ատեն աշխարհիս ընկեր է . և և կերևի որ՝ ասոնց երկուքին վիճակը իրարու և կապված են , և օդոյ մէջ պատճառած փոփոխութիւններուն առիթ և պատճառ մը կըլլայ նէ, ասոր ալ երկրագործութեան ըրած օգուտները քիչ և չէ : . . . (Ասոնք կը ցըցընեն որ՝ երկրիս վրայ և գլանըլած և մարդոյս վրայ ներգործութիւն ունե-

և ցող քաները ամեննալ՝ արեան վրայ ներգործու-  
 և թիւն և ուժ ունին . և մեր կենդանութիւն գլխաւոր  
 և գործարանք եղող շունչերնիս ալ արեան մէջն է  
 և (1) : Տարերաց ներգործութիւնը մարդկային  
 և մարմնոյս վրայ այսքան յայտնի է նէ՝ մարդու ալ  
 և տարերաց վրայ մէկ ներգործութիւն մը չի՞ կրնար  
 և մի ունենալ : Ինն հարիւր միլեօն մարդոց թորէն  
 և ելած շունչը՝ օդոյն մէջը տարածելով՝ մէկ ապա-  
 և կանութեան սկզբունք մը չի՞ կրնար մի ըլլալ  
 և Եւ պատճառ և իրաւունք շունչի՞ք մի ըսելու որ՝  
 և մարդըս քանի որ կալըրլին նէ՝ օդոյն ակըրլին  
 և ալ անոր համեմատութեամբը կըլլայ : Եւ ասոր  
 և փորձը այն կը կարծեմ որ՝ անմիջապէս մարմին  
 և մարմնոյ չի գըրպէլով միայն օդոյ ներգործութիւն  
 և պըրըշկող հիւանդութիւններ կան, որ զօրանալու  
 և և տարածելու համար՝ յարմար եղանակի կը նային :  
 և Աղէկ գիտեմ որ՝ այս ըսածիս չի հաւտացողները՝  
 և մտածեմս թիգական հաշիւներ պիտի հանեն առա-  
 և ջըս, և պիտի ըսեն . աշխարհիս մէջի բնակիչները  
 և քանի հարիւր միլեօն կըլլան նէ ըլլան . աշխար-  
 և հիս բոլոր պատօղ օդը՝ որ այնքան խորանարդ  
 և մղոն տարածութիւն ունի, քիչ բանով չավըրլիր .  
 և մարդոյս շունչը այսքան օդ չի կրնար ավրել  
 և Բայց այս հաշիւըս ուժ ունենալու համար ուրիշ

Ծ. (1) Չձեր արեան շնչոյ խնդրեցից . . . ՚ի  
 ձեռաց ասն զշունչ արեան եղբօր իւրոց խընդ-  
 րեցից . (ճնն . Թ . 5) :

և բաներ ալ կան՝ որ անոնք ալ մըսնեւ լու են հաշուին  
 և մէջ . մարդկան հարիւր սորոս յաջորդութե մէջ  
 և սրբան մարդիկ աշխարհք եկաննէ՝ իրենց ծնած  
 և օրէն մինչև մեռած օրը սրբան մաքուր օգը ներս  
 և առին և ավրածը դուրս արվին , անոնք ամենալ  
 և հաշուելու է : Ի՛նչ որ էնէ՝ ասոր բաւական ա-  
 և պացոյց ունիմք որ՝ աշխարհի արարչութեան առա-  
 և ջին ատենները օգը աւելի մաքուր և ուժով և ա-  
 և ուղջարար յատկութիւններ ուներ : Չբհեղեղին  
 և առաջ եղող մարդոց համար պատմութիւնը ինչ  
 և կը խօսի նէ՝ ինձի անկէց աւելի վկայութի պէտք  
 և չէ . որ միս չէին ուտեր . գինի չէին խրմեր . քանզի  
 և բնութիւննին ասանց օգնութեանը կարօտ ըլլալ  
 և չէր ցըցըներ . ասոնք չէ՛ թէ միայն կենաց երկա-  
 և րութեամբ , այլ և մարմնոց ուժով և մըտքի զօրու-  
 և թեամբ ալ՝ ետքի ժամանակի մարդոցմէն շատ ե-  
 և վել էին : Քանզի տանք իրենց բնութեանը արը-  
 և ված մեծ զօրութիւնը գէշի գործածելով՝ աստ-  
 և ուածային վրէժխնդրութեան արժանի եղան . և  
 և Աստուծոյ տուած պատիւը՝ երկիրըս ավելելով  
 և մարդոց զօրութիւննալ անանկ տկարացոյց որ՝  
 և առաջին վիճակին հետ գրեթէ համեմատելու տեղ  
 և բնաւ չի մնաց :

Չբհեղեղին մէկ գործն ալ՝ գեալինը ավելելը տի-  
 տի ըլլար . այսինքն՝ գեանին ուժը տկարացընելը .  
 և ասիկայ Աստուած յայանի զրուցեց Նոյի . « Ժա-  
 և մանակ ամ մարդոց հասեալ է առաջի իմ . զի  
 և լցաւ երկիր անիրաւութեամբք ՚ի նոցանէ . և ահա

« Էս ապականեցից զնոսա՝ և զերկիր » (Ճնն . 7 . 13) : Եւ իրօք ալ այսպէս ըլլալուն երկու նշան ունիւիք : Առաջին՝ որ ջրհեղեղէն առաջ մարդըս միայն խոտեղէն ուտելով՝ կըրնար առոյգ և առողջ մնալ . քանզի Ադամայ ուտելիք միայն խոտեղէնները տուաւ . « Եւ ասաց Աստուած . ահա աղիկ ետու և ձեզ զամ խոտ սերմանելի . . . որ է ՚ի վերայ ամ և երկրի . և ամ փայտ որ ունիցի յինքեան պտուղ և սերման սերմանելոյ , ձեզ լիցի ՚ի կերակուր » (ձ . 29) : Զրհեղեղին ատենը խոտերուն քով սնուցիչ զօրութիւն առաջնոյն չափ չի մնալով՝ միս ուտելու ալ հրաման ըրաւ Նոյի . (Թ . 2 . 3) : Երկրորդ նշաննիս այն է որ՝ ջրհեղեղէն ետքը ծնած մարդիկը առաջիններուն չափ երկար չապրեցան : Ադամ 930 տարի ապրեցաւ . Արփաքսատ՝ որ ջրհեղեղէն երկու տարի ետքը ծնաւ , և Աստուածաշունչ գիրքը անկէց առաջ մարդ ծնած չի պատմեր , 465 տարի ապրեցաւ , որ ճիշդ Ադամայ կենացը կէսն է : Ադամէն ետքը Ադամէն շատ ապրեցաւ Մաթուսաղայ՝ 969 տարի . Արփաքսատէն ետքը անոր չափ ապրող չկայ : Վենաց ետէ ետև քիչնալը՝ տէս ճնընդոց 4<sup>մ</sup> գլուխը , Նաբոլը՝ որ Արփաքսատէն ութերորդ , և Աբրահամու հօրը հայրն է , 201 տարի ապրեցաւ . և ասկէց ետքը երկու հարիւր տարին հասնող չկայ Յովէն զատ որ Աբրահամէ հինգերորդ էր , և 240 տարի ապրեցաւ ( յովբ . 1<sup>ա</sup> . 16 ) . բայց ասիկայալ Աստուծոյ առանձին շնորհն էր , որ սուրբ գիրքը՝ « Տեղ



և անեցոյց զՅոր) ըսելով կը հասկըցընէ. (ԽԲ. 10) :  
 Փարսչէլսօ անուն Նեմցե բժիշկ մը՝ որ փիլի-  
 սոփայութեան անհմուտ մարդ չէր . և իր ատենի  
 մարդոցմէն ամենէն իմաստուն ըլլալով պարծենալ  
 մը ունէր . աղէկ խորհրդածութիւնով գտաւ որ  
 մարդըս բնասկէս չէ թէ միայն երկայնակեաց , այլ  
 և անմահ ըլլալու տեղ ունի . քանզի իրեն ներսէն  
 մահուան պատճառ ըլլալու բան չունի . դուրսէն  
 վրայ կուգան : Այսբանըս աղէկ մտածութիւն էր .  
 և թէ որ այն ալ մտածէր որ՝ մարդոցս մահը Աս-  
 տուծոց անդառնալի վճիռն է . և մարմինը իրեն ան-  
 մահութիւնը յարութիւնէն ետքը կը վաստըկի , մեծ  
 իմաստասէր ըսվելու արժանի կըլլար : Գէշն այն  
 եղաւ որ՝ Աստուծոց արված գաատկնիքը մոռնա-  
 լով իր բոլոր գիտութեանը ուժովը անմահութեան  
 դեղ փրճարուելու ելաւ . և այս տեղըս սխալեցաւ :  
 Բայց այս ալ մըտքէ հանելու չէ՝ որ՝ սխալիլ ըսած  
 բանին արմատը հարկաւորասկէս ճշմարիտ բան մը  
 պիտի ըլլայ . և պարագայները ամենը չի նայելով  
 նոյն ճշմարիտին ուրիշ ճամբոյ բռնելն է սխալիլը :  
 Փարսչէլսօն շատ առաջ՝ և Քրիստոսի թուակա-  
 նէն ալ 600 տարիի մը չափ առաջ՝ Չինաց երկիրը  
 Լազբիու անուն փիլիսոփայ մը ելաւ , որ Յունաց  
 Եպիկուրոս փիլիսոփային պէս մարդոցս էրջանկու-  
 թիւնը այս աշխարհս աղէկ վայելէն է կըսէր :  
 Ասոր աշակերտները իրենց պարտականութիւն մը  
 սեպեցին մարդս անմահացընելու դեղ գտնել , որ  
 մահուան մտածութիւնը մըտքէն ելլելով անհոգ

երջանկութեամբ կեանք վարեն :

Այս պատմութիւններէս կը հետեցընեմք բնապէս՝ որ մարդոյս ըստ մարմնոյ անմահ ըլլալը՝ իրեն տակը հակասութիւն չի պարունակէր . քանզի մարդս հակասական բանի ետեւ չի կրնար իյնալ : Անանկ է նէ՝ անմահութիւնը գեղը կարելի է ըսողները՝ մարդոյս քանի որ հոգին շարժիչ և կենդանացուցիչ պատճառը կը ներգործէ, և մարմինը անոր ներգործութիւնները ընդունելու գուրտէն արգելք մը չի գըններ, կըրնայ մահուանէ ազատ մնալ տէյի գիտէին . և փընարած գեղերնուն զօրութիւնը այն պիտի ըլլար որ՝ մահուան պատճառ ըլլալու բաները մարմնոյն և գործարանացը վրայ չաղղեն : Ասիկայ հաստատուէն ետքը՝ երկարակեցութիւնը բան մը ըսել չըլլար . և ինչպէս որ մարդ ծընածին պէս մահուան պատճառը վրան կըրնայ ներգործել, նոյնպէս կըրնայ ալ երկար ատեն հեռու մնալ : Ասոնք ընդունելէն ետքը՝ երկարակեցութեան դէմ եղած առարկութիւնները կըլլան ռազմական և ազայական խօսք . և վերջին ըսելիքը՝ "չի տեսած բանիս չեմ հաւատար" ըսելու կուգայ : Ասանկներուն ալ դէմ խօսիլը՝ պարսպ աշխատութիւն է :

Ջրհեղեղէն առաջ եղող մարդոց յանցանքը՝ աշխարհքս ավսեց կըսէ սուրբ գիրքը . « Ետես և տէր Աստուած զամենայն երկիր, և էր ապականեալ . զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ՚ի վերայ երկրի » (ձնն. Գ. 12) : Ուստի պէտք եղաւ որ Ջրհեղեղով բոլոր աշխարհ սրբըլի :

և լրվացիլի : Ասոր վրայ ընկաւ խորհրդածութիւն մը ունիւիք :

Պատիժը միշտ յանցանքին համեմատ ըլլալը՝ Աստուածային և մարդկային արդարութեան համեմատ է : Յանցանքն ալ՝ յանցաւոր մարդուն խելքին կատարելութեւնը՝ և ունեցած տեղեկութիւններուն կը նայի . և ասով հարկ կը լլայ ըսել որ՝ ջրհեղեղէն առաջ մարդոց ըրած յանցանքը չի լրսված բաներ պիտի ըլլան . և այն յանցաւորներուն տեղեկութիւնը և իմաստութիւնը՝ մեր ունեցածներէն շատ ելել պիտի ըլլան : Այս է մտածելու արժանի ըսած բաներնիս : Արդարն՝ Նոյ այս տեղեկութիւններըս ունէր , բայց ծանր յանցանքներուն հաղորդ չէր . ջրհեղեղէն ապրեցաւ : և գիտցածները անոր ցեղին մնացին : Մեր մտաց մէջ մէկ նախապաշարում մը կայ . որովհետեւ մենք մէկ բան մը տեսնելուս ետքը անոր պատճառը կը մտածեմք , և մէկ անգամ գործը տեսնելով ալ պատճառը չեմք կըրնար գըտնել . նախնիքներն ալ մեղի պէս կը կարծեմք . չեմք հասկընար որ՝ անոնք պատճառ մը տեսածնուն պէս՝ այն պատճառէն հետեւած գործերը ամենն ալ կը գիտնային : Հիմակվան իմաստունները կամ գործը տեսնելով պատճառը գըտնելու շատ դժուարութիւն կը քաշեն , կամ պատճառը անօգուտ բանի մը պէս ետ կը ձըգեն . միայն գործերը քննելու կը պարագլին : Այս մըտքովս պաշարեալ մարդիկն են որ ամեն առան կը ըսեն . ” մէկ անգամ մը մտածէ , այս ինչ բանը գիտնալու որքան ժամանակի կարօտ է մարդ ” :

Ո՞րքան ժամանակի կարօտ պիտի ըլլայ . մէկ բոպէն կօզտէ : Թէ որ մարդըս բնական բաներուն միայն մէկ հատին պատճառը ճիշտ գիտնար նէ՝ մնացածները իրար կը քակէին : Արքիմեդէս՝ մէկ Թագի մը մը սրբան սակի և սրբան արծաթ գըտնըվելը՝ առանց հալեցընելու և փորձ բըռնելու՝ միայն ջրագիտութեան կանոնով գտաւ նէ՝ խնդալէն աշխարհք իրեն եղաւ : Հիմայ ասոր գտածը՝ ամեն Մ'աթէմաթիգական սկզբանց գիրքերուն մէջ կը գըտնըվի (1) : և տասն և հինգ տարվան աղու մը հատկընալիքեն վեր բան չէ : Պղատան մէկ տեղ մը՝ մարդուս ինչ բան սորվել աւելի սխալք ըլլալուն վոյց խօսելով կըսէ որ՝ « Ասանկ բաներըս սորվեցընող մը և ըլլալէն ետքը՝ կատարելապէս սորվելը շատ դիւարին է : Բայց մինչև որ Աստուած ասոր ճամբան և մէկին չի սորվեցընէ նէ՝ այն մէկն ալ մեզի չի կըրանար սորվեցընել . (գործք Պղատանի . հատոր . Թ) : Եւ Հիբոկրատ կըսէ . « Ամենին չեմ երկրայիր՝ և որ արուեստները Աստուած շնորհեց մարդոյս : Պօլեմէո ուրիշ կերպ կը խօսի . « Երկաթէ գործիք և շինելու , կամ անոր տեղը լեցընելու համար գործելք մը հնարելու շատ յաջողակ դիպուածներ և և շատ վարպետութիւն և շատ ժամանակ կուզէ : Մէկը Աստուծոյ շնորհքին կուտայ , և մէկը յաջող դիպուածոյ . հարկաւ երկուքին մէկը ըլլալու է .

Ծ.՝ (1) Տես մեծ Թուարանութեան մէջ . (Թղթ . 239 = 244 , տպագր . Վենետ . 1781) :

Քանզի միջին ճամբայ չկայ • բայց խեղացի մարդ մը  
 գրածնիս կարդալով մտածէ նէ՝ Վօլթէնին շուղած  
 հեռառ. թիւնը սխալի հանէ • կամ սխալի ըսէ որ՝  
 աշխարհս տակն աւելայ ըլլալէն և կերպարանքը  
 բոլորովին փոխել և հիմակվան ունեցած կազմու-  
 թիւնը ստանալէն առաջ արուեստներ գըտնըվեր  
 են • և անկէց ետքը մնացեր են • Քանզի Ֆիզիքայի  
 քաջահամուտ մարդիկ աշխարհիս կազմութենէն և  
 մասանցը դիրքերէն և համեմատութիւններէն յայտ-  
 նի նշաններով ապացոյց կուտան՝ որ աշխարհք  
 Մոլսէսի ցըրուցած ժամանակէն աւելի հնութիւն  
 ունենալը անհնար է •

Ջրհեղեղէն ետքը անմիջապէս եկող մարդիկ  
 ամէն հարկաւոր գիտութիւններու և արուեստնե-  
 րու տեղեակ էին տէյի բանաստեղծները մէկ դիէն •  
 կռապաշաներուն քուրմերը մէկ դիէն • հին պատ-  
 մութիւնները • հնոց մնացած արձանները և շին-  
 ուածքները • ամէն աղգաց աւանդութիւնը • և մար-  
 դոյս խեղքը • ամէն ալ միաձայն վկայութի կուտան •  
 այսքան վկայութի դէմ խօսիլ կըրնայ ըլլալ • Բայց  
 խօսողն ալ միայն բերնով կը խօսի • անհնար է որ  
 միտքը ասոնց դէմ գընէ • Անանկ է նէ՝ կը հեռա-  
 ցընեմ որ • մարդիկ չէ թէ միայն գիտութեան վերա-  
 բերեալ բաները եղան • այլ և անոնց գիտութիւնը  
 մերինէն տարբեր • և մերինէն գերազանց էր • Քանզի  
 անոնց գիտութեան աղբիւրը բարձրէն էր • անմի-  
 ջապէս Աստուծակ սորված ըլլալով • Այս գիտնա-

Լէդ ետքը այն ալ դիւրաւ կը հասկընաս որ՝ ի՞նչու  
 համար հին ժամանակը գիտութիւն սորվելը կրօնից  
 հետ խառնած՝ և քուրմերուն յատուկ եղածի պէս  
 էր, և միայն մեհեաններուն մէջ՝ և այն ալ դաւտուկ  
 կը սորվեցընէին. մինչև որ ետքը քուրմերը ավորը-  
 տը կելլով՝ բոլորովին մարեցաւ: Շատ բաներ կայ  
 որ՝ ինչ ժամանակէն ըլլալը մարդ չգիտէր: Հռոմ  
 սուրբ Պետրոսի տաճարին քովը՝ Հռոմայու հին  
 Թագաւորաց գեանի տակ շինել արված ջուրի ճամ-  
 բաները կան, Քրիստոսէ վեց եօթն հարիւր տարի  
 առաջ շինուած, որ մինչև հիմա՝ 2500 տարիէն  
 եզելէ՛ կը մնան. և տեսնողները կը զարմացընեն:  
 Անոնց քովերը ուրիշ հին շինվածքներու տեղեր և  
 մնացորդներ կան, որ ի՞նչ ասեն շինված ըլլալին  
 յայտնի չէ. Ետրուսկեանց կը տըրվի սովորաբար. և  
 Ետրուսկեաններուն համար մեծ և երևելի ազգ  
 կըսէ Եսիոզոս՝ Քրիստոսէ 900 տարի առաջ:  
 Պիւթագորաս Քրիստոսէ 600 տարիի չափ առաջ  
 Եգիպտոս գնաց, և արուսեկին երբեմն արևին ան-  
 դին և երբեմն աս դին երևելուն պատճառը վըն-  
 տըռելով՝ արևուն անշարժ ըլլալը՝ և աշխարհքիս  
 արևուն բոլորակը պըտըտիլը սորվեցաւ. և ուրիշ  
 աստղաբաշխական տեղեկութիւններ ստացաւ՝ որ  
 Պլուտարքոս կը պատմէ Իսիդեայ և Ոսիրիդեայ հա-  
 մար շինած գիւլքին մէջ. և կարգացողը կը զարմա-  
 նայ: Նոյն Պլուտարքոսի՝ Խրախճան եօթմաց  
 իմասանոց ըսված գիւլքին մէջը՝ անանկ նշաններ  
 կայ որ, Եգիպտացիները մտորակներուն հետքը կը

ճանչնային ըսել հարկ կըլայ: Հիները արևուն մէկ  
 ածական մը կուտային . Եօթնալոյս կըսէին . Յու-  
 նարէն՝ (Էբդաբդինա) . այս զարմանալի ածականըս  
 ո՞ր տեղէն սորված էին ասոնք , որ մենք հիմա սո-  
 վորաբար կըսենք՝ Թէ արևուն լոյսը եօթն գըլխա-  
 ւոր գունաց բաղադրութիւն ըլլալը առաջին գընդո-  
 ղը՝ Այդք Նիւթըն (Իսահակ Նեւթոն) անուն  
 Անգղիացին էր , որ երեկվան մարդն է (1) : Եգիպ-  
 տոսի բուրգերը՝ որ Քիրատնթէփէլէրի կըսվին ,  
 երեսնին անխալ արևէլք դարձած է . հիմա այն  
 շիտակութիւնը տալու՝ աստղաբաշխները և երկրա-  
 չափները իրենց ձեռքի գործիքովն ալ էփ աղէկ  
 կը հոգնին . ասոնք էրը շինված ըլլալնին ալ յայտնի  
 չէ , ինչ բանի համար ըլլալնին ալ . Թէ որ մէկը ել-  
 լէ՝ Այդէնին շինած քաղաքին մնացորդն է ըսէ նէ՝  
 դրախտին տեղը՝ չըստուգած իբէն սուտ չեմք կըր-  
 նար հանել . բայց ջրհեղեղէն առաջ շինված ըլլալ-  
 նին էփ աղէկ զօրաւոր պատճառներով կը հաստա-  
 տէ Փարիզու մէջ Բնական պատմութեան դասատու  
 Տէղդիւի անուն իմաստունը . որ հոս դնելը երկար  
 կըլայ : Արուեստները իրարմէ չեն զատվիր . մէկ  
 ժամանակ մը որ արուեստներուն մէկը կամ մէկ քա-  
 նին ծաղկեալ կերևի , մէկալները ետ մնացած չեն  
 ըլլար : Այն մարդիկը՝ որ 3000 տարի շարունակ  
 բաց տեղը արևի անձրևի տակ մնալով չի նետելու  
 դոյներ հնարեր են . ահագին և սոսկալի կտոր քա-

Ծ. : (1) Իսահակ Նեւթոն մեռաւ 1727 ին :

բեր 600 սոնաչափ բարձրութիւն հանելու ճամբան գլտեր են , որ հիմակվան Մէքանիքա գիտցողներուն բանը չլլալը իրենք կը խոստովանին . պորփիւր (սօմախի) քարի վրայ անանկ թռչուններու պատկերներ ճիշդ փորել որ՝ Պրուս և Հասէլքիսթ ճանապարհորդները ինչ տեսակ թռչուն ըլլալը հասկըցեր են . ասո՞ք ընող մարդիկ հարկաւորապէս ուրիշ արուեստներ և ուրիշ բաներ ալ գիտէին , որ մենք չեմք գիտեր : Ափրիկէն Ասիա անցնինք նէ՝ Բէլայ շինած պատերուն մնացորդները կը տեսնենք Պաղտատու արևելեան հիւսիսային կողմը Պիրի Նէմրուտ ըսված տեղը . որ գեանին երեսը ջրհեղեղին թացութենէն աղէկ մը չի չորցած իքէն շինեց . քաղաքին մէջ ասաղաբաշխական դիտողութիւններու նշաններ կը տեսնենք :

Հիմայ փիլիսոփայներուն ըսած անկրթութիւն և բարբարոսութիւն ժամանակը՝ որ կրթութիւն ժամանակէն առաջ ըլլալ հարկէ կըսեն նէ՝ ուր դնենք : Ժամանակ մի կը պակսէ կըսեն : Այո՛ շատ ժամանակ կը պակսէ կոր : Զրհեղեղին ժամանակը առաջնիս ելածին պէս՝ մեր երևակայութեան առաջը պատ կը քաշէ կոր (1) : Եւ բնական աշխարհագրութեան

Ճ. : (1) Անհաւատները ատեն ատեն ջրհեղեղն ալ ուրանալու ելան , բայց իրենց ամբարտաւանութիւննին չի ներեց որ ասանկ յայտնի բան մը ուրանալով՝ հասարակաց առաջը տգէտի անուն վաստըղին և խտիք ըլլան : Վըլթեա համարձակ



և երկրագիտութեն վերաբերեալ գիտողութիւնները՝  
 ջրհեղեղ եղած ըստ ը ստուգելէն զատ՝ Էրբ եղած  
 ըստն ալ յայտնի կը ցըցընեն։ Լուկրեատո բա-  
 նաստեղծն ալ՝ որ հեթանոս Հռոմայեցիներուն մե-  
 ջէն անասուած ելաւ, մարդկային աղբը շատ հին  
 չըլլալուն վկայութիւն կուտայ, և աւելի ասպացոյցի  
 կարօտութիւն չունեցած իբէն՝ ասպացոյց մըն ալ այն  
 կը գըտնենք որ՝ ամեն ազգի պատմութեան սկիզբ՝  
 Քրիստոսէ մինչև 800 ասրի առաջ կերթայ, ան-  
 կէց հին սոցոգ պատմութիւն չկայ։ Աստուածա-  
 շունչի չի հաւատացող մարդիկ՝ կերթան անանկ բա-  
 նի մը կը հաւատան որ՝ խելացի մարդուն խնդալը  
 կուգայ։ Չիններուն քովը չորս հինգ հազար տարի  
 առաջ շինուած աստղաբաշխական աղիւսակներ կան  
 եղեր։ Չիները իրենք աստղաբաշխական սկզբունքը  
 Եւրոպայէն դացող Ճիզվիթ քարոզիչներէն սոր-  
 վեցան իրենց Քանկհի կայսեր օրը, անկէց առաջ  
 ունեցածնին ի՞նչ էր։ Ասոնց ամենը մէկ խօսքով  
 գոցեմ։ Քանի որ Կալիաթա Ինկիլիզները դպրա-  
 ասուն և ուսմանց ընկերութիւն բացին՝ և Հնդկաց

---

չէր ուրանար, այլ կը ծաղրէր։ Իրեն կուսակից-  
 ներէն Պուլանժէ՝ հին ազգաց աւանդութիւն-  
 ներով ջրհեղեղին ստուգութիւնը հաստատեց։  
 Եւ հաւատացեալներէն Տըլիւք և Քիւլիէ և  
 Պրօնեառ՝ երկրագիտութեան և բնական պատ-  
 մութեան կանոններով հաստատեցին, հիմայ ամեն  
 կողմէն աներկբայեւ ճշմարտութիւն է։

Հին պատմութիւնները քննեցին , և ամէն բան ե.  
րևան հանեցին , յայտնի եղաւ որ Հնդկաց հնու-  
թիւնները փուճ բաներ են եղեր : Աշխարհացոյցի  
մէջ նայելով ալ կը հասկընաս որ՝ մարդկութեան  
սկիզբը Տիգրիս և Եփրատ գետերուն գլուխը , և  
Նոյի նաւն դուրս ելլելը Մասիս լեռան վրայ  
դնելու ըլլանք նէ՝ մարդիկ այս դին այն դին տա-  
րածված ատեննին առաջ Հնդկաստան՝ և անկեց  
ետքը Չինաց երկիրը պիտի երթան . Հնդկաստան  
բնակութիւնը նոր ըլլայ նէ՝ Չինաց երկրին բնա-  
կութիւնը աւելի նոր պիտի ըլլայ :



### Յ Օ Դ Ո Ի Ա Ճ . 3

Կառավարութիւնն ու օրէնքը որկէց և  
էրբ հաստատուեցաւ :

Մ. յս խնդիրըս լուծելէն առաջ այն հասկըցը-  
նեւ պետք է որ՝ մարդըս ընկերական կենդանի է ,  
անանկ որ՝ ընկերութենէ դուրս մարդ չի կրնար  
ապրիլ : Սուրբ գրոց « Ո՛չէ բարւոք մարդոյդ  
միայն լինել » ըսածը՝ (Տնն. ք. 18) ծնած օրեր-  
նուս մինչև մեռած ատեննիս կը ակնենք , և ամէն  
մարդու կեանք՝ ասոր մէկ փորձ մը նէ :

Անասուններուն ճագերը կաթէն կը արեւնուն պէս՝ իրենց մօրմէն կը զաօվին. իրենց կերը իրենք կըրնան ճարել. թշնամիէ իրենք զիրենք կըրնան պաշտպանել. ուրիշի օգնութեան կարօտ չեն։ Մարդըս անանկ չէ. տղան երկու տարվան չեղած կաթէն կը կըտրըվի. Բայց ինքն իրեն մնայնէ՝ իրեն ապրուստ դժուար կը ճարէ. իրեն թշնամիները ճանաչելու բնապէս կարողութիւն չունենալով, ինչպէս որ գայլէն փախչիլը՝ գառը ամսըվան մը չեղած իքէն կը սորվի, չի կըրնար իր կենացը թշնամիներէն ալ ինքը զինք ապահովել։ Անասունները իրենց առողջարար և մնասակար խոտերը իրարմէ կը զատեն. եղը և ոչխարը և ձին՝ թունաւոր խոտերը կը ճանչնան և չեն ուտեր։ Մարդըս այս կարողութիւն մեծնալէն ետքն ալ չի կըրնար ունենալ. ամէն օր կըրնանք անանկ մարդիկ գըտնել որ՝ թունաւոր սունկ (մանթար) և մողեսիներ (ողալըրան) և ուրիշ խոտեր՝ անմնաս բան կարծելով և ուտելով մեռած են։ Չափահաս մարդոց քով ասիկայ կը տեսնենք նէ՝ տղայքը ամենեին ընտրութիւն չի կըրնար ընելին յայտնի է։

Կաթէն կըտրած ատեննին խօսելու կարողութիւն մը ստացած և խօսիլ սորված կըլլան. ըսելէ՝ իրենց միտքը ուրիշի մը հասկըցընել. անանկ է նէ՝ մարդոյս նոյն խօս խօսող կենդանի ըլլալը կը ցըցընէ որ՝ ուրիշի մը հետ կըցորդ ըլլալու ստեղծված է. և թէ որ մարդս առանց ընկերութեան կըրնայ կենալ ըսենք նէ՝ անասուններուն մէջ ընկերական կենդանի

ամենևն չենք կրնար գրանել . քանզի հիշ մեկուն  
 ալ բնութեանը և կազմածոյն և բարուցը մեջ մինակ  
 չի կրնալ կենալու նշան մը չենք կրնար գրանել .  
 Աստի՛ ինչպէս որ բանական կենդանի ըսելը մարդ  
 ըսել է . քանզի ամէն մարդ բանական է . և մարդէն  
 զատ իր բնականին մէջ բանականութիւն ունեցող  
 կենդանի չկայ աշխարհի վրայ . նմանապէս ընկերա-  
 կան կենդանի ըսելն ալ՝ գերազանցութեամբ՝ մարդ  
 ըսելու տեղ կրնամք բանեցընել . քանզի ամէն  
 մարդ ընկերական է . և ուրիշ անասուններուն մէջ  
 թէպէտ ընկերական կենդանիներ կան , բայց բնա-  
 պէս առանց ընկերութեան չի կրնալ ապրելու  
 կենդանի չկայ :

Կան անանկ փիլիսոփայներ որ՝ թէպէտ համար-  
 ձակ չեն ըսեր՝ թէ ընկերական ըլլալը մարդոյս բը-  
 նութիւնը յատուկ չէ , ընկերութենէ դուրս ալ մարդ  
 կապրի . բայց իրենց ուրիշ գրութիւնները հաստա-  
 տելու համար՝ սեպենք թէ մարդս ընկերական վի-  
 ճակէ դուրս է ըսելով՝ նոր դրութիւն մը կընեն :  
 Ասանց ըսլածքը՝ սեպենք թէ մարդս բանական  
 կենդանի չէ , կամ սեպենք թէ մարդս մարդ չէ ըսե-  
 լու պէս է . բայց իրենց ըսածին այս սեպելովըս  
 հաստատութիւն գրանելու կարող ըլլաննէ՝ զեն  
 չունի . բանն այն է որ՝ այս հաստատութիւն ալ չեն  
 կրնար գրանել . քանզի մարդ ըսելը՝ բանական  
 ըսել է . և բանականութիւնը բանիլը և բացվիլը՝  
 ընկերութեան մէջ և ընկերութեամբ կըլլայ . ընկե-  
 րութենէ դուրս մարդ գրանելվէլն հաստատութի

առնելը՝ բացառութիւնէ ընդհանուր կանոն հանել  
է. մէկ մարդ մը 20 կանգուն բարձրութեամբ տեղէ  
կնիալ և չի մեռնիլը լըսելով՝ մարդոյս վերէն վար  
առանց վտանգի ցաթկելուն սահմանը 20 կանգունն  
է տէյի ընդհանուր կանոն տալ կը նմանի: Քանզի  
չենք ըսեր որ՝ ընկերութենէ դուրս մարդ գըանը-  
վիլ ամենևին անհնար է, այլ կըսենք որ՝ մարդոյս  
բնականին նայելով՝ հարկը անանկ կը պահանջէ որ  
ընկերութեան մէջ ըլլայ. չեղածները հասարակ և  
ընդհանուր կանոնէ դուրս բացառութիւններ են.  
և որպէս թէ՛ բարոյական կարգի հրաշք է. ասով  
կանոն չառնըվիր. և Ռուսօ և ընկերները՝ որ մար-  
դոյս առաջին վիճակը վոյրենութիւնն է ըսին. աս-  
տոնցմէ իրենց խօսքին հաստատութիւն չեին կըր-  
նար առնել:

Ընկերութեան քանի մը կապ կայ, որ ասոնք չե-  
ղած ընկերութիւն չըլլար. և հարկ կըլլայ ըսել որ՝  
Աստուած մարդըս ընկերական կենդանի ստեղծեց  
նէ՛ ասոնքալ հաստատեց և սորվեցուց: Այս կա-  
պերուս առաջինն է՝ մեծ ու պըզտիկ ճանչնալը, և  
երկրորդը՝ արդարութիւնը: Ուրիշ կապերը այս  
երկուքիս մէկին կը վերաբերին:

Առաջին կապին վրայ խօսելու ըլլանք նէ՛ էն ա-  
ռաջ մէկ խնդիր մը կելէ դեմերնիս. ամեն մարդ  
իրարու հաւասար չէ՞ն մի. մեծ և պըզտիկ ի՞նչ  
ըսել է. բնականն դուրս բաները յաւելուած են.  
և այն յաւելուած բաներով մեծութիւն պըզտիկու-  
թիւն չի հաստատուիր: Այս կարծիքըս անցեալ

դարու մջ Եւրոպա շատ պաշտօնական ունեցաւ, որ  
 Ազատական և Հասարակագետական ըսվեցան. և  
 որովհետև ասոնց՝ մարդկային ընկերութեան մջ  
 մեծ պըզտիկ չկայ ըսելը՝ ուրիշին կամքին հնազան-  
 դելու պարտականութի ազատ մնալով սիրտերնին  
 ուզածը համարձակ ընելէր, անոր համար մարդոյս  
 բնական է հաւասարութիւնը և ազատութիւնը  
 (էկալիթէ և լիպէնթէ) ըսելով, շատ գէշութիւն-  
 ներու պատճառ եղան, և Քրիստոսայի կառավարու-  
 թեան կերպը փոխենք ըսելն իբէն՝ մեծամեծ խոս-  
 վութիւններ հանեցին. և մինչև հիմա այս կարծեա-  
 ցըս պաշտօնականեր պակաս չեն: Մենք առաջ մարդ-  
 կան մջ մեծ պըզտիկ կայ ըսելը՝ ինչ մըտքով հաս-  
 կըցվէլէքը զրուցենք. և ետքը Հաւասարութիւն և  
 Ազատութիւն բռնէրը՝ ինչ մըտքով օրինաւոր ը-  
 լալը հասկըցընենք:

Մէկ մարդ մը մեծ զխոնալ ըսելը՝ անիկայ յար-  
 գել և մեծարեւ ըսելէ. ուստի մեծ կըլլայ մի մար-  
 դոց մջ ըսելը՝ յարգութեան և մեծարելու արժանի  
 մարդ կըլլայ մի ըսելէ: Եւ երբ որ ասանկ մարդ  
 գըտնենք նէ՝ անիկայ ուրիշներէն մեծ ըլլալուն  
 վրայ տարակոյս չենք ունենար: Ասանկ մարդ կը  
 գըտնենք մեզի ամենէն մօտ՝ հայրերնիս: Եւ մտա-  
 ծելով որ՝ մեր տղայ ասենէն ՚ի վեր խնամքը մեր  
 վրայէն պակաս չէ ըրեր, և մեր հիմակվան վայելած  
 կենդանութիւննիս անոր խնամոցը պատուէն է, և  
 ինչ որ ընենք նէ՝ որովհետև մեր կենդանութեանը  
 առեւը պիտի ընենք, որ անկէց առած և անոր պահ-

պանութեան տակը շարունակած եմք, մեզնէ փոխա-  
րեն մը ըրած չեմք ըլլար, իրենմէ ունեցածներնուս  
մէկ մասը իրեն համար անցուցած կըլլանք (1) ,  
ուստի ամէն ատեն անոր երախտեացը և բարերա-  
բարութեանը տակն եմք. երախտագիտութիւն պարտ-  
քերնիս չի վըճարվելու մէկ պարտք մըն է . ուստի  
անիկոյ պատուելու հարկը՝ ամէն մարդոց սրտի մը  
բնապէս տղաւորված ըլլալէն զատ՝ Աստուածային  
պատուիրանքն ալ մեզ ասոր կը պարտաւորէ . (Եւք .  
Ի . 12 : Թ . օր . Ե . 16) : Թե սր հօրերնուս հայրը  
և անոր ալ հայրը կենդանի ըլլան նէ՝ անոնք ալ  
պատուելու և մեծարելու վերոյգրեալ պատճառէն  
զատ պատճառ մըն ալ այն ունիմք որ՝ մեր հայրը  
իրեն հայրը կը պատուէ կոր . և մեր անիկոյ պատ-  
ուելուն մէկ պարտականութեան մասն է որ՝ անոր  
պատուածն ալ պատուէմք : Եւ պատուել ըսածնիս՝  
անոր հրամանին հնազանդիլ է . մենք անոր հրամա-  
նին հնազանդիմք նէ՝ անոր կառավարութիւնը ներքին  
ինկած կըլլամք . ասով կըլլայ հայրերնիս կառավա-  
րող և մենք կառավարեալ . հայրերնիս պէտ՝ և մենք  
անոր հպատակ : Կառավարութիւնը աշխարհքիս մէջ  
միջ հնարեց ակշի հարցընողին ալ ասլու պատաս-

Ծո : (1) Այս է Սիրաք իմաստունին ըսածը .  
« Յամենայն սրտէ քումմէ փառաւորեա՛ զհայր  
« քո , և զհօր երկունս մի՛ մոռանար : Յիշեաջի՛ր  
« զի ՚ի նմանէ ծնար . և զի՛նչ հատուցես նոցա  
« սրտէս նոքա քեզ : (Սիրաք . Է . 29 . 30) :

խանութիս ասոր մեջէն կելլէ . հայրութիւնը մըլ հնարեցնէ՝ կառավարութիւնն ալ անոր գործն է . քանզի աշխարհի մէջ նախկին կառավարիչ հայրն է . և նախկին կառավարութիւն՝ հայրութիւնն է , որ Պօղոս առաքեալը՝ նահապետութիւն կրտէ . (եփես . ք . 15) : Եւ այս մըրքով նոյն առաքելոյ միւս խօսքն ալ կարդարանայ . « Ոչ ուստեք է իշխանութիւն , եթէ ոչ՝ յԱստուծոյ , և որ ենն՝ յԱստուծոյ կարգեալ են . (հռոմ . ք . 1) : Մեկ մարդու մը հայր՝ պատուոյ արժանի է ըսելնուս դէմ զրուցող մարդ չեմ գիտեր որ կենայ . հնազանդելու պարտական չէ ըսողին ալ հարկ կըլլայ ըսել որ՝ անհնազանդութեամբ մէկ մարդ մը պատուել կըրնայ ըլլալ : կամ անհնազանդութիւնն ու պատուելը մէկ տեղ կըրնայ ըլլալ . և այս ալ խելքի դէմ բան է : Եւ հայրութեան հետ պատիւը այնքան կցորդութիւնն որ՝ Աստուած մարդարեւին բերնովը Իսրայէլացիները յանդիմանելով՝ հասարակաց ընդունելի մէկ խօսք մը բըռնածի պէս կը խօսի . « Որդի փառաւոր անէ զհայր , և ծառայ երկնչի ՚ի տեառնէ և իւրմէ . իսկ արդ՝ եթէ հայր եմ ես՝ ո՛ւր է փառքն և իմ . (մատթ . ւ . 6) :

Մարդոյն հօրմէն զստ՝ աղէկ խրատ արժողները և նեղ ատենին ազնութիւն գըանըվողներն ալ յարգութեան արժանի կըլլան . և այս յարգութեանս պատճառ՝ յարգող մարդուն կողմէն՝ երկու կերպ կըրնայ ըլլալ . մէկը՝ երախտագիտութիւն , որ է ըրած աղէկութիւնը ճանաչել . և երկրորդ՝ նախատեսութիւն .



մտածել՝ որ մէկ անգամին անկէց աղէկութիւն տեսայ  
 և նեղ ժամանակիս օգնութիւն գըտայնէ՝ ուրիշ  
 տան ալ կըրնամ գըտնել: Եւ ինչպէս որ հայրը  
 իրեն հայրութեամբը իր զաւակներուն հաւասար  
 ութենէն կելէ, անոնցմէ մեծ կըլայ, նոյնպէս  
 բարերար մարդն ալ իր բարերարութիւնը տեսնող-  
 ներուն հաւասարութենէն կելէ, անոնցմէ մեծ  
 կըլայ: Եւ մարդս բնական և բարոյական տկար  
 ութիւններ ունենալով, և ամէն մարդուն մարմ-  
 նաւոր ուժը և խելքը մէկ աստիճան չըլալով իրա-  
 րու կարօտ ըլլալին հարկ էնէ՝ և կարօտ եղողն ու  
 կարօտութիւնը լեցընողը մէկ աստիճան և իրարու  
 հաւասար են ըսելն ալ անտեղութիւն էնէ՝ մարդ-  
 կային ազգիս մէջ իրարմէ մեծ ու պըզտիկ գըտնը-  
 վիլն ալ բնական է:

Թէ որ յատկապէս կառավարութե՛ն վրայ գրել  
 հարկ ըլլարնէ՝ դիւրին էր ցըցընել թէ որքան կը  
 սխալին այն կենցաղագէտ փիլիսոփայները, որ կը-  
 սեն թէ՝ գլուխ և պետ ընարողը ժողովուրդը և  
 հասարակութիւնն է, որովհետև աշխարհի սկիզբէն  
 մինչև հիմա ասոր եղածը չկայ, և բարոյապէս ան-  
 հնար ալ է որ ըլլայ, ժողովուրդեան խմաց կըտըրվի  
 որ՝ այս անուն թագաւորութեան ժառանգը թա-  
 գաւոր եղաւ, կամ այս որ իշխանը ընտրեցաւ, և  
 ամենն ալ անիկայ կընդունին: Եւ Վօլթէռ ալ որքան  
 սխալեր է ըսելով որ՝ աշխարհքի մէջ առաջին թա-  
 գաւորը՝ բազդը բանող զինուոր մըն էր, չէ՛ մտածեր  
 որ՝ զինուոր էր նէ՝ մէկ թագաւորի մը կամ պետու-

Թեան մը զինուոր էր • քանզի կարգադրեալ կառա-  
վարութիւն չեղած տեղը զինուոր չըլար • և պե-  
տութի ըսածնիս ալ՝ կարգադրեալ կառավարութի  
ըսել է : Աւելի աղէկ կըլար ըսելը • Աստուած աշ-  
խարհքի մէջ որո՞ւ որ հպատակներ տրվաւ նէ՝ առա-  
ջին Թագաւոր անիկայ եղաւ • և այս ալ ս'լ ըլլալը  
քննենք նէ՝ կը գըտնենք որ Ադամ է • քանզի հայր  
ըլլալով և կին և զաւակ և Թոռներ ունենալով  
իրեն առաջին հպատակ իր կինը ունեցաւ • « Առ  
« այր քո դարձ քո, և նա ասիւնցէ քեզ (Ճնն. ք.  
16) : Անկէց ետքը զաւակներ ունեցաւ • որ իրենմէ  
կախում ունենալին և իրեն հնազանդելին յայտ-  
նի է բնասէս : Մենք կառավարութի վրայ երկան  
բարակ խօսելը մէկ դի ձըգելով միայն մեզի պէտք  
եղածները նայինք :

Թագաւորութիւնը առանց օրէնքի չըլար • և  
օրէնքին հիմը՝ արդարութիւնը պիտօր ըլլայ • ամէն  
օրէնք՝ անմիջապէս արդարութենէ պիտի ծագի •  
ուստի հին հեղինակներուն մէջ Օրէնք և Իրաւունք  
և Արդարութի բառերը իրարմէ կախում ունենալով  
երբեմն իրարու տեղալ կը բանին : Անանկ է նէ՝  
կառավարութիւնը էն առաջ հաստատված ժամա-  
նակը՝ օրէնքը հաստատված էր, և մարդոյս մտացը  
մէջ անիրաւութեան գաղափար մըննելէն առաջ՝  
արդարութեան գաղափար մընած էր • քանզի ար-  
դարութիը չի գըտնող և չի գիտցող մարդը՝ անի-  
րաւութիը չի կըրնար գիտնալ : Ասոր համար Ճե-  
ֆէրսըն անուն Ամերիկացի մը՝ որ փիլիսոփայ մարդ

էր, բայց Ազատականներէն էր, նամակներուն մէկին  
 մէջը կըսէ : Թէ որ մէկը աշխարհիս ստեղծված ըլ-  
 լալը ընդդէմի, և խոստովանի որ՝ ամէն բան մէկ  
 պատճառի մը համար եղած է, (ըսել է՝ տեսած բա-  
 ներուն խելք հասցընող մարդը՝) հարկաւորապէս  
 սա պարզ խօսքս ալ պիտի ընդունի, Թէ մարդս  
 ընկերութեան համար ստեղծվեցաւ. և ընկերութիւնը  
 առանց արդարութեան չըլլար. ուրեմն հորի է որ  
 մարդս իրեն գոյացած տանէն արդարութե վրայ  
 ալ պետք եղած ծանօթութիւնը առած ըլլայ :

Օրինաց ամենուն հիմը՝ արդարութե վրայ կապ-  
 ված ըլլալուն համար՝ օրէնքներն ալ մարդոյս Աս-  
 տուծմէ տըրված են. մարդս ինքնին իր վրայ օրէնք  
 չի կըրնար դնել. անոր համար Ռուսոյին ըսածը՝  
 Թէ հասարակաց հաւանութեամբ հաստատված ըն-  
 կերութե պայմանն է՝ որ Օրէնք կըսվի կըսէ, բա-  
 ցարձակապէս սուտ խօսք է : Հասարակաց հաւա-  
 նութիւն ըսելը՝ հասարակաց միութիւն ըսել կեն-  
 Թադրէ, և այս միութիւնս է՝ ընկերութիւն. ընկե-  
 րութիւնը առանց գլուխի չըլլար. գլուխը առանց  
 օրէնքի չի կըրնար կառավարել. ուրեմն օրէնքը ըն-  
 կերութիւնէն առաջ ըլլալով՝ հասարակութիւնը՝  
 որ ըսել է ընկերութե անդամները, իրենցմէ առաջ  
 եղած բանը չեն կըրնար ընել կամ հաստատել :  
 Պայման ըսելը մէկ կողմէն ճշմարիտ է. մարդիկ մի-  
 ացեր են այն պայմանով որ՝ այն դըրված օրէնքին  
 հնազանդին. և այս պայմանս չեղած՝ ընկերութիւն  
 ըլլալը հնար չէ. բայց այս ըսածս ալ Ռուսոյին մըտ-

քին բողոքովին դէմէ (1) : Եւ ասկեց զսա՞ մարդոց դրած օրէնքը ի՞նչ զօրութի՛ կըրնայ ունենալ : Ըսենք թէ ասանկ օրէնք մը՝ գըրված և թղթի վրայ առնրված ըլլալուն համար ուժ կունենայ . բայց միշտ ճշմարտ է որ՝ անիկայ թուղթի վրայ ի՞նչ հեղինակութիւն գրվեցաւ նէ՞ նոյն հեղինակութիւնը անիկայ ավրելու իրաւունք ունի : Եւ ասանկ ըլլալով՝ օրէնքին անբռնադատելի և անփոփոխելի ըլլալը կը կորսըվի : Հիմնական օրէնք ըսվածին էական յաակութիւնը այն է որ՝ մարդ անիկայ ավրելու իրաւունք և իշխանութիւն պիտի չունենայ . ըսելէ որ՝ ամէն մարդէ գերագոյն մէկ հեղինակութիւն մը պիտի ըլլայ անիկայ դընտղը : Քանզի թէ որ օրէնքը դնողը մարդիկ են նէ՞ մարդոց գըրած օրէնքը այն մարդոցմէն վեր ի՞նչպէս կըլլայ , և անոնք ի՞նչպէս կըրնայ պարտաւորել : Հասարակութեան միաբան հաւանութիւնը անհնար է . բայց ըլլայ ալ նէ՞ այս հաւանութիւնս օրէնք չըլլար . քանզի մարդու վրայ պարտականութի՛ն ձգելու ուժ

---

Ծ. : (1) Ուստոյի ծուռ արտաբանութիւնը մարդ շուտով կխաբէ նէ՞ վարպետութիւնը այն է որ , ըսած սուս և մոլորական բաներուն մէջ ճարտարութեամբ մէկ ճշմարտ մը կը խօսի , և անով ամէն ըսածները կը կըլլեցընէ : Ուստի արամաբանութի՛ն աղէկ չի գիտցող՝ և խաբէական ձևերու տեղեակ չեղող մարդուն՝ ասոր գիւրքերը կարդալը վտանգաւոր է :

չի կըրնար ունենալ . հարկաւ այդ օրէնքը բըռնել  
 աալու մէկ գերագոյն իշխանութիւն մը պէտք է :  
 Լօք օրէնքին հաստատութիւնը հասարակաց հաւա-  
 նութե մէջ փընտրուելն իբէն՝ այն գաաւ որ՝ հա-  
 սարակաց հաւանութիւնը եղածը օրէնք ալ չի կըրնար  
 ըլլալ : Քանզի այս հաւանութիւնովս եղածը՝ Վար-  
 գադրութիւն կըլլայ, օրէնք չըլար . գերագոյն մէկ  
 կամք մը պիտի ըլլայ՝ որ մարդիկ անիկայ իմացած-  
 ներուն պէս հնազանդելու պարտաւորին : Հօպպէս  
 անուն ինկիլիզ իրաւագէտը կըսէ որ՝ քաղաքական  
 օրէնքները՝ հասարակաց հաւանութիւն ըլլայնէ՝  
 ուժ կառնեն : Բայց թէ որ շինված և հաստատված  
 և ուժ գըտած օրէնքներուն գործադրութեը պար-  
 տաւորող : և անոնցմէ զատվելը պատժոյ արժանի  
 յանցանք սեպող մէկ ուրիշ բնական օրէնք մը չըլ-  
 լայնէ՝ այս օրէնքներուս ուժ գտած ըլլալը ի՞նչ  
 բանի կուգայ : Արբըռնելք տէյի խօսք աալը և եր-  
 դում ընելը՝ ամեննալ խօսք են , ուրիշ բան չեն .  
 զրուցելը սըքան դիւրին է նէ՝ զրուցածը ետ առ-  
 նելնալ այնքան դիւրին է : Թէ որ օրէնքը դնողը  
 Աստուած է տէյի չի գիտցըվի նէ՝ այն օրինացը  
 պահպանութեանը մարդ չի պարտաւորի . քանզի  
 իրեն պէս մարդու մը դրած օրէնքին ինքը ինչո՞ւ  
 համար պիտի պարտաւորի . իրեն ըրածին և ընե-  
 լուին ուրիշ մարդ ի՞նչ կը խառնըվի : Ուստի ո՞վ  
 որ օրէնքները վերցընել ուղեց նէ՝ օրէնքները հա-  
 սարակաց հաւանութեամբ դըրված պայմաններ են  
 ըսաւ . որ հասարակութեանը կամքը ուղէ՝ և մէնք

Հիմայ այդ պայմանները չենք ուզեր ըսելու կայնին նէ՝ իրաւունք ունեցած ըլլան: Բայց ո՞վ որ օրէնքները բըռնել տալ ուզեց նէ՝ այս օրէնքները Աստուծոյ առի և ձեզի կը սորվեցընեմ կոր կըսեր: Ստորացուց կառավարութեան օրէնք դնող Լիւկորգոսի համար Պլուտարքոս (1) կըսէ որ՝ իր երկրին յարմար օրէնքներ ժողովելու համար ձերմակ ծովին երևելի կղզիները և Յունաստան և Ասիա, և մինչև Եգիպտոս և Հնդկաստան զնայ կըսեն. և ետ դարձած անենը առաջ Գեղիփիս գընաց (2), և հոն պատգամ հարցընելով պատասխանը առաւ, որ Պիւթիա զինքը Աստուծոյ անկէր ըսաւ, և մարդ ըսվելէն աւելի Աստուած ըսվելու արժանի եստէյի գովեց (3): Եւ Լիւկորգոս ուզելով որ աղէկ

Ծ. : (1) Պլուտարքոսի Չուգակչիսք. հատոր, ւ. Թղթ. 153. 156.

(2) Աննավուտուիսի Քասդրի գեղին տեղը՝ Եյնէպատիսի քեօրֆեղին հիւսիսային դիւր ցամաքը քաղաք մըն էր. Այոզոնի կըռատուն մը կար. և բան հարցընողին այն կուռքին կողմէն պատասխան կելլէր, որ հեթանոս փիլիսոփայներն ալ քուրմերու խաբէութիւն ըլլալը գիտնալով կը ծաղրէին: Պատասխան արվողը մէկ աղծիկ մըն էր, որ Պիւթիա կըսէին. տըված պատասխանին Պիւթեան պատգամալ կըսէին, Գեղիփեան պատգամալ:

(3) Յոյանի է որ՝ որովհետև օրէնք դնելիքը

օրէնքներ տայ՝ Պիւթիա ըստ որ անները խնդիր-  
 քըդ ընդունեցին . և քու քաղաքդ ամէն քաղաք-  
 ներէն երևելի պիտի ըլլայ : Հռոմայեցւոց թագա-  
 ւոր և օրէնսդիր Նումայի համար՝ նոյն Պլուտար-  
 քոս աւելի յայտնի խօսքով կը խօսի (1) . Հռո-  
 մայեցիները առաջիկայ խրոխտ և կռուարար մար-  
 դիկ էին կըսէ . որ առաջ այս դիէս այն դիէն ժող-  
 վըվելով բռնութեամբ քաղաք շինեցին , և ետեւ  
 ետեւ պատերազմը պակաս չընելով զօրացուցին :  
 Առանկ մէկ ազգ մը կակուղցընել և խաղաղցընելը  
 դիւրին բան չէ տէյի Նումաս հասկընալով՝ կուռ-  
 քերուն օգնականութեանը ապաւինեցաւ . զոհեր  
 և խաղեր սահմանեց հասարակութե՛ զուարճութե՛ր  
 համար, որ վարքերնին և բարքերնին քիչ մը անուշ-  
 նայ : Երբեմն ալ կուռքերուն կողմանէն ճախորդ  
 լուրեր առի ըսելով՝ սիրտերնին վախ ձգելու բա-  
 ներ կը պատմէր . և ահով դողով լեցընելով աչքեր-  
 նուն որդը կոտրելու և սըմքած պահելու ճամբան  
 գտաւ : Պիւթագորաս փիլիսոփային ալ ճամբան  
 բըռնելով՝ որ իր խօսքը հասարակութե՛ մտիկ ընել  
 տալու համար սուտ հրաշքներ կը կեղծէր , անանկ  
 ըրաւ որ՝ շատը Պիւթագորասի հետ ընտանութե՛  
 ունի կը կարծէին և ժողովրդեան անանկ կը լլեցուց

դիտէր, ասով հասկըցընելու զից որ՝ օրէնք դնելը  
 Աստուծոյ կը վայլէ աւելի՝ քան թէ մարդու :  
 (1) Պլուտարքեայ Զուգակշիռք . հատոր . 1 .  
 Թղթ . 239 = 241 :

որ՝ շատուածուհիներուն մէկը զինքը կը սիրէ , և  
 ատեն ատեն գաղտնի քովը կուգայ . և դրած օրէնք-  
 ներն ալ՝ Մուշկէք ըսված շատուածուհիներէն ա-  
 ռած կեղծեց : Ուրիշ ազգաց օրէնքները ամենն ալ  
 փրնտըռեմքնէ՝ ասանկ կը գըրանեմք : Ամենուն գիտ-  
 ցածն է այն օրէնսդիրն ալ՝ որ Աստուած Գաբրիէլ  
 հրեշտակին միջնորդութեամբը ինձի կը խըրկէ ըսե-  
 լով՝ դրած օրէնքները կը հաստատէր : Սողոն  
 փիլիսոփային ալ դրած օրէնքներուն ուժ տըվողը  
 եղաւ Եպիմեներիդէս Արետացի . որ Աթենացիք՝  
 գլուխնին մեծ վըսանգ մը կոյ գալու տէյի գուշա-  
 կելով և վախնալով ասոր յատուկ մարդ խըրկեցին  
 բերեւ տըվին . քանզի աստուածային բաներու աղէկ  
 հմուտ ըլլալը գիտէին . և մայրը շատուածուհիներ-  
 րուն մէկն է կըսէին :

Առաջ ալ ըսած եմք , և յայտնի բան մըն է որ՝  
 ասանկ բաներու մէջ սուտ մըրանէ ալնէ , բուն ար-  
 մատը սուտ չըլլար . քանզի ճշմարտան է որ մարդոյս  
 միտքը կը համոզէ . սուտ խօսքին մէջը մինչև որ  
 ճշմարտ չի խառնըվի , գոնէ միայն երևոյթքը , այն  
 սուտը հաւատարի չըլլար : Այս տեղ պատմածնե-  
 րուս մէջի սուտերն են՝ Նումայի և Լիւկուրգոսի  
 և Սողոնի՝ շատուածներուն հետ հաղորդութիւն  
 ունենալը կամ անձամբ՝ կամ ուրիշի միջնորդու-  
 թեամբ . ճշմարտան այն է որ՝ օրէնքը միայն Աստ-  
 ուած կըրնայ շինել և տալ . մարդըս ինքնագլուխ  
 ինչ որ շինէնէ՝ օրէնք չի կըրնար ըլլալ . այսինքն՝  
 ուրիշները չի կըրնար պարտաւորել : Ըշմարտան



այն է որ՝ ընկերութիւնը կառավարվելու օրէնք  
 ունենալու է . ուստի որ ազգն որ օրէնք չունի կը  
 կարծրվէր, կամ ունեցած օրէնքը կատարել տալու  
 հեղինակութիւն մը չունենալով՝ օրինաց դործադ-  
 րութիւնը խափանած էր, անոր օրէնք կը դնէին որ՝  
 ընկերութիւնը ծաղկի և կրթութիւն մը առաջ երթայ :  
 Ասոնցմէ ուրիշ ճշմարտութիւն մը նալ կը հետևի .  
 հարկաւորաց և Աստուած իրեն կամքը մարդոյս  
 յայտնած պիտի ըլլայ . այս շնորհունովինէ՛ վերի  
 ըսած խօսքերնիս ամեննալ պարագայ կելլեն . և շն-  
 դունողին կը մնայ մեզի հասկըցընել որ՝ արդարու-  
 թիւն ըսված բանին գաղափարը մեր մտացը մը  
 էր մտաւ . ո՞վ հնարեց, որ ամէն օրինաց հարկաւոր  
 հիմն է . և ամէն մէկ ազգ մէկ տեղ գալով իրենց  
 օրէնք դրած ատեննին ի՞նչպէս եղաւ որ՝ ամեննալ  
 խօսքը մէկ ըրածի պէս ասիկայ իրենց հիմն բըռնե-  
 ցին . բնաւ ազգ մը չկայ որ արդարութենէ դուրս  
 օրէնք ունենայ . գըտնելու աշխատիլը՝ օրէնքէ դուրս  
 օրէնք գըտնել աշխատելու պէս բան մը նէ . ըսել է  
 որ՝ անհնար է :

Հիմա տեսնենք որ ազատութիւն և հաւասարու-  
 թիւն ըսվածնեքը ինչ են , և ինչ մըտքով մար-  
 դոյս հարկաւոր են, և ինչ մըտքով առնելիննէ վե-  
 նաստիար կըլլան :

Ազատութիւն ըսելը՝ ընել ուզածին արգելք չե  
 գըտնելով իր ընելիքները ընել ըսել է : Ուստի ա-  
 զատութիւնը աղէկ հասկընալու համար պէտք է անաջ  
 հասկընալ որ մարդոյս ընելիքները ըսելը ինչ կը

նշանակէ : Քանզի այս բառիս տարտամ և անորոշ  
 նշանակութիւնն է որ՝ շատ ծուռ և անտեղի դրու-  
 թիւններ գլտնելու պատճառ եղաւ : Քաղաքական  
 կարգի մէջ՝ ոմանք իրենց իշխանը փոխելու և նորը  
 ընտրելու իշխանութիւն ունենալը ազատութի սե-  
 պեցին : Բայց այս ազատութիւնս ամէն մարդու չի  
 կրնար ըլլալ . թէպէտ կարելի է որ՝ ամէն մարդ  
 ընտրութիւն ընելու իրաւունք ունենայ, ինչպէս որ  
 Ամերիկայի հասարակապետութեան մէջ, բայց ամէն  
 մարդ այս իրաւունքը չի կրնար վայելել . քանզի  
 հասարակապետութեանը մէկ նախագահ իշխան մը  
 պէտք է . և անհնար է որ 16 միլեօն մարդու խօսք  
 մէկ տեղ գալով՝ մէկ մարդ մը ցըցընեն նախագահ  
 ըլլալու համար . և սով որ անկէց ուրիշը յարմար  
 տեսաւ նէ այն իշխանութեւն՝ իրեն չընտրածը գը-  
 լուխ ընդունելու ստիպվելով՝ իր ազատութիւնը վեր-  
 ցած կըրնայ սեպել : Ուրիշ ազգեր կան՝ որ վտանին  
 դէմք կրելը՝ և ուրիշներուն վտան բռնանալը՝ և  
 ամէն ուղածնին կատարելը ազատութի կը սեպեն :  
 Բայց ուրիշի ազատութեան դպչելով ազատ մնալը՝  
 ազատութիւն չի կրնար ըլլալ . և այս սովորութիւն  
 եղած ակզը մէկ մարդ մընալ ազատութիւն ունիմ  
 տէյի չի կրնալ պարծելէն զստ՝ գերութիւնէնալ  
 գէշ վիճակի մէջ է . քանզի իրմէ զտտ ամէն մարդիկ  
 իրեն թշտափ բռնելով իրեն պաշտպան մէկը պիտի  
 չի կրնայ գլտնել . և իր ինչքը և կեանքը պաշտ-  
 պանելը իրեն պիտի մնայ . անոր համար այս տեսակ  
 ազատութիւնս ընկերութիւնը ցրուելու և մարդիկ

վայրենութեան վիճակը հասցընելու յարմար բան մըն է։ Մոսկովիները՝ Մեծին Պետրոսի օրը մօրութեան նալը ազատութիւն կը սեպելին կըսէ Մօնթէսքիէօ․ ուստի Մեծն Պետրոս մօրութիւն անկէլու հրաման հանեց նէ՝ ազատութիւններնուս դէմ է տէլի հակառակեցան։ Ասոնց պէս՝ ոմանք ալ ուզած ըստերնին հագնելու իշխանութիւնը՝ ազատութի կը սեպեն։ Բայց ասոնք դուրսէն բաներ ըլլալով մարդոյս ինքնիշխան ըլլալուն վրայ նոր հաստատութի չեն տար․ ուստի Ազատութեան նշան ըսելը՝ Ազատութի ըսելէն աւելի կը վայլէ ասանկ բաներուն։

Ազատութիւնը՝ կարող ըլլալ մը կենթագրէ․ ուստի այս կողմէն՝ ազատ ըլլալն ու կարող ըլլալը մէկ բան ըսել են։ Եւ մարդոյս տըրված կարողութիւնը սահման չունենայ նէ՝ գէշի բանեցընելը շատ դիւրին է․ անոր համար անսահման ազատութիւնն ու բռնաւորութիւնը իրարմէ շատ հեռու չեն։ Քանսըղները անցած դարուն վերջին տարիները՝ ազատ ըլլալ ու զելով, և թագաւոր ունենալը՝ իրենց ազատութե հակառակ բան սեպելով՝ թագաւորը վերցուցին․ ասանկով ուզած ազատութիւնին ձեռք ձգեցին նէ՝ այն ատենվան պատմութիւնները կարդալու է որ ինչ վիճակ հասնելին հասկըցի։ Ռօպերտիէա նոր դըրված հասարակապետութեը գլուխ եղած ատենը՝ մարդ մեռցընելու օչինչ բան մը սեպել ըսկըսվեցաւ․ օր չէր ըլլար որ բազմութիւն մէկէն մեռցընելու չի տանէին․ և առանց դատաստանի և քննութեան ըլլալը ասկէց յայտնի

է . քանզի մէկ մարդուն դատաստանը շիտակ տեսնել և մահաստարտ ըլլալը վճռելու համար եփ աղէկ ժամանակ կուզէ . ասոնք ինչպէս կը բնային մէկ օրվան մը հարիւրաւոր մարդու համար մահուան վճիռ տալ : Մանաւանդ որ՝ ամենեւին իրեն վրան կասկած մը չունեցող մարդը՝ յանկարծակի կը բռնէին . և դատարի երես չի ցըցուցած՝ շիտակ բանալ՝ և անկէց գլուխ կը արելու սեղը կը տանէին : Գիտես թէ Աստուած յատկապէս անոր համար բանը այսքան գէշի երթալուն ներեց որ՝ ազատութիւնը անսահման ըլլալով ինչ աստիճան հասնելը Ազատականերուն աղէկ իմացընէ :

Ուստի ազատութեան և կարողութեան սահման որոշելով երեւի իրաւագէտները կը սենն . Ազատութիւնը այն է որ՝ օրէնքին չի պարտաւորած բանը ընելու դրոսէն հարկադրութիւն մը չըլլայ . և ինչ բան որ ընելը օրինաց դէմ չէ նէ՝ այն բանը ընելու խափանում չըլլայ : Եւ այս Ազատութեան հակառակն է գերութիւն կամ ծառայութիւն . ինչ պատճառով կը լլայ նէ ըլլայ :

Հիմակվան իրաւագէտները և փիլիսոփայները միաբան կը սենն որ՝ գերութեան վիճակը հին չէ . և Մօնթէքիեօ կը սէ . « Պլատարքոս Նումայի պատաւութեան մը մեղի կը սէ որ՝ Սատուանոսի կամ « Ասոնոսի ժամանակը ոչ տէր կար և ոչ ծառայ և « քրիստոնէութիւնը այս դարս նորէն բերաւ մեր « երկիրներուն մը » : Եւ Սատուանոս՝ հեթանոսաց շատուածներուն ամենէն հինը , և Գիտի ալ

հայրը ըլլալով՝ Սատուռնոսի ժամանակ կըլլայ հին  
 ժամանակը, և հեթանոսական պատմութեանց նայե-  
 լով՝ Նոյի ժամանակը, քանզի հեթանոսները չաստ-  
 ուածոց կամ դիւցազանց ժամանակ՝ և ոսկի դար՝  
 այն ասեմներուն կըսեն, և հաւանական կը սեպելք  
 որ Առնոս կամ Սատուռնոս՝ Նոյ նահապետը ըլ-  
 լայ, ինչպէս կը դնէ Ինճիճեան Հայր Պուկաս (1) •  
 և ուրիշները, Անանկ է նէ՝ բուն հին ժամանակի  
 կառավարութեանց մէջ՝ գերի վար, գերութիւնը  
 ետքէն մտաւ, ըսելէ որ՝ հին կրթութիւնը ավել-  
 վելէն ետքը այս բարբարոսութիւնս ալ զօրացաւ:

Գերիներուն առ ու ծախքին համար Տօյա (2)  
 կը պարծի որ՝ փիլիսոփայութիւնը վերջացնել տու-  
 աւ, մենք տեսնելք որ փիլիսոփայները գերիներուն  
 համար ինչ կարծիքի վրայ էին, և անկէջ դիւրին  
 կըլլայ հասկընալը որ՝ այն կարծեացը տէր եղող  
 մարդիկը՝ գերիներուն առնելիլ ծախվիլ կըրնային  
 մի արգիլել, Հոմայեցւոց օրէնքը գերիներուն  
 համար կըսէ, « Գերին անձ չի սեպվիր, ինչք կը  
 « սեպվի»: Եւ օրէնք կըսեմ նէ՝ Հոմայեցւոց  
 ազգին հասարակութիւնը ասոր կապիւմ էր, և աս-  
 տուծոց գործ կը կարծէին, և Յունաստանի մէջ գրու-  
 նըված երկեւի օրէնսդիրներուն շինածներէն ժող-

Ճ. (1) Տես Հնախօսութիւն Հայաստանի, հա-  
 տոր, ք. թղթ. 41:

(2) Տես Քաղաքավարութեան հատոր, Բ •  
 թղթ. 188:

ված էր: Ուստի այս կարծիքիս արմատը Յունաց  
մէջ փրնաբաւելու է:

Հոմերոս ըսած է որ՝ « Մէկ մարդ մը իր ազա-  
ւասութիւնը կորսընցուցած օրը՝ իր հոգիին ալ կէսը  
« կորսընցուցած կը սեպվի»՝ Ճօյա՝ որ գերմնե-  
րուն պաշտպանութիւնը փիլիսոփայութեան կը շնոր-  
հէ, այս խօսքիս այժքան կը հաւնի որ, « Հոմերոսի  
« բանաստեղծութիւններուն մէջ գրանւրված խե-  
ւաքցի խօսքերուն ամենէն աղէկը այս է» կըսէ  
(1) • Բայց գոնէ ասիկայ չի բացատրեր որ՝ Հոմե-  
րոսի հոգի ըսած բառը ի՞նչ հասկըցաւ: Թէ որ  
սըրտոտութիւնը հասկըցաւ նէ՝ ամէն ատեն ճշմա-  
րիտ չէ ասիկայ: փիլիսոփայական մըտքով հասկըցաւ  
նէ՝ հոգին պարզ և անբաժանելի ըլլալը դիտնա-  
լով կէսը երթալը և կէսը մնալը ի՞նչ կերպով կըր-  
նար հասկընալ: Բայց պէտք էր այն ալ դիտնալ՝ որ  
ուրիշ փիլիսոփայները այս խօսքըս ի՞նչպէս հաս-  
կըցեր են: Պղասոն՝ Օրինաց գիրքին մէջ կըսէ •  
հին բանաստեղծներուն մէկը ըսած է որ՝ ազատու-  
թիւննին կորսընցընող մարդոց խեղքին ալ կէսը՝  
Գիտս կառնէ: Ըսել է որ՝ ասիկայ այն հին բա-  
նաստեղծ Հոմերոսին ըսած հոգին՝ խեղք հասկը-  
ցեր է • ուստի մարդոց հաւասարութենէն վար կը  
դընէ գերին: Բայց այս ալ իրաւ չի կըրնար ըլլալ  
Հոմերոսի ցինները սրքան խեղքի վերաբերեալ գործ

Ծ.՝ (1) Տէս Քաղաքաւարութեան հատոր, 7,  
Թղթ. 88:

ունէին նէ՝ գերիներուն յանձնած էին : ազատական արուեստից վարժապետները և բժիշկները և նոտարները գերի էին . և յայտնի է որ՝ ասոնց մէկն ալ կէս խելք ունեցող մարդու բան չէ : Ասկէց կը հետեցընէ թէ ինքը՝ և թէ Արիստոտէլ, թէ գերին մէկ հոգի ունեցող ինչք մըն է : Եւ Արիստոտէլ յատկապէս կըսէ որ՝ մարդն ու անասունը իրարմէ ի՞նչ տարբերութիւն ունին նէ՝ ազատ մարդն ու գերին իրարմէ նոյն տարբերութիւնը ունին : Եւ որովհետև իմաստակները Արիստոտէլի ըսածին դէմ կը դնէին՝ Արիստոտէլ անոնց ալ հակառակ կը խօսի . և ըսածնին կը ջրէ (1) : Պղատոն ալ օրէնքներ կը դնէ և կըսէ . մէկ մարդ մը իր գերին ըսպաննելով պատժապարտ չըլար . միայն ըվագովելով մտքը լիլ պէտք է : Ուրիշի գերի սպաննէ նէ՝ գերին ախրոջը գերին գնոյն կրկնապատիկը հատուցանելու է : Բայց թէ որ գերին իր տէրը սպաննէ, թէ և իր անձը պաշտպանելու մտքով ըլայ . այն գերին շարաշար տանջանքներու տակ ըսպաննելու է : Թէ որ գերին սպաննածը օտար մարդ ըլայ նէ՝ ծեծի տակ մեռցընելու է . և անանկով դիմա-

Ճ. : (1) Իմաստակ ըսվածները՝ ճարտասանութիւն արուեստի պէս բանեցընող մարդիկ էին . որ մի և նոյն բանը կը պաշտպանէին և կը հերքէին , և ասիկայ իրենց վարպետութեան նշան մը կը սեպէին : Ուստի ասոնց Արիստոտէլի հակառակիւնն բան մը չենք կըրնար հետեցընել :

նայ չի մեռնի նէ՝ ուրիշ կերպով մը մեռցընելու է ։  
 ողջ պահելու չի դար ։ Ասոնցմէ շատ առաջ՝ Չի-  
 նայ Քօնֆուձէօ կամ Աոնփուաիոս փիլիսոփայն՝  
 որ Քրիստոսէ 550 տարի մը առաջ է ։ Պշատոնի  
 ըսած կարգադրութեանը պէս կը խօսի . գերի մը իր  
 տէրը մեռցընելու ըլլայ նէ՝ անանկ տանջանքով  
 մեռցընելու է որ՝ մէկէն ՚ի մէկ և քիչ ատենի մէջ չի  
 մեռնի ։ Թէ որ տէրը իւր ծառայն մեռցունէ նէ՝  
 ամենևին մարդ ըսպաննած ալ չի սեպվիր ։ Վարելի  
 է՝ որ Յունաց իմաստունները Եզիպոսու և Հընդ-  
 կաստան երթալով անոնց սովորութիւններէն և  
 օրէնքներէն սորված ըլլան ասիկայ . և Չինացիք ալ  
 իրենց օրէնքնին Հնդիկներէն սորվեցան ։ Բայց  
 որովհետև գերութեան կանոնները ուրիշ սկզբունք  
 մըն ալ բանական կառավարութիւն ունին . որ բռ-  
 նաւորը իրեն սարակները ինչպէս կը կառավարէ  
 նէ՝ սարակներն ալ իրենց գերիները անանկ կը  
 կառավարեն ։ այս կողմէն իրարմէ օրինակ առնելու  
 կարօտ ալ չէին . գէշը առանց օրինակի կը սորվովի .  
 աղէկը օրինակի և վարժապետի կարօտ է ։

Նորերը երբ որ միայն փիլիսոփայութեան խոր-  
 հուրդ հարցընելու ըլլան նէ՝ գերութիւնը անիրաւ-  
 է ըսելու կը վախճան կոր ։ Նոյն Մօնթէպիեօ՝ որ  
 քրիստոնէութիւնը ոսկի դարը մեր մէջը նորագեց  
 ըսելը վերը գրեցինք՝ գերութեան իրաւանց վրայ  
 խառն ՚ի խռռն կը խօսի ։ Թէ որ կըսէ սև գերի-  
 ները առնելու ծախելու իրաւունքնիս պաշտպանել  
 ուղէի նէ՝ ըսելիքներըս ասոնք կը ըլլային ։ Եւրոպա-



ցիները Ամերիկայի բնակիչները հասցընէնուն համար հարկ եղաւ որ՝ այն տեղի գետիները բանեցընելու Ափրիկէէն գերի բերեն։ Բայց ասոր կըրնար պատասխան տրուիլ որ՝ Եւրոպա շատ աղքատ մարդիկ կան • անոնք ալ հոն տանիլ բանեցընել և աւուրչէք տալ կըրնար ըլլալ • և ասիկայ չըրին նէ՝ բուն պատճառ ազահուծիւննին է • որ բանողներուն տալու ըստակնին իրենց քովը մնայ։ Այլ և՛ մէկ անիրաւուծիւն մը ընելէն ետքը ուրիշ անիրաւուծիւն մը նալ ընելու հարկը՝ այն գործը անիրաւ գործոց կարգէն դուրս չի հաներ։ Բայց Մօնթէնքիեօին երկրորդ պատճառը զարմանալի է։ Այս գերի եղած մարդիկները կըսէ՝ գլխէն մինչև ոտքը սև են • և քիթերնին անանկ տափակ է որ՝ անոնք մեղքընալը անհնար է։ Բայց ես ալ կըսեմ որ՝ ասանկ պատճառի վրայ չի խնդալ անհնար է • և կերևի որ Մօնթէնքիեօ այս պատճառը յատկապէս՝ սևերը գերի ընել պէտք է ըսողները ծաղրելու համար ըսաւ։ Քանզի թէ որ անոնք մեղի պէս գոյն և քիթ չունենալնուն համար՝ մենք անոնք չի մեղքընալու իրաւունք ունիմք նէ, մեր գոյնն ու քիթն ալ անոնց աչքին տգեղ կերևի • անոնց ունեցած իրաւունքն ալ հաւասար է։ Անոնք ինչո՞ւ համար մեղ գերի չեն բռներ ու իրարու ծախեր • քանզի ուժերնին չօգտեր • անանկ է նէ՝ երկու կողմէն իրաւունքը հաւասարելէն ետքը՝ եղել մնացածը կըլայ բռնուծիւն և ո՛չ իրաւունք։ Բայց այս պատճառը բերողները արդարացընելու համար՝ հասարակաց

սովորութեանը սպաւինելով կըսեն եղեր՝ մարդոյս  
կատարեալ մարդ ըլլալուն՝ գունոյ ճերմակութիւնը  
այնքան սխտանի սեղիված է որ՝ Ասիայի սովորու-  
թիւնը մէկ մարդ մը ներքինի ընել ուզէ նէ՝ սեւ-  
բէն կընէ։ Բայց ասորաւ սպառնառը նոյն իսկ ա-  
ռաջին սպառնառն է՝ սեւբէն գերի կառնէ։ անոր  
համար ներքինին ալ սեւբէն կընէ։ Գերիին գու-  
նոյն չի նայիլը անկէջ յայտնի է որ՝ հին և նոր ժա-  
մանակները ճեմակ ներքինիներալ գըտնըված շատ  
կան։ Բայց մենք ասոնք մէկ դի ձգենք, Մ ժնթնքիեօի  
բուն իր խօսքը նայինք։ և Ժամանակն է որ՝ կըսէ,  
և գերութեան իրաւունքին բուն և ճշմարիտ ըս-  
և կիզբը փընառուենք. և ասիկայալ հարկ է որ՝ իրաց  
և բնութեանը վրայ հիմնած ըլլայ. տեսնենք թէ  
և ասանկ ըլլալու դիպումներ կըրնան մի գըտնը-  
և վիլ։ Բանական կառավարութեանց մէջ մարդը  
և ինքը զինք ծախելու շատ դիւրութիւն կայ. կա-  
ռավարութեան տակ գերի ըլլալը՝ քաղաքական  
և ազատութիւնը կը ոչընչացընէ։ Բէռոի կըսէ որ՝  
և Մոսկովները իրենք զիրենք շատ դիւրաւ կը ծա-  
ւխեն. և ասոր սպառնառը գիտեմ. քանզի ազատու-  
թիւննին ըստակ չընէր։ Աշէմ երկիրը ամեն մարդ  
և ինքը զինք ծախել կուզէ. և երևելի աղնուական-  
և ներուն մէջ հազար գերի ունեցող կայ. այն երկ-  
ւրին երևելի վաճառականները այս գերիներս են.  
և և ասոնք ալ իրենց գերիներ ունին. անոնք ալ զատ  
և գերիի տէր են։ Այս երկիրներըս ազատ մարդիկ  
և կառավարութեան գէմ տկար ըլլալով՝ կառավա-

և բուժե՛ք վրայ բռնացողներուն գերի ըլլալը աւելի  
 և կընտրեն : Պաղի երկիրներ դընտրված գերուժե՛  
 և արդար և օրինաւոր և խելքի յարմար սկիզբը  
 և այս է . և մարդ իրեն օգտին համար իր սրտին սի-  
 ւրած մարդը տէր ընտրելով՝ ասանկ գերուժիւնն  
 և ալ գիւրաւ կը քաշվի : Բայց ասորալ սկիզբը  
 և արմատը անիրաւուժիւն ըլլալով՝ ասոր համար  
 գերուժիւնը իրաւունքի տակ չի մըտներ . մարդիկ  
 իրենք զիրենք կը ծախեն եղեր . այդ մէկ գործ մընէ՞  
 որ իրենց ազատ կամօքը կընեն . բայց այդ պատ-  
 ճառներուն համար ինքը զինք մեռցընողալ կայ . և  
 ինչպէս որ բըռնութիւնով չի կըրնար արդարանալ  
 ինքը զինք սպաննողը , նմանապէս ինքը զինք ծա-  
 խողնալ՝ չի կըրնար արդարանալ . բայց այս սկիզ-  
 բովս երկուքը մէկէն կարդարացընէ Մօնթէսքիւօ .  
 ուրիշ արդար պատճառ մըն ալ այս կը դնէ : Որով-  
 հետև անանկ երկիրներ կան որ՝ չափազանց տա-  
 քութիւնը մարդ կը թուլցընէ՞ որ բանեւ ամենին  
 չուզեր , անանկ տեղի մարդոց բան բանեցընելու  
 համար՝ չի բանողին պատիժ տալ պէտք է : Անոր  
 համար անանկ երկիրներ գերի գործածելը՝ այնքան  
 խելքի դէմ չի գար : Բայց կը հարցընեմ . մէկ մարդ  
 մը բանելով ի՞նչ օգուտ պիտի տեսնէ , և չի բանի  
 նէ՞ զնասը մի՞ պիտի կրէ : Բանելով՝ յապրուստը  
 պիտի ճարէ . չի բանի նէ՞ անօթի պիտի մնայ . կուզէ  
 բանի՞ կուզէ չի բանի . այն իրեն գիտնալու բանն է .  
 այս բանիս հարկադրելը՝ նոյն խակ բըռնութիւն ըս-  
 վածն է . որովհետև օրէնքը հարկ մը չի դընէր անոր

բանեւու : Չի բանի նէ՝ ապրելու համար գողութի  
 պիտի ընէ եղեր . ասոր ալ դէմ՝ օրէնքներ կան , և  
 մէկ մարդ մը գող չըլլայ տէյի՝ գերի ընելը խեղճի  
 մօտ չէ : Չի բանի նէ՝ բանեցընող մարդուն բանը  
 ետ կը մնայ եղեր . կարօտ չեղող մարդուն բանութի  
 ընել բանեցընելու տեղը՝ կարօտ եղողինքը թող  
 գրանէ , անտէք բանեցընէ : Եւ թէ որ իր բանը  
 բուսցընելու համար՝ կարօտութի չանեցող մարդը  
 բռնութեամբ բանեցընելու իրաւունք ունի նէ՝ հա-  
 րուստ մարդիկը իրեն գերի ընելու իրաւունք ու-  
 նեցած կըլլայ . քանզի աստէք բաւական ապրուստ-  
 նին հոգացած և դիզած ըլլալուն համար ամենեկին  
 չեն բանիր . աղքատներուն պէս չեն որ՝ մէկ օրվան  
 ապրուստին չափ բանելն ետքը մինչև իրկուն  
 հանգչի , և միւս օրը նորէն բանելու հարկ ըլլայ :  
 Ասոր համար աստէք ըսելէն ետքը՝ Մօնթէսքիեօ  
 կըսէ . որովհետև ամեն մարդ հաւասար կը ծնանի ,  
 գերութիւնը ընդդէմ բնութեան է (1) : Այս տեղս  
 ալ հանած հետևութիւնը աղէկ , սրտաճառը գէշ է .  
 և այս սրտաճառէս ելած հետևութիւնները ընդու-  
 նելու ըլլանք նէ՝ պիտի կըրնանք ըսել . որովհետև  
 ամեն մարդ հաւասար կը ծնանի՝ իրարու հնազան-  
 դիլը և կառավարութիւն տակ մըտնալը և իրմէ մեծ  
 չանչնալը՝ ընդդէմ բնութեան են : Բայց նոյն  
 հեղինակը ուրիշ տեղ կըսէ որ՝ մարդըս ընկերու-  
 թեան մէջ մտածին պէս՝ հաւասարութիւնը կը

Ծ. : (1) Ողի օրինաց . գր . ծԼ . 4Լ . 5 . 6 . 7 .

տորլի (1) • անանկ է նէ՝ ասկէց ալ հետեցընէ Լպէաք է որ ընկերութիւնը ընդդէմ բնութեան է: Վերի ըսած խորհրդածութիւննիս ասոր չի ներեր ընդդէմ բնութեան ըսելու • և ասով Մօնթէսքիեօին բերած պատճառը բոլորովին կը տկարանայ: Ուստի վերջապէս՝ իրեն բերած պատճառաբանութեանը չի վըստահանալով՝ ութերորդ գլուխին վերջը կըսէ • չըզխտեմ որ այս ըսածներըս ինձի ըսել տրլորը խէ՛ղքս է մի՝ սի՛րտըս է մի: Աշխարհի վրայ բնաւ անանկ երկիր մը չի կայ որ՝ ազատ մարդը բանեցընելու կերպ մը գըտնելը անհնար ըլլայ: Եւ այսքան ստոյգ է որ՝ փիլիսոփայութիւնը գերութեան իրաւունքի դէմ ո՛չ ուժ ունի և ո՛չ ըսելիք:

Հաւասարութիւն ըսվածն ալ՝ արասքին կերպերուն հաւասարութիւնը չէ՝ ինչպէս որ հասկըցան անցեալ դարու վերջի Ազատականները: Որպէս թէ՛ մէկը ո՛րքան ինչք ունենայ նէ՛ մէկալն ալ այնքան ունենայ • իրարմէ հարուստ աղքատ չըլլան: Այս հաւասարութիւնն իսկ բնութիւնը կալօ՛ւ: Ըսենք որ մէկ մարդ մը հազար արտաչափ (տէօնիւմ) տեղ՝ և չորս տղայ ունի • մեռած ատենը տղայքը ամենն ալ իրենց հօրը ընչեցը վրայ իրաւունք ունին • և կը բաժնեն • ամեն մէկը երկու հարիւր յիսունական արտաչափ տեղ կ'ունենայ: Այս չորս եղբարցը մէկը՝ հինգ տղայ ունեցաւ • մէկալը՝ միայն մէկ տղայ մը ունեցաւ • հինգ տղայ ունեցողին

Ծ. : (1) Ոգի օրինաց • ԳԲ • Է • ԳԼ • 3 :

ձեռքը եղած 250 արտաչափ գեղինը տղոցը մէջ  
 հաւասար բաժնը վերով՝ ամէն մէկը 50 արտաչափ  
 տեղ պիտի ունենայ • մեկալին ունեցածը ամբողջ  
 տղուն պիտի անցնի • և ահա մի և նոյն մարդու  
 թոռներ վեց հոգի • հինգը իրարու հաւասար, և  
 մէկը ասոնց հինգին մէկէն հաւասար • ըսելէ՝ ամէն  
 մէկուն հինգին չափ հարուստ • Եւ այս տեղըս հա-  
 ւասարութիւնը ո՛ր կը մնայ (1) : Ճարտարութեն  
 և ուժի կողմանէ ալ հաւասար չըլլալնին յայտնի է •  
 մտայ ընդունակութե՛ կողմանէ ալ հաւասար չեն •  
 միայն մարդութեամբ հաւասար են • ըսելէ՝ ընկե-  
 րական կենդանի ըլլալով, և առանց ընկերութեան  
 չի կրնալ կենալնին • և որովհետև ընկերութիւնը  
 առանց օրինաց չըլլար • առանց օրինաց չըլլալու  
 կողմանէ ալ ամէն մարդ հաւասար կըլլայ : Օրէնքը  
 վերցածին պէս՝ մարդոց հաւասարութիւնն ալ կը  
 վերնայ • քանզի այն ատենը առանձին մարդոց կա-

---

Ծ.՝ (1) Հասարակագեոութեան ոգին՝ հաւա-  
 սարութիւն ըլլալով՝ հարկ կըլլար հասարակա-  
 պեոութեանց մէջ ատեն ատեն գեղինները հա-  
 ւասար բաժնել, և ասով կամ արդարութիւնը կը  
 խափանէր, որ մէկին ձեռքի արդար ըստացուած-  
 քը կառնէին ուրիշներուն կուտոյին • կամ գե-  
 ղինը հասարակաց ըլլալու էր • որ ամէնը հասա-  
 րակ աշխատին, և պտուղը հաւասար վայելեն :  
 Ասոնց երկուքին ալ անտեղութիւններուն վրան  
 իրաւագէտները ընդարձակ կը խօսին :

մօյը աղատութի կըլայ . և ամէն մարդ իր ուզածը  
ընելու ըլալով՝ զօրաւորին կամքը առաջ կը քալէ .  
անոր համար օրէնքը վերցունելով՝ հաւասարու-  
թիւնն ալ . անկրթութեան և բարբարոսութե՛ն դուռ  
կը բանայ :

Առաջին ժամանակները՝ որ գերութիւն չկար ,  
ամէն մարդ իրարու հաւասար էին . ասիկայ հաւաք-  
ընելու համար ապացոյց չուզէր : Մարդիկ ազգ  
ազգ բաժնըվելէն ետքը՝ ամէն ազգի գլուխ իւր  
ազգին միութիւնը պահէլու համար՝ հարկ սեպեց  
ուրիշ ազգերը իրմէ վար սեպել . ասկեց ամէն ազ-  
գաց մէջ տեսակ տեսակ զրուցվածքներ մտան :  
Ինչպէս , Յոյները բոլոր աշխարհի բնակիչները եր-  
կուքի կը բաժնէին , Յոյն և Բարբարոս . և Յոյն չե-  
ղողին՝ Բարբարոս կըսէին . և այս բաժանմունքըս  
ետքը Հռոմայեցւոց մէջն ալ մտաւ : Հրեայներուն  
մէջ կար՝ Հրեայ և Հեթանոս ըսել . և Հրեայ չե-  
ղողներուն՝ Հեթանոս կըսէին : Արաբացիները  
ունին Արեպ ու Աճէմ . այսինքն՝ Արաբացի և Ան-  
կիրթ : Պարսիկները ունին Արի և Անարի . իրենց  
ազգին Արի կըսեն , և ուրիշ ազգերուն՝ Անարի :  
Եգիպտացիները՝ որու մազ չէի և շիտակ էր՝ գոռզ  
չէր նէ՝ կը մեռցընէին . քանզի ասով օտարազգի  
ըլալը կը հասկընային : Հնդկաց մէջ մինչև հիմա  
Պանեան ըսված ցեղը՝ որ հարուստ վաճառական-  
ներ են , ուրիշ ազգաց հետ առուտուրի պատճա-  
ռաւ կենսակցութիւն ընելուն համար՝ անմաքուր  
սեպված են : Չինացիները և Ճափոնացիները իրենց

երկիրը օտարազգի մարդ մը երթայնէ կըստաննեն, ինչպէս որ ատեն մը Կողքիսեցիները (Չերքէզները և Ապաղաները) և Տաւրիք ըսված ազգը (Խը-  
 ուրմա հին բնակիչները) կընէին (1) : Ասանկ սո-  
 վորութիւններուն վրան Ճօյա ընդարձակ կըխօսի,  
 և պատճառներն ալ կըհասկըցընէ (2) : Հին ազ-  
 գաց օրէնադիրներն ալ ասանկ ազգաց խտրութիւն-  
 ներու թոյլտուութիւն տալէն զատ՝ որպէս թէ  
 հրաման ալ կուտային . քանզի ազգայնոց դատաս-  
 տանը ինչպէս կըտեսնելէր նէ՝ օտարականաց նոյն  
 դատաստանը և նոյն իրաւունքը չէր ըլլար (3) :  
 Բայց Աստուածային օրէնքը այդ խտրութիւնը  
 ամենևին չի ճանաչեր . և Մովսէսի ատենը Իսրայէ-

---

Ծ. : (1) Այս երկու երկիրս ալ սև ծովուն ծովե-  
 դերքը ըլլալով հիները Սև ծովուն Աքսիւնու  
 կըսէին . որ հիւր չընդունող ըսել է :

(2) Տէս Քաղաքավարութեան հատոր . ք .  
 Թղթ . 173 = 177 :

(3) Չինաց համար Բաւմա ճիղիթը անոնց  
 կառավարութե՛ գիրքէն առնելով կըսէ . «Օտար-  
 և ազգիները ոչխարներէն տարբեր չեն սեպեր .  
 և անոր համար անոնց պէս կառավարելու է կը-  
 և սեն : Թէ որ մէկը օրինաց գիտութիւնը օտարի  
 և սորվեցընէ նէ՝ մեծ խռովութեան պատճառ  
 և կըսեպեն : Եւ հին թագաւորները ըսած են  
 և որ՝ օտարները անկարգութեամբ բըռնելու է .  
 և հիմայ ալ իրենք անանկ բռնել կընային :



լացիները ուրիշ ազգերէն զատելով՝ իրեն յատուկ ժողովուրդ ըրած իքէն՝ յատկապէս կը պատուիրէ որ օտարներուն նեղութի չի տան . և Չպանդուխտաւն մի՛ նեղես . քանզի ճանաչէք դուք զանձինս և պանդխտաց . զի և դուք պանդուխտք էիք յերկրին և Եդիպտացւոց : (Ելից . ի 7 . 9) : Եթէ յարեցի առ և ձեզ եկ՝ յերկրին ձերուս՝ , մի՛ նեղիցէք զնա : և իբրև զքնակն ձեր լինիցի ձեզ՝ և եկն յարեալ և ՚ի ձեզ : (զևտ . ԺԹ . 33 . 34) : Եւ օտարազգիին իրաւունքը ծըռեցընողին ալ անեծք կը կարգայ . և Անիծեալ որ խոտորիցէ զիրաւունս եկին և որբաւոյ և այրւոյ : (Է . օբ . ի 7 . 17) : Եւ այս խօրքովս յայնապէս օտարազգիին ալ՝ անոնց պաշտպանութեանը կը յանձնըվի . որ ինչպէս որ իրենց ազգէն եղած որբն ու այրին տէր չունենալնուն համար՝ հասարակաց պաշտպանութեան կարօտ էին , նմանապէս եկ ըսվածն ալ՝ որ է դըրսեցի և օտարազգի եղողը՝ յատուկ իրեն պաշտպան չունենալով՝ ամենը մեկէն անոր պաշտպան կըլլան :

Քրիստոնէական օրէնքը՝ Մովսիսականին կատարելութիւն տալով՝ ազգաց խտրութիւնն ալ վերցուց . և Որք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցարուք , և զՔրիստոս զգեցեալէք . չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ և հեթանոսի , ո՛չ ծառայի և ո՛չ ազատի . ո՛չ արուի և ո՛չ իգի . զի ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս և Յիսուս . (գաղատ . 4 . 27 . 28) : Չգեցարուք և զնորն նորոգեալ ՚ի գիտութիւն ըստ պատկերի և արարչին իւրոյ . ուր ո՛չ է հրեայ և ո՛չ հեթանոս ,

և թըրփատութիւն և անթըրփատութիւն, խուժ, դուժ,  
և սկիւթացի, ծառայ, ազատ, այլ ամենայն . և յամի  
և Քրիստոս (կողոս . 7 . 10 . 11) :

Բարբարոս աղքերը կինը երկ մարդուն հաւա-  
տարութենէն զար կը բըռնեն . ժամանակ եղած է  
որ՝ արդեօք կընիկ մարդիկ բանական հոգի ունի՞ն  
մի աէյի խնդիր ելեր է : Քրիստոնեայ չեղող աղ-  
քաց մէջ սըլաըտողներուն ըրած պատմութիւն-  
ները կարդալով կը տեսնենք որ՝ կանայք բնական  
մարդ չէին սեպղեր, ինչք կը սեպղէին . և մէկ մարդ  
մը շատ աղջիկ ունենար նէ՝ հարուստ կը սեպղէր .  
որովհետև աղջիկները ուղողներուն կը ծախէր :  
Ասոր համար Չինաց երկիրը մանչ զաւակ չունե-  
ցող մարդը բնաւ զաւակ չունեցած կը սեպղէ . և  
շատ տեղ աղջիկ ծընինէ՝ ծնողքը մեղքընալով որ  
մեծնայնէ ուրիշին ձեռքը գերի պիտի ըլլայ , կըս-  
տաննեն : Հին ատեններն ալ անոնկ էր . Պղատոնի  
հասարակութեան գրոց մէջ կը կարդացի՞ որ՝ այս  
երևելի և խելացի փիլիսոփայս ալ կինը ընչից կար-  
գը կը դներ . և ինչպէս որ հասարակապետութեան  
անդամ եղողները իրարմէ եվել հարուստ կամ աղ-  
քատ չըլլալու համար՝ ինչքը հասարակաց ըլլան  
ըսաւ , նմանապէս կանայք ալ հասարակաց ըլլան  
ըսաւ (1) : Արիստոտէլ ալ կինը պակասաւոր մարդ

Ծ . : (1) Ասոր գէշ հեռութիւնները հեթանոս  
փիլիսոփայներն ալ իմանալով ըլլալու բան չէ  
ըսին . բայց իրենց ընդունած սկզբունքին ճիշդ


կ ըսաւ . շի մտածելով որ՝ պակասաւոր բանը հարկաւոր չի կըրնար ըլլալ . և մարդկային ազգին շարունակ ակելուն համար ինչպէս որ երիկ մարդը՝ անանկալ կընիկ մարդը հարկաւոր է : Բայց Աստուածային օրէնքը՝ այս անհաւասարութիւնսալ չի շանչնար . Աբրահամ և Իսահակ և Յակոբ և ուրիշները իրենց կանայքը ինչպէս կը բռնէիննէ յայտնի է : և նոր կտակարանին մէջն ալ՝ երիկ մարդու կընիկ մարդու խախը չկայ , և ամէ՛ծը մէկ են կըսէ Պօղոս առաքեալ :

Անանկ է նէ՝ թէ՛ ազատութեան և թէ՛ հաւասարութեան պէտք եղած ծանօթութիւնները սկիզբէն կար՝ քանի՛ որ Աստուածային օրէնքն ու կըթուծը ալըրված չէր . ետքը կըրթութիւնը ալըրվելով՝ անկըթութիւն և բարբարոսութի՛ մըտաւ նէ՝ ասոնք երկուքն ալ անանկ վերցան որ՝ միայն անուննին մընալով՝ այն ալ օտար բաներու գործածվիլ սկսաւ : Քրիստոնէութիւնը գալով՝ առհասարակ ամէն ազգաց մէջ այս երկու բանիս ծանօթութիւնը նորոգեց . և փիլիսոփայութիւնն ալ իրեն օգնական առաւ . քանզի Տշմարիտ փիլիսոփայութիւնը՝ հաւատքին հաւատարմութեամբ կը ծառայէ . բայց փիլիսոփայութիւնը ինքնին ասիկայ չի կըրցաւ ընել . ո՛չ

---

հետեւութիւնն էր . և քանի՛ որ կին մարդը այր մարդու պէս կտարեալ բանական մարդ չի սեպէիննէ՝ այս հետեւութիւնս հերքելու զօրաւոր իրաւունք չէին կըրնար ունենալ :

սուտը՝ որ բան մը նաւ չի կըրնար ընել . և ոչ ճշմարեթաւը՝ որ առանց հաւատաց անկատար և սկար է :



### ՅՕԴՈՒՆԾ . 4 :

#### Պիւրը երբ հնարվեցաւ :

Մարդս իրեն միտքինը քովինին հասկըցընելու համար՝ խօսքը բաւական է . բայց հեռուի մարդուն չի կըրնար այս միջոցովս բան հասկըցընել :

Մարդս գիտէ որ՝ իրմե ետքը աշխարհի վրայ յաջորդներ պիտի ձգէ . անոնց ալ իր գիտցածը սորվեցընելը շատ պիտանի և օգտակար բան է : Իր քովիններուն ալ մէկ բանը անգամ մը ըսէ՛նէ՛ կարելի է որ մտնան . անոնց միշտ միտքը բերելու համար միջոց պէտք էր : Ասոնց առաջինին՝ լեզուն անհնար է որ բաւական ըլլայ . և երկրորդին՝ շատ դժուար է : Աւստի հարկ էր որ լեզուն սեղը բռնող և միտք հասկըցընող միջոց մը հնարվի . և ասիկայ գիրն է :

Այս հնարքիս վրայ ճշգիւ կըսեմք ընդհանուր առածը՝ Թէ Հարկն է ծնող արուեստից . քանզի հարկը գիր հնարելու պատճառ եղաւ . բայց ասիկց ալ կը հեռուցընեմք որ՝ գիր հնարելու հարկը երբ

եղաւ նէ՝ գիրն ալ այն ատենը հնարօրէցաւ :

Հին և նոր ազգաց գիրերը քննութեան առնելով՝ երկու ընդհանուր տեսակ գիր կը գըտնանք . մէկն է՝ Նշանագիր , և մէկալ՝ Չայնագիր կամ Տառ : Նշանագիրը՝ զգալի բաները իրենց նմանութիւնովը կը ձևացընէ . ըսենք թէ մարդ կամ տուն կամ ծառ սիտի խնայընէ նէ՝ ասոնց ձևը կը գրէ . որ ասոնք հասկընալու համար լեզու գիտնալ հարկ չէ . ամէն մարդ մէկ գըրված ծառ մը տեսնէ նէ՝ իր լեզուովը անոր անունը կը բնայ փալ : Եւ ասանկ էին հին ատենը Եգիպտացուց և Չինաց գիրերը . որ ամէն մէկը մէկ մէկ բառ նշանակելով՝ հարկաւորապէս իրքան զգալի բաներ կային նէ՝ այնքան ալ գիր ըլլալու էր : Բայց հնարելն ու սորվեցընելը դիւրին էր : Գործածութե կատարելութիւնը կամ անկատարութիւնը ետքը կը հասկըցընէմք :

Չայնագիրը կամ Տառը՝ որ հինա առ հասարակ կրթեալ ազգաց գործածածն է՝ հնարելը շատ դժուարին բան էր : Քանզի նախ և յառաջ՝ մարդոյն բերնէն քանի կերպ ձայն կը բնայ ելլել նէ՝ անիկոյ գիտելու է . և ետքը անոնց բաղադրութիւնը գըտնելու է : Եւ ասիկայ գըտնելու համար, առաջկուց բաղադրված ձայնը քակել հարկ կը լայ : Ըսենք որ մէկը Աշ բառը լսեց . ասիկայ միայն մէկ գրով ըլլալու բան կը կարծէ . բայց ըսելով կամ մտածելով որ Օշ ալ կը բնայ ըլլալ , Եշ ալ , Աջ ալ , Ափ ալ , յայտնի կը տեսնէ որ երկու ձայն կայ Աշ բառին մէջ՝ իրարու բաղադրած . որ փոխելով նշանա-

կութիւննին ալ կը փոխեն • այս երկուքին զատ զատ գրբեր կը հնարէ : Բայց այս ձայներուս տեղը նշան յատկացընելու խելք ընել՝ էփ աղէկ դժուար բան է • երեք գիծ քաշելով և տակէն մէկ գծով մը միացընելով ա՛ ձայնը նշանակել տալ • և երկու ուղղահայեաց գծով ուղիղ անկիւն մը ձևացընելով • և դագաթնահայեաց գրծին ետևի կողմը սլզգտիկ գիծ մըն ալ կցելով զ՝ ձայնը հանել տալ՝ էփ աղէկ մը տաժութեան բան է • որովհետև այս գրբերըս ամենեին նշանակած ձայներուն նմանութի մը չունին : Ուստի սրբող տեսութեամբ անանկ կերևի որ՝ գիր հնարվելու ատենը առաջ՝ Նշանագիրները հնարված են • ետքը ասոնցմով անդգալի և աչքի չե տեսնըվելու բաները բացատրելու անհնարութիւնը տեսնելով՝ հարկ եղած է այս գիրս հնարել :

Բայց ես կըսեմ որ՝ առաջ Չայնագիրները հրնարված պիտի ըլլան • և ետքը Նշանագիրները : Ասոր դէմ առաջին դուրսվելիքը այս է • Չայնագիրները կեցած իքէն ի՛նչ հարկ կըրնար ըլլալ Նշանագիր հնարելու : Աը պատասխանեմ • կրթեալ մարդոց կրթութիւննին մոռնալը՝ և անկրթութեան լինալը՝ այս գրբերըս հնարվելուն բաւական պատճառ է : Ասիկայ բացատրելէս առաջ՝ իմ ասանկ կարծիք ընելուս պատճառը հասկըցընեմ • կարելի է որ անկէց ետքը արված պատասխանս ալ ինքնին բացատրըլի :

Միայն տեսնըված և տեսնըվելու բանին անունը տալով՝ իօտք չի կատրիք • այն բաները ի՛նչ են՝ և

ինչ ընելու է տէյի բացատրելալ կուզէ որ ամբողջ  
 խօսք մը ըլլայ: Ըսենք որ՝ դիրը հնարող մարդը  
 պիտի իմացընէ իրմէ ետքը գալու մարդոց՝ որ ա-  
 ռաջին մարդը Աստուծակ ստեղծվեցաւ և Գրախօսը  
 գրովեցաւ: Բայց անհնազանդութեամբ Գրախօսէն  
 դուրս ինկաւ: Ասոնց մէջ նշանագրով բացատրե-  
 լու քանի՞ բառ կըրնար գրանել: և այն բառերը  
 միայն գրելով ինչ միտք կըրնար հասկըցընել: Ե-  
 գանելու նշանագիրներուն մէկնալ՝ Գրախօս բա-  
 ռին տեղը ըլլայ: Գրախօսը և Գրախօսէն բառերը  
 ինչպէս կըրնար իրարմէ զստել, և ամեն մէկն իրեն  
 յատուկ նշանակութիւնը տալ: Ստեղծվեցաւ և  
 Գրվեցաւ և ինկաւ բառերը ինչպէս հասկըցընե-  
 լու էր: և ասոնք չի գրոված ինչ միտք կը հասկըց-  
 վէր: Եւ յայտնի է որ՝ ասոնց միտք հասկըցընե-  
 լու՝ գիրը ոչինչ բան մը կըլլար: կամ պարզ ըսենք՝  
 պատկերի պէս բան մը կըլլար: որ մարդու բան չի  
 սորվեցընէր: գիտցած մէկ պատմութեանը գլխաւոր  
 պարագայները միայն միտքը կը բերէ: Եւ յիրաւի՝  
 թէ որ մէկ պատկերհանի մը անանկ խաչելութեան  
 պատկեր մը գրել ապրտպըրես որ՝ ամենին աւե-  
 տարանի քարոզութիւն չի լըտող մարդ մընալ տե-  
 սածին պէս՝ միտքը ուրիշ բաներու չի տարած հաս-  
 կընայ որ խաչին վրայի տեսնըված մարդը ուզերնէ  
 կըրնար զինքը խաչ հանողներուն ձեռքէն աղա-  
 տել: Բայց մարդկան հոգևոր փրկութեանը և Աս-  
 տուծոյ հետ հաշտըվելուն համար խաչելը յանձ-  
 նառու եղաւ: այն պատկերհանը որքան վարպետ

ըլայ նէ՝ այդ բանը ձեռքէս չի գար տէյի անկեղ-  
ծութիւն քեզի կը խոստովանի: Պատկերհանի գրած  
սրտակերը՝ նշանագիրէն աղէկ միտք հասկըցընելը  
գիտնալով կը սեմ. թէ որ սրտակերհանը ասիկայ չի  
կըրնար իր սրտակերին վրայ հասկըցընելնէ՝ նշանա-  
գիրով ամենեւին չի հասկըցվիր:

Գիրը թէ որ ջրհեղեղէն առաջ կար նէ՝ կատա-  
րելութիւն սիտի ունենար. և նշանագիրը ինքնին  
անկատար ըլլալուն համար՝ այն ատենվան գիրը  
Չայնագիր կամ Տառ սիտի ըլլար: Եւ գիրը ջր-  
հեղեղէն առաջ ըլլալուն պատմական ապացոյցներ  
ունիւիք:

Ա. ԱՊԱՅՈՅՑ: Յուդա Յակոբեան Առաքեալը՝  
կաթուղիկէ թղթին 14 համարը կը գրէ. « Մար-  
ս գարեացաւ վասն նոցա և եօթներորդն յԱդամայ  
Ենովք, և ասէ. » և այլն: Թէ որ Ենովքայ մար-  
գարեութիւնը գրի առնելով ըստ նէ՝ ըսածը  
մինչև Յուդայի ժամանակը հասնիլը անհնար էր:  
Ենովք՝ Ադամէն եօթներորդ էր. և աշխարհի ըս-  
տեղ ծման 1122 տարին ծնաւ. և Ադամայ որդին  
Սէթ մեռաւ նէ՝ 20 տարվան էր. Սէթայ տըղուն  
Ենովսին հետ աւելի երկար կենակցութիւն ընելու  
ժամանակ ունեցաւ. քանզի Ենովս մեռաւ նէ՝  
Ենովք 218 տարվան էր: Թէ որ Ենովքին օրը  
գիր կար նէ՝ Ենովսայ օրն ալ կար. քանզի երկուքը  
ժամանակակից են: Այս մէկ մակարեւութիւն մը  
նէ. բայց Ենովսայ գիր գիտնալուն վրայ ուրիշ  
աւանդութիւն կայ:



Բ . ԱՊԱՑՈՅՑ . Յովսէպոս Եբրայեցի պատմիչը կըսէ (1) որ՝ ջրհեղեղէն առաջ մարդիկ երկու սիւնի վրայ աստղաբաշխութեան վերաբերեալ տեղեկութիւններ և աստեղաց կարգը և ընթացքը գրած կ'ին . ըսելէ որ՝ Չիճի նման բան մը չ'իներ էին . և այս սիւներըս մինչև հիմա Սիրեասա ըսված տեղը կը կենան կըսէ : Եւ Յովհան Եղնկացին՝ կամ Յովսէպոսէն՝ կամ ուրիշ հին աւանդութիւնէ մը առնելով կըսէ . Ենովս մարգարէացաւ որ երկիրըս կրակով և ջրով պիտի անցնի . բայց ասոնց ո՞րք առաջ ըլլալը չի հասկընալուն համար՝ երկու սիւն սընկել տրվաւ . մէկը պղինձէ՝ և մէկը աղիսէ . և Ադամ նախահայրը՝ արարածոց ամէն մէկին ի՞նչ անուններ դրաւ նէ՝ անոնք հոն գրելէն զատ՝ իրեն տեսած մոլորակներուն յատկացուցած անուններն ալ գրեց : Այս աւանդութիւնէս կըրնանք հասկընալ որ՝ Ենովք գիրը ինքնին չի հնարեց . Ենովէն սորվեցաւ . և կարելի է որ ուրիշներուն ալ սորվեցուց (2) :

Գ . ԱՊԱՑՈՅՑ . Եւսեբի կեսարացին ժամանա-

Ծ . (1) Եբրայական հնութեանց գր . Կ . 2 :

(2) Այս կարելիութեանս մէկ նշան մը՝ Արաբացւոց մէջ գըտնելված աւանդութիւնը կառնելք, որ Ենովքայ Պասասու (Խարիս) կըսէ . քանզի Խարիս՝ Տերս բառէն ելլելով՝ Պասասու ըսելէ : Այս անունս անոր յատկացուցեր են նէ՝ առանց պատճառի չի կըրնար ըլլալ :

կագրութեանն ն հատորին մէջ՝ բազմալէս ըսված Աղէքսանդրի գրածներէն առնելով կը պատմէ որ՝ ջրհեղեղէ ազատելու համար նաւ շինողը՝ որ է Նոյ՝ կը հրամայէր որ՝ առաջին և միջին և վերջին ժամանակի գրութեաները ամենեւեւ պահելու համար՝ Սիպարացւոց քաղաքը փոս փորեն և հոն դնեն։ Զրհեղեղէն ետքն ալ հրաման եկաւ որ՝ Սիպարացւոց քաղաքը երթան . և հոն փոսին մէջ պահված գիրքերը հանեն և հասարակութեան տան . և կըսվի որ՝ կըսէ . այս տեղըս Հայոց աշխարհն է (1) :

Այս պատմութեանս մէջ գիտելու արժանի բան մը կայ։ Զրհեղեղին առնելը գրանդված գրվածները երեք կարգ բաժնըված կը գրանեմք՝ առաջին և միջին և վերջին ժամանակի պատմութիւն անունով։ Յայտնի է որ՝ վերջին ժամանակ ըսածը՝ Նոյի ատենը պիտի ըլլայ . այսինքն՝ Մաղաղայէլէն մինչև Նոյ . քանզի Մաղաղայէլ մեռաւ նէ՝ Նոյ 28 տարվան էր։ Ուստի այս ժամանակին մէջ կը պարունակին Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղա, Ղամէք և Նոյ։ Անանկ է նէ Ենովք՝ որ մարգարէութիւն գրած էր տէյի սուրբ գիրքը մեզի կլմացընէ . ջրհեղեղէն առաջ գրանդված մատենագիրներուն վերջին դարու մարդոցմէն էր . ասկէց առաջ մատենագրութեան երկու դար ալ կայ։ Առաջին

Ծ. : (1) Տես ինչ որ ասոր վրայ կը խօսի Հ. Ղուկաս . Հնախօս . Հայաստանի . հատոր, 1 . Թղթ . 222 . և հատոր, 2 . Թղթ . 38 . ծանօթ :

ժամանակին ալ պիտի սկսի Ադամեն, որ մեռաւ նէ՝  
 Մաղաղայէլ 135 տարւան էր: Միջինն ալ կըլայ  
 Սեթէն սկըսելով մինչև Մաղաղայէլ. քանզի երբ-  
 որ Սեթ մեռաւ՝ Մաղաղայէլն աղան Յարէդը  
 182 տարւան էր: Եւ Յարէդ մեռաւ նէ՝ Նոյ  
 260 տարւան էր: Յարէդ Սեթէն սորվածը՝ Նոյի  
 կը սորվեցընէր: Ուստի ժամանակները Նահապե-  
 տաց անուանովը ըսենք նէ՝ վերջին կըլայ Նոյ. մի-  
 ջին՝ Յարէդ, և առաջին՝ Սեթ, որ ըսելէ Ադամ:

Հիմա բազմավէպին ըսածը ստոյգ բըռնենք նէ՝  
 հարկ կըլայ ըսել որ գիրը հնարողը կամ Ադամ  
 էր՝ կամ Սեթ: Ասոր վրայ աւանդութիւն մըն ալ  
 կայ, բայց ես ապացոյցի կարգ գնել չուզեցի:  
 Հրեայները Սեթէր լ'Ատամ անուանով գիրք մը ու-  
 նին, որ ըսելէ՝ Ադամայ գիրք, և իրենց ուսմանե-  
 րը կըսեն որ՝ այս գիրքիս հեղինակն է Նոյն ինքն  
 Ադամ: Ես ըսել չեմ ուզեր որ յիշաւի Ադամայ  
 շինած գիրքը այս է. այլ ասկէց կը հետեցընեմ որ՝  
 Ադամ գիրք շինեց տէյի աւանդութիւն մը եղած  
 պիտի ըլլայ. մէկն ալ ելեր իրենմէ գիրք մը շարագ-  
 րեր՝ և Ադամայ գրածը այս է ըսելով դուրս հաներ  
 է: Ասոր պէս՝ Յագայի Կաթուղիկեայցէն իմանա-  
 լով որ Ենովք գիրք գրած ունի, ոմանք ելեր՝ և  
 Յայտնութիւն Ենովքայ անուանով գիրք մը շիներ՝  
 Ենովքայ գրածը այս է ըսելով տարածեր են: Ասանկ  
 գիրքերը ստոյգ ալ են նէ՝ աւանդութեմ մը ապա-  
 ցոյց ըլլալնին ճշմարիտ է: Քանզի մէկ բան մը կայ  
 տէյի մինչև որ ըստուգութեամբ չի գիտցըլի նէ՝

անոր անուանով սուտ բան չի կրնար ելլել: Թա-  
գաւորի անուանով և կնքով սըսլված սոցոգ ստակ  
գըմնըվելուն համար է որ սուտ ըստակներ կեւեն.  
և իրենց ստուծեամբը՝ սոցոգը գըմնըվելուն ապա-  
ցոյց են: Ամէն Առաքելոց անուանով մէկ մէկ սուտ  
գրուածքներ ելան, և ագիտաց մէջ անոր համար  
հարկինք գտան որ՝ ամէն Առաքեալ մէկ մէկ բան  
գրեցին. և ետքը անոնց գրածները կորորվեցան  
տէյի աւանդութիւն կար. կարելի՛ է որ կորսըված  
գիրքը ասոնք գտած են կըսէին: Բայց Քրիստոսի  
անուանով սոցոգ գիրք մըն ալ ելած չունի. քանզի  
այդ սուտին հինն ըլլալու աւանդութիւն չկայ՝ թէ  
Քրիստոս գիրք գրեց (1):

Գիրը Ագամոյ ատենը՝ կամ անմիջապէս մարդ-  
կան շտացած ատենը գըմնըվելուն պատշաճութիւն  
մըն ալ՝ Աստուածային նախասինամութենէն կառ-  
նըվի. որ մարդկութեան պիտանի բաները անմիջա-  
պէս Ագամոյ սորվեցուցած ըլլալով՝ կուզէր որ

Ծ.՝ (1) Քրիստոսի առ Աբգար գրած նամակը  
այս կարգըս չէ. քանզի գիրք չէ. և պատմութիւնը  
չըտեր որ Քրիստոս անձամբ գրեց. այլ Թումաս  
Առաքելոյն հրամայեց որ գրէ (խորեն. ք. 32).  
և այս աւանդութիւնս ամէն հնարաւոր պատմա-  
կան ապացոյցներով հաստատուած է. և Աբգարոյ  
օրը այս նամակիս և ուրիշ նամակներուն ալ հա-  
ւասարը (.քօբիան) Թագաւորական դիւանը գըլ-  
վեցան (անդ. 33):

անոր յեազայներն ալ սորվին . և ամէն մէկ մարդու  
անմիջական յայտնութեամբ իրեն սորվեցընելը՝ իւր  
Աստուածային անսլութեան կանոններուն չի հա-  
մեմատելով մարդկային կերպով միջոց մը ուղեց  
գործածել՝ որ առաջին ճշմարտութիւնները մարդիկ  
իրարու անսխալ սորվեցընեն . և իրենց գտածներն  
ալ անկորուստ մնալու համար զիր առնեն : Աշխար-  
հի մէջ եղած երևելի անցքերուն պատմութիւնն ալ  
այն առնեն զբրվեցան, և ջրհեղեղ գալու առնելը  
Սիպարացւոց Արեգ քաղաքը պահպանները անոնք  
էին կըսենք . և Մովսէս մարգարէն աշխարհի արար-  
չութեան պատմութիւնը այն գըրութիւններէն առած  
կըլայ (1) : Եւ զիբը նոյն իսկ Ադամ հնարեց

Ծ. : (1) Ասով Մովսէսի մարգարեական շնորհք  
ունենալը չի ջերվիր . քանզի պատմութիւն գրե-  
լովը մարգարէ չէ . ինչպէս որ Յեսուայ և Դա-  
տաւորաց և Թադաւորաց և Մակաբայեցւոց  
գիրքերուն հեղինակները մարգարէ չէին ըսվեր :  
Մովսէս ըլլալիքներն ալ պատմեց . և անոր համար  
մարգարէ է : Վարդա՛ ք օրինաց ի՞նչ գըւխը , 15  
համարէն մինչև վերջը , և Հրէից հիմակիւն վի-  
ճակին հետ բազդատէ . Քրիստոսի համար ալ  
մարգարեացաւ . « Եթէ հաւատայիք դուք Մով-  
սէսի՛ հաւատայիք արդեօք և ինձ . զի նա վասն  
« իմ իսկ գրեաց » (յովհ . Է . 6) : Ասանկ զրուց-  
վածքներուն համար է մարգարէ ըսվելը : Բայց  
Մովսէս ինքն ալ կը ջըջընէ որ՝ իրենմէ առաջ

ըսելը՝ նոր ժամանակի մտածութիւն չէ: Սուիդաս Յոյն հեղինակ մը՝ որ թէպէտ՝ արամաբանական ճիշդ դատում չունի, բայց շատ գիւրք կարդացած և բազմահմուտ մարդ ըլլալը՝ իրեն շինած բառարանէն յայտնի կերևի, Ադամ բառին վրայ գրելով կըսէ որ՝ արուեստները և գիրը ասիկայ հնարեց: Ուրիշ տեղ՝ գիրը հնարողը Սէթն էր կըսէ. և ասոր ուրիշ հեղինակներ ալ վկայ կը բերէ. որ ևն Եւստատիոս, որ այս ալ շատ հմուտ մարդ էր՝ և Հովերոսի բանաստեղծութիւնները և ուրիշ գիրքեր մեկնեց. Չոնարաս կանոնագէտ, Աստուածաբան, և պատմութեանց աղէկ հմուտ, և ինքն ալ պատմիչ. Վեդրենոս, որ իր պատմութեանց մէջ հին պատմիչներուն՝ և մանաւանդ Աբիւղենոսի և Ափ-

---

գրրված պատմական գիրք կար. և ինքն ալ անկէց կըտոր մը բան կառնէ. և Վասն այնորիկ ասի ՚ի և գրի. պատերազմ տեսան զոյգ հրձիգ արար, և և զձորն Առնովնայ (Թիւք. իմ. 14): Եւ իմ Մնացորդաց իմ գլուխէն մինչև թ գլուխը կարդարով շատ անուններ՝ և մանր մունր տեղեկութիւններ կը գըտնեմք որ՝ ոչ ծննդոց գրքին մէջ կայ, և ոչ ուրիշ գրքերու մէջ. և Մնացորդաց գիրքին հեղինակը՝ Բաբելոնի գերութենէ դառնալէն շատ ետք էր. ըսել է որ՝ հին կտակարանի հեղինակներուն ամենէն վերջինը այս է. քանզի Չորաբաբելէն մինչև տասն պորտ ետքը մարդու անուն կուտայ (իմ. մնաց. 7. 19=24). և Չորա-

րիկանոսի ըսածներէն չի զատվիր • և որպէս թէ  
Յունաց Մովսէս Խորենացին է • Նիկեփորոս և  
Նիկեասա՝ երկուքն ալ երևելի պատմիչ և հեղինակ :  
Եւ ասոնց ըսածները իրարու դէմ չեն • քանզի  
Ադամայ սորվեցուցած խօսքերուն պատկերը՝ որ է  
գիրը, կերպարանքով և պատկերով Ադամայ նմանը  
եղող հարազատ զաւակը հնարած ըլլայ • և Ադամ  
մեռած ատենը Սէթ 700 տարվան ըլլալով՝ հնարեալ  
ատենը հօրմէն շատ իրատ և օգնութի առած  
ըլլայ • ասանկով հնարողը երկուքը մէկէն ըլլալուն  
համար՝ միայտս կըրնայ ըսվիլ թէ Ադամ հնարեց,  
կամ Սէթ գտաւ • անոր համար Սուիդաս երկուքն  
ալ կըսէ (1) :

Ըստ է՛ Քարէլոնի գերութենէն Իօրայէլացւոց  
ազատված տարին ըլլալը յայտնի է : Բայց այն  
ալ գիտնալու է որ՝ Աստուածաշունչը դուրսէն  
գիրքէ մը վկայութիւն առնէ նէ՛ այն գիրքն ալ  
անով Աստուածաշունչ եղած չըլլար • այլ Աստ-  
ուածաշունչը այն գիրքերուն մէջ գըտնելված ճըշ-  
մարտութիւններուն աւելի ուժ մը կուտայ • ա-  
նանկ որ՝ միայն դըրսի գիրքերուն խօսքին հա-  
ւատալը կամ չի հաւատալը՝ անտարբեր բան մըն  
է • Աստուածաշունչի մէջ անցած խօսքը ճմարիտ  
է • և հաւատալու է :

(1) Թէ որ ամէն հեղինակ իրենց գրած պատ-  
մութիւններուն մէջ դատում բանեցընէին •  
ոյսինքն՝ աւանդութիւններուն մէջէն միայն իրենց

Բայց մենք՝ գիրը գլխաւորապէս հնարողը Ադամ էր. և Սէթ զաւակի տէր չեղած գիրը հօրմէն սորվեցաւ, և զաւակներուն անմիջապէս ինքը սորվեցընելուն համար՝ հնարողն ալ ինքը սեպվեցաւ ըսելը՝ աւելի հաւանական կը գրանենք: Չայնագիր ըսվածներուն հնարելուն վրայ վերը ըսածնիս մտածվի նէ՝ հարկաւ պիտի ըսեմք որ՝ խօսքն ու գիրը մէկ վարպետի բան պիտի ըլլան. քանզի նոյառակնին մէկ, որ է միտք բացատրել. վարպետութիւննին իրարու նման. քանզի ինչպէս որ բերնին մէջի գործարանքներուն թեթեւ շարժմանքներն ու փոփոխութիւնները մտաց գաղափարներուն հետ ամեննին կատակցութիւն չունեցած իքէն ալ միտք բացատրելու նշան գրըված են, նմանապէս գիծերուն ալ այլ և այլ ձևով իրարու համեմատութիւնը

---

խելքին հասածը գրէին՝ և ուրիշները ետ ձգէին նէ՝ պատմութեանց մէջէն շատ բան կը կորսվէր: Ուստի Սուրբասին պարզամտութիւն՝ որ ասանկ բաները ինչպէս գտաւ նէ անանկ կը պատմէ, Քժնախլաքի բարակ արամաբանութենէն աղէկ կը սեպեմ. որ Ուսումն պատմութեան գրքին մէջ՝ Հռոմայեցւոց պատմութեան մէջէն՝ ասոր չեմ հաւատար, անոր խելքս չի հասնիր, մեկալը խելքիս դէմ է ըսելով՝ բոլոր Հռոմեական պատմութիւնը տակն ու վրայ կընէ: Պատմութեան գառու՛ը փիլիսոփայութիւնով չըլլար, վրայութիւնով կըլլայ:



ճայնի ամենեկին նմանութի չունեցած իբէն՝ ճայն բացատրելու նշան են։ Եւ ինչպէս որ խօսիլը մարդոյս ամենահարկաւոր բան է, և բանականութիւնը և անասուններէն տարբերութիւնը ասուի է, բայց հնարելը՝ մարդկային կարողութենէ վեր բան է, նմանապէս գիրը նախատեսութիւն ունեցող մարդու ամենահարկաւոր, և հնարելը ամենագիտար բան ըլլալը յայտնի է։ Ուստի՝ գիրն ալ Աստուած ստեղծեց և Ադամայ սորվեցուց չըսենք ալ նէ՝ Աստուծակ լուսաւորեալ մարդ մը գիրը հնարեց ըսելու է։ Ասոր համար Պղատոն կըսէ. « Թէ որ և գիրը էն առաջ հնարողը կամ Աստուած՝ կամ և Աստուծոյ պէս մարդ մըն էր չըսենք նէ՝ այս անուններըս ուրիշ որի՞ կըրնանք վայելցընել՞ »։ Եւ Պլինիոս Հռոմայեցին կըսէ. « Գիրերուն գործածութիւնը կերևի թէ ՚ի յաւիտենից է՞ »։ ըսել կուզէ որ՝ քանի որ աշխարհիս վրայ մարդ կայ նէ՝ գիր ալ կայ։

Ադամէն մինչև ջրհեղեղ՝ մարդիկ ամեն ալ զԱստուած մոռնալով՝ մըտվընին իրենց աչքովը տեսածներնուն տըվին. ջրհեղեղէն ետքը որ մարդկային ծնունդը նորոգեցաւ նէ՝ շատ տարի չանցաւ նորէն ավրեցին ճամբանին. մինչև որ աշտարակաշինութեան ժամանակը լեզուները շփոթեց, առաջին լեզուն՝ Նոյոյ գըրանըված տեղը մնացողներուն մէջ պահեց։ Այն ատենն որ լեզուները շփոթեցան նէ՝ հարկաւորապէս ճայնագիրերը կամ տառերը անգործածելի կըլլային, և Ներբովթ՝ որ բո-

լոր աշխարհի վրայ տիրել կուզէր, և առանց գրոյ  
 իր կամքը չէր կրնար այլոց հասկըցընել, և առաջ-  
 կուց եղած գիրը՝ լեզուաց շիտթելուն համար ան-  
 բաւական ըլլալը խմայած էր, ուզեց անանկ գրու-  
 թեան կերպ մը հնարել՝ որ լեզուէ կախում չու-  
 նենայ, մասց գաղափարներուն անմիջական պատ-  
 կերը ըլլայ, որ ամեն մարդ ինչ լեզու կը խօսի նէ  
 խօսի՝ այս գիրըս տեսնելուն պէս միտքը հասկընայ,  
 Ուստի թէպէտ մէկ տեղ մը այս խորհրդածութիւն  
 կարդացած չեմ, բայց ինձի հաւանական կուգայ որ՝  
 նշանագրաց հնարվիլ՝ լեզուաց բաժանումն ետքը  
 եղաւ: Առաջ լեզուն մէկ ըլլալով՝ տառերով գրը-  
 ված բառերը ո՛վ կարդար նէ կը հասկընար, լեզու-  
 ները զատվեցան նէ՝ այն ատենի մարդիկ անանկ  
 գիր մը հնարել ուզեցին որ՝ լեզուէ կախում չու-  
 նենայ, ո՛վ տեսնէ նէ՝ միտք հասկընայ, Եւ յիրաւի՝  
 նշանագիրները ասանկ են, Եւ ամենէն հին նշա-  
 նագիր՝ Եգիպտացիներունը ըլլալուն համար՝ կար-  
 ծեմ թէ ասիկայ գրանոցը կամ՝ Նեբրովթ էր, կամ  
 անոր մարդոցմն մէկը, քանզի Եգիպտացիները  
 Մեսսարեմայ ցեղէն ելլալուն ապացոյց կը բերեն  
 հնագէտները՝ Եգիպտոսի գաւառին Մըսըր ըս-  
 վիլը, որ Մեսսարեմ բառին աղաւաղութիւնն է  
 կըսեն (1), և Նեբրովթ ալ Քուշայ տղան ըլլա-

Ծ.՝ (1) Եբրայական բնագիրին մ.ջ գրըված է՝  
 Մըսըրայիմ, որ է յոգնական, և Մըսըրցիները  
 կըսէ:

լով Մեսարեմայ եղբօրը տղան կըլայ • (ծնն • Ժ • 6 • 8) : Եւ նշանագիրներուն անկատարութիւնն ալ նայելով յայտնի է որ՝ մարդկային մտաց կատարելութիւնը պակսելէն ետքը գլանը ված սխալի ըլայ • և ասիկայ նահապետաց ատենը եղած չի կըրնար ըլալ • քանզի՝ ինչպէս որ այս գլուխըս կարդալով հասկըցար, նահապետաց ժամանակը կրթութիւնը կատարեալ էր, և ասանկ անկատար բան այն ատենվան ձգելը անպատշաճ կերևի :

Ուստի ըսածներըս՝ համառօտ մը ամփոփելով կըսեմ • մարդոյս առաջին և հարկաւոր և բնական վիճակը՝ կրթութութիւնն է • և անկրթութիւնը՝ մարդոյս ավրելիւնն է • այս պատճառներուս համար :

Նախ՝ մարդս կատարեալ ստեղծված ըլալով՝ ստեղծված ատենէն ինչ որ իրեն հարկաւոր էր նէ՝ ստեղծողէն առաւ • թէ մըտքի և թէ բարուց կատարելութեան կողմանէ պակասութիւն չունեցաւ : Եւ ունեցած պակասութիւնն ալ՝ անձնիշխան ըլլալէն առաջ եկաւ • չըդիմնալով չէր, կամացը ազատ ընտրութեամբն էր • ուստի հիմակվան կրթեալ և խելացի մարդոց ըրած պակասութեանը պէս էր անոր ըրածը :

Երկրորդ՝ խօսիլը այն ատենէն ըլալով Աստուածաստեղծ մարդը իր գիտցածները իր զաւակներուն սորվեցընելով, և անսքալ իրենց զաւակացը սորվեցընելով կրթութիւնը շարունակիկցաւ :

Երրորդ՝ կեանքերնին ալ երկար ըլալով՝ գիտցածնին լուման ուրիշներուն սորվեցընելու ժամանակ

ունեցան • և այն ժամանակը պարսպ չանցուցին :

Չորրորդ՝ կառավարութիւնն ալ Աստուածադիր օրինաց տակ ըլլալով՝ ամէն մարդ իր մեծին կը հնազանդէր • և ընկերացը հետ պէտքին պէս կը վարվէր, իր կամքը յառաջացընելու ոչ փափագ ունէր և ոչ պատեհութիւն • սորվածնին ալ մէկէն ՚ի մէկ ավրովելու դիտաւորութիւն չկար :

Հինգերորդ՝ հեռուի գըտնելիւմ կամ իրենցմէ ետքը աշխարհք գալու մարդոց իրենց գիտցածը սորվեցընելու դիւրութեան համար գիրալ հնարված էր : Եւ կրթութիւն ըսված բանին ալ հարկաւոր պայմանները ասոնք ըլլալուն համար • ասոնք գըտնելիւմ տեղը հարկաւ կրթութիւն ալ կըլլայ • ասոնք ետքէն հնարված չըլլալուն համար՝ կրթութիւնն ալ ետքէն հնարված չէ :

Այս հինգ բանիս վրայոք ալ հիմակիլան եղած կրթութիւնները կամ առաջիններն են, կամ անկէց վար են : Լեզու հնարելը հիմայ անհնար է • հին լեզուները փոխելով և խառնելով և ծըռմըռկելով նոր լեզուներ ելած են : Մէկուն գիտցածը ուրիշին սորվեցընելը՝ կենաց կարճութեան կողմէն ժամանակ կուղէ • և թէպէտ գրով ուրիշներուն կըրնայ հասնիլ • բայց գիրը կարդացող մարդը տարակոյս մը ունենայնէ՝ գիրը չի կըրնար այն տարակոյսը լուծել • ուրիշ անկատարութիւններն ալ կան : Աստուարութեան տեսակը կըրնան փոխել • բայց հիմը եղած օրէնքը չի փոխվիր : Բարուց կողմանէ թէպէտ հիմայ հիններէն աւելի աղէկ են ըսենք •

բայց նոր կանոն մը գրանելոված չէ :

Բայց մենք ասոնք ըսելով՝ ետքի ժամանակները հասարակութիւնը կրթելու ելլող և օգտակար բաներու աշխատող բարեացապարտ մարդոց յարգը պահպանելու չենք ուզեր : կրթութիւնը առաջինին պէս մնար նէ՝ յիշատի մարդ ասոնց կարօտ չէր ըլլար : ասոնք ալ պարզապէս հասարակութեան բռնած ճամբան ձեռք կառնելին, անոր վրայ կը գրէին : նոր կերպեր գրանելու, և հասարակութիւնը իրենց գէշ և անկիրթ ճամբան ձգեն ու կրթութեան ճամբան մընեն ակն յորդորելու աշխատութենէն ազատ կը մնային : Բայց այլ և այլ պատճառներ մընենելով առաջին կրթութիւնը ավրեցին : և ետքէն նորէն կրթըվելու կարօտ ըրին : մինչև այնքան որ՝ խորունկ չի մտածող մարդիկ ալ երկոյթքէն խաբւելով կարծեցին թէ առաջկուց կրթութիւնը բնաւ չկայ եղեր : Այս պատճառներըս ինչ ըլլալը՝ յետագայ գլուխին մէջ կը բացատրեմք :

## Գ. Լ. ՈՒԽ. Խ. Բ.

**Լ. Բաժինն կրթութիւնը ավարդէլուն պատ-  
ճառները :**

Յայտնի է որ՝ անկրթութիւն ըսելը՝ կրթութեան պակասութիւնն է . ուստի ինչ բան որ կրթութիւնը հասարակութեան մէջ ծաւալելու առիթ եղած էր նե՛, անոր պակասութիւնն ալ՝ և անոր հակառակ եղած բանին զօրանալը՝ կրթութեան պակասելուն և անկրթութեան զօրանալուն պատճառ եղած կըլլայ : Եւ ասանկով անկրթութիւնը զօրանալուն հինգ գլխաւոր պատճառ կը գըտնէմք :

ա. Պատճառ : Մարդոյս կատարելութեան աղբիւրէն հեռանալը , և զԱստուած մոռնալը , որով բազմաստուածութեան և անաստուածութեան մէջ ինկան . և մտլութիւննին սանձ մը չունենալով անսակ անսակ մտլութիւններ մէջերնին զօրացան :


բ. Պատճառ : Գիտցած անշեկութիւննին իրար հաղորդելու միջոց եղած լեզուներուն բաժնըլիլը :

գ. Պատճառ : Աննաց կարծութիւնը , որով ոչ սորվեցընողները բաւական ժամանակ ունէին սորվեցընելու , և ոչ սորվողները՝ սորվածներուն կիսաառ փորձով կատարելագործելու ժամանակ կըլլանային օգտեցընել :

Դ. Պատճառ : Բըռնութիւնը օրէնքի տեղ անցնիլը . որ ընկերութիւնը իրարմ քակվելու՝ և ամէն մարդ իր ընկերէն վախճալու և անկէց հետանալու պատճառ եղաւ . և սորվածնին բանեցընելու պատեհութիւնը վերնալով՝ սորվածնին ալ մտայան :

Ե. Պատճառ : Սուտանուն գիտութիւնը , կամ ծուռ փիլիսոփայութիւնը . որով մարդիկ իրենց խելքը ամէն բանի դատաւոր բըռնելով՝ հիներուն գրով աւանդածները բանի տեղ չի դնել սկըսան . գրոց օգուտը որդէս թէ ոչընչացուցին :

Ասոնց վրայ այս գլուխիս մէջ զատ զատ խօսիմք :



### Պ Ա Տ Ճ Ա Ռ . 1 :

Բազմաստուածութիւն և Մնաստուածութիւն :

Հարեանցի մտածութեամբ մը այնպէս կը կարծըվի որ՝ կրօնքը մարդոյս մտացը և բարուցը վրոյ շատ մեծ ներգործութի մը պիտի չունենան : Բայց թէ որ քիչ մը բարակ խորհելու ըլլածքնէ՝ այս կարծիքս սխալ կը գըտնեմք : Աստուծոյ գոյութիւնը յիրաւի մարդոյս համար անտարբեր մէկ բան մը կըլլար , թէ որ նախախնամութիւնը ուրանալ հնար

ըլլար, և ըսվէր որ՝ Աստուած աշխարհիս մէջ եղած բաներուն վրայ հոգ չունի: Ուստի Եպիկուրեան փիլիսոփայները թէպէտ Աստուծոյ գոյութիւն չէին ուրանար, աշխարհի ստեղծող Աստուած կոյ կըսէին. Բայց ստեղծելէն ետքը աշխարհիս մէջ եղած բաներուն չի խառնըլիւր ըսելուն համար՝ անաստուած ըսվեցան. քանզի ըսած խօսքերնին՝ մեզի համար Աստուած չկոյ ըսելու պէս էր:

Աստուած աշխարհիս վրայ խնամք ունի ըսելը հօրկ է. և բոլոր ազգաց պատմութիւնը ասիկոյ կը ցըցընէ. մանաւանդ թէ՛ բոլոր պատմութեանց հոգին՝ այս դաւանութիւնս է (1). և ասիկոյ զիացող մարդը՝ իր ընթացքը Աստուծոյ կամացը համաձայն ընելու է: Մէկ մարդ մը որ՝ Վիոս կուռքը իրեն աստուած ճանչնայ, և անոր պատմութիւնը գիտնայ

Ծ-: (1) Վերջին ժամանակիս փիլիսոփայները կը գանգատին որ՝ հիմակվան պատմիչները հին պատմիչներէն վար են. և սոցոք ալ է: Ասոր բուն պատճառը քիչ մարդ հասկըցած է: Հիմները՝ ամեն բան Աստուածոյին տեսչութեամբ կը կառավարլի կըսէին. և պատմութիւննին այս գրութեանը վրայ էր. նոր պատմիչները կամ գիտութեոյ կուտան՝ կամ մարդկոյին խոհմասութեան. ըսել է որ՝ պատմութեան ճշմարիտ հոգին կը հանեն, անշունչ մեքենայ մը կը դարձընեն: Ազէկ պատմութիւն գըրել ուղղ մարդը՝ բարեկրօն և բարեպաշտ ըլլալու է:



նէ՝ ի՞նչպէս վարք կըրնայ ունենալ . Ափրոզիտէի  
 աստուած ըսող կինը՝ ողջախոհ չի կըրնար ըլալ .  
 Որմիշդը՝ իր հայրը թագաւորութենէ ձգեց և եր-  
 կինքէն դուրս վըռընտեց, և իր եղբայրներուն հետ  
 կըսիւ ըրաւ, աստուածութիւնը անոնց ձեռքէն  
 յափշտակէց տէյի դաւանող կապաշտը՝ հայրը և  
 մայրը պատուելը և իր եղբարքը սիրելը մէկ դի կը  
 ձըգէ: Պրոմէթէոս անուն մէկ մը կրակ վառելը  
 հնարեր է կըսեն կապաշտ բանաստեղծները . և  
 անոր համար Պիոս անոր նեղացեր և դժոխքը նե-  
 տեր է (1) . ասիկոյ գիտցող մարդը ի՞նչպէս կըլ-  
 լայ որ հասարակաց օգտակար բան մը հնարելու հա-  
 մարձակի: Եւ ասանկով կապաշտութիւնը հասար-  
 ակաց բարքը և կըթուծիւնը բոլորովին ավրեց:  
 Եւ ասոր մէկ նշաննալ այն է որ՝ Յունաց մէջ բա-  
 րուց կողմանէ քիչ մը գովելի մարդիկ կոյին նէ՝  
 Աստուծոյ միութիւնը կը դաւանէին. և հին աւան-  
 դութիւններուն աղէկ մը կտարված ըլլալով նորե-  
 լուկ առասպելներուն ականջ չէին դներ . ինչպէս

Ծ. (1) Պրոմէթէոսի համար կըրած հեթանոսա-  
 կան առասպելը՝ Խորենացինալ կը յիշէ . որ  
 Եգիպտացւոց ըսածը պատմելով թէ կրակը  
 Եփեստոս գտաւ, կըսէ . « Ասաջին ասէն իւր-  
 և եանց մարդ լեալ ղԵփեստոս և գտակ հըոյ:  
 « Եւ ընդէր սա գտակ հըոյ և կամ Պրոմիթէոս  
 « գողացեալ զառ ՚ի յաստուածոցն հուր և շնորհ-  
 « եալ մարդկան, որ է այլաբանութիւն. (խոր, մ, 7) »

էին Սոկրատ, և ուրիշները: Եւ հիմայ ալ կռապաշտ  
ազգաց մջ բաղմասառւածութիւնն աւանկրթու-  
թիւնը մէկ տեղ կը գըտնըվին: Չինացիք ուրիշ  
կռապաշտ ազգերէն աւելի կրթեալ են. քանզի կը-  
ռապաշտութիւն ալ շատ յարեալ չեն. իրենց կրօնքը  
միայն պետութեանը խաթերը համար բըռնած են.  
և ճանապարհորդները գրեթէ միաբերան կը վկայեն  
որ՝ կռատունները պարասպ և աչքէ ինկած են. մարդ  
չերթար. և մեծամեծները կռապաշտ ալ չեն. Վոն-  
փուտեան են. այսինքն՝ կամ մէկ Աստուած կը ճա-  
նաչեն ինչպէս որ Վոնփուտիոս իրենց սորվեցոց.  
կամ բոլորովին անաստուած են. ասոր համար ինչ  
որ Չինաց կրթութեան համար կը զրուցվի նէ՝ ճըշ-  
մարիտէն շատ տարբեր է. մէկ Աստուած գիացող  
ազգաց ամենէն տգէտը՝ Չինացիներէն աւելի կըրթ-  
եալ է. և Չինաց բարբարոսութիւնը իրենց ազգին  
հետ անանկ միացեր է որ՝ մինչև որ հաւատքնին չի  
փոխեն նէ՝ կրթութիւննին աղէկնալիք չունի: Հըն-  
դիկ կռապաշտները ամենեկին մարդու մը օգուտ  
ընել չեն գիտեր. աղքատ մարդիկ անտէր կը մեռ-  
նին, իրենց հոգը չէ. սրատառ մը հաց չեն տար.  
մարդու համար շինված հիւանդանոց չունին. անա-  
ստուններու և գաղաններու համար հիւանդանոցներ  
ունին: Տարին անգամ մը ճակըռնած ըսված տեղի  
կռատունին ուխտին ասեներ կուգայ. քուրմերը ուխ-  
տաւորներուն առաջը կիյնան սոսկալի ճամբաներէ  
կը տանին. և թէ որ մէկուն ոխ մը ունին սրտերնուն  
մէջ, կամ իրենց աչքն գէշ երեցած է, նէ՝ լեռանը

դահաձեռն (ուչուրուձն) վար կը նետեն շարաշար կը սասկեցընեն. մէկ մարդ մը մեռնինէ՛ կինը անոր հետը այրելը մեծ խեղ կը սեպեն. բայց մէկ ոջիլ մը կամ փատոջիլ մը կամ մլուկ մը մեռցընելը ծանր և անթողի յանցանք է կըսեն. Այս ծուռումուռ դատումներու մէջէն հանէ կոապաշտութիւն. միացածը այնքան սոսկալի չերևիր. քանզի թէ քուրմերուն ըրած մարդասպանութիւնը՝ և թէ ուրիշները՝ մէկ մէկ կոոց անունով կը լլան. Հին ասեններն ալ Մողոք կուգին սաշտոյնները՝ իրենց տղայքը կերելն, որ սարսափելի անգթութիւն և բարբարոսութիւն է:

Հիմայ որ քրիստոնէութիւնը աշխարհի մէջ տարածեցաւ՝ կոապաշտութենէն չի վախցըվիր. քանզի մինչև հիմայ բնաւ ազգի մը մէջ և պատմութեանց մէջ տեսնըված և կարդացված և լըսված չէ որ՝ քրիստոնէութիւնը ընդունող ազգ մը ետքը դառնայ կոապաշտ ըլլայ: Հաւատքը կըրնայ փոխել. բայց մինչև կոապաշտութիւնը ընդունելու աստիճանը չի կըրնար ինջնալ: Ճշդիւ խօսելու ըլլանք նէ՛ հաւատք փոխել ալ չըլար, պակսեցընել կըլլայ. քանզի մէկ մարդ մը ինքնիրեն հաւատք չի կըրնար հնարել. միայն հաւատալեաց մէջէն բան կըրնայ պակսեցընել: Աստուծոյ միութիւնը ուրացողը՝ մէկ աստուած մը այսքան աշխարհըս կառավարելու հերիք չի սեպելով՝ շատ աստուած գըրանըվիլը հարկ կը սեպէ. ասով Աստուծոյ կարողութիւնը հաւատքը կը պակսեցընէ, և որքան շատ աստուած հնարէնէ՛

ձեկն ալ ամենակարող չըլլալուն համար՝ սաստաճ  
ալ չեն կըրնար ըլլալ: Գլխաւոր հաւատալիքը այս-  
պէս ըլլալէն ետքը՝ մեկալներն ալ ուրիշ կերպ չեն.  
ամէն մոլորութիւն՝ մեկ ճշմարտութիւն մը ուրանալ  
է. նորեւեկ բան մը հաստատել չէ:

Քրիստոնէութիւնը աշխարհ տարածվելէն ետքը՝  
Սաստճոյ միութիւնը դաւանելով՝ ուրիշ մոլոր-  
ութիւններ ելան. ըսել է որ՝ հաւատալեաց ուրիշ  
յօդուածները ուրանալ սկսան. և ամէն աղանդի  
հետ մեկ մեկ գեշութիւն ծագեցաւ. և մեկ մեկ օգ-  
տակար աղէկութիւն վերցաւ. որ մի ըստ միոջէ  
գրելը մեզ մեր նպատակէն շատ դուրս կը ձըգէ:  
Միայն այսքանս նշանակելիք որ՝ մեկ աղանդաւոր  
մը՝ ուղղափառ հաւատոյ յօդուածներէն քանի կը-  
սոր բան ետ ձըգերնէ՝ այնքանալ կրթութիւն ետ  
մնացեր է (1): Ասիկայ ընդհանուր կանոն է, և  
բացառութիւն չունի կըրնամ ըսել. բայց ասիկայ  
աղէկ դատելու համար՝ Արթութիւն բառը ի՞նչ  
մըտքով առնելնիս ճիշդ խմանալու է:


Մէկ մարդ մը կրթեալ է ըսելը՝ հագուստին

Ծ. (1) Ըսել չենք ուզեր որ՝ կրթութիւնը ու-  
ղիղ հաւատոյ նշան է. թէ որ միայն հաւատոյ  
պահասութիւնը անկրթութեան պատճառ ըլլար  
նէ՝ այդ ըսելը ճշմարիտ կըլլար. բայց ուրիշ  
պատճառներ ալ կան որ հաւատքէ ուղղակի կա-  
խում չունին. շիտակ հաւատք ունեցող մարդիկ  
ալ այս պատճառներովս կըրնան անկրթ մնալ:

աղէկը և կերակուրին համեղը կը ճանչնայ, կամ արուեստներու հետեութիւն ունի, գիտուն է, փիլիսոփայ է, կամ ուրիշ ասոնց պէս բաներ ունի տէչի չըլար. յիրաւի ասոնք ալ կը թուածեան հանգամանքներն են. բայց մէկ ուրիշ բան մը կայ՝ որ կը թուածիւնը առանց անոր պակասաւոր կըլլայ. և այս է՝ հասարակաց օգտին համար իւր օգուտը անտես ընելը: Ասիկայ ճշմարիտ հաւատք չունեցող մարդը չի կըրնար ընել. ընէ ալնէ՝ միշտ մէկ գաղտնի գիտաւորութիւն մը կունենայ իր օգտին վերաբերեալ. կամ իրեն հաւնեցընէ և անուն վաստակիլ, կամ ինչք ստանալ, կամ պատուոյ հասնիլ: Ըրած աղէկութենէն իրեն օգուտ չըլլայ, և փաստաւ ըլլայնէ՝ այն փաստին յանձնառու ըլլալով աղէկութիւն ընելը՝ ճշմարիտ կրօնքին բանն է:

Մոլորութե՛ առաջին աստիճանը՝ քիչ մը իմաստուն եղող մարդոց մէջ՝ իրենց խելքին հաւնիլն է. որով հաւատաղի բաները իրենց խելքովը կշռելով խելքի դէմ եղածին չեն հաւատար. ասով մէկ անգամ մը հաւատալեաց որոշումը իրենց իշխանութեանը տակը ձգած ըլլալէն ետքը՝ իրարու կատված ճշմարտութիւնները ետեւ ետեւ ուրանալով վերջապէս Աստուծոյ գոյութիւնն ալ ուրանալ հարկ կըլլայ. այն ատենը մէկ ուրիշ ճամբով մը՝ բազմաստուածութե՛ ատենը երեցած անկրթութիւններէն աւելի գէշերը երևան կելլեն. անոնք իրենց օրինակ ունէին իրենց աստուած հաւատոցածներուն վարքը, ասոնք իրենց գէշութեանը հեղինակն

ալ իրենք կըլլան՝ օրինակն ալ • և թէպէտ բազմաստուածութիւնը վերցըված տեղը՝ մէկ մըն ալ մըտնելիք և զօրանալիք չունի • բայց անոր կցորդ գէշութիւններէն աւելի գէշը կըլինայ զօրանալ :



Պ Ա Տ Ճ Ա Ռ • 2 :

I Է զ ու ա յ բ ա ժ ա ն ու մ ն :

Սարդոյս մտաց թարգմանը՝ լեզուն ըլլալը յայանի է • և մէկ մարդ մը իրեն ունեցած տեղեկութիւնները չի կըրնար առանց լեզուն գործածելու ուրիշին սորվեցընել : Սորվեցընողին ու սորվողին լեզուն ալ մէկ պիտի ըլլան՝ որ լսողը խօսողին ըսածը հասկընայ : Ասոր վրայ Պօղոս առաքեալը շատ աղէկ կը խօսի • թէ որ խօսքըդ լեզուով չի հասկըցընես նէ՝ ի՞նչպէս կըրնայ հասկըցիլ • անծանօթ լեզուով խօսողը պարսպ տեղը խօսած կըլլայ • անոր համար օտար լեզու խօսիլ գիտցողը պէտք է թարգմանելու համար ալ աղօթք ընէ • որ ժողովուրդեան խեր ըլլայ : (ձ • կոր • ժ 7) :

Խօսողին ու լսողին լեզուաց տարբերութիւնը առաջ չկար • սորվին ալ դիւրին էր : Եւ որովհետև լեզուն մտքին գաղափարացը հետ հարկաւ կապակ-

ցութիւն տնի, լեզուներուն խառնըվելը մտաց շփոթութիւն ալ կը բերէ . և մէկ բան մը իր անունովը ճանչցըվելուն համար՝ անոր անունը գոնէ իր սովորական լեզուին մէջ չգիտցող մարդը՝ անոր գաղտնիքն ալ չունենար: Եւ ասիկայ մեծ և կարեւոր խորհրդածութիւններու դուռ կը բանայ՝ բառից ստուգաբանութիւն մէջ, և բառերուն ծագմանը վրայ. օրինակի համար երկու բառ դնեմք (1):

Անէնն առաջ միտքս եկածն է՝ Դուռն բառը. որ յունարէն կըսվի Դիւռաս: Վերջին Աս վանկը՝ Յունաց լեզուին յատուկ վերջաւորութիւնը կը սեպեմք. որ օտար լեզուէ առած շատ բառերուն ծայրը դնելով իրեն յատկացուցեր է. և կը մնայ արմատական բառ՝ Դիւռ. որ է Դուռ: Հայերէնն ու Յունարէնը մէկ ըլլալով՝ բնապէս ամեն մարդու միտքը այս հարցումըս ընել կուգայ թէ՛ Հայերը Հռոմէ<sup>Ր</sup>ն են առեր այս բառս՝ թէ Հռոմիները՝ Հայեն: Ես ենթադրելով որ Հայոց լեզուն Ադամայ գործածած լեզուն է (2), կըսեմ. Յունաց

---

Ճ.՝ (1) Այս տեղ դրած ստուգաբանութիւններուն համար՝ հարկաւորապէս ասանկ եղած պիտի ըլլան ըսելը՝ յանդրգնութիւն կը սեպեմք . մեր ըսածը միայն մէկ պատշաճութիւն մըն է . ընդունիլը կամ չընդունիլը՝ կարողացողին ազատ կամացը և ընտրութեանը յանձնած է:

(2) Այս նիւթոյս վրայ ուրիշ տեղեր երկար խօսված ըլլալով՝ այս տեղս մե՛նք ալ խօսիլ չու-

պատմիչները ամենն ալ մէկ բերան կըսեն որ՝ իրենց նախնիքը առաջկուց տուն շինել չգիտէին . անտաներու և այրերու (մաղարաներու) մէջ կը բնակէին . և տուն շինել չգիտցող ազգը՝ տանը պէտք եղած բաներուն գաղափարը չունենալով անունն ալ չունենար : Ուստի իրմէ առաջ տուն շինել գիտցող ազգէ մը առած պիտի ըլլայ : Եւ տուն շինող փրնարուելն իբէն՝ առաջին քաղաք շինող կը գըրանեմք Ադամայ որդին Այյենը . (ծնն . 7 . 17) . անանկ է նէ՝ Գըրան անունն ալ այն ատենէն է . և Յոյները շինված բառ գըրանելով առին , և վերջը Թեթև փոփոխութիւն մը ըրին՝ և իրենց յատկացուցին : Ըսելէ որ՝ Հայոց լեզուէն անցած է այդ բառը Յունաց լեզուին մէջ :

Ազատ բառը նոյն կը գըրանեմք Հայոց և Պարսից մէջ . և խնդիր կըլլայ Թէ միլ որկէց աւեր է : Պարսից ազգը քանի որ ազգ եղած է նէ՝ բանական կառավարութեան տակ գերիի պէս է . մինչև Յունաց չին պատմիչներուն մէջ ըսողալ կայ՝ որ Պարսից ազգը ազատութեան գաղափարն ալ չունէին իրենց մտայը մէջ : Հայկ՝ օտար մարդու իշխանութեան տակ չի մըանելու համար՝ Բէլէն Չատկեցաւ . իր Ազատութիւնը պաշտպանելու համար պատերազ-

---

դէցնիք . տես Չամչեանին Հայոց պատմութիւնը . (հատոր . 5 . Թղթ . 153 = 164) . և Ինճիճեանին Հայաստանի հնախօսութիւնը . (հատոր . 7 . Թղթ . 8 = 32) :



մեցաւ . և Չատ մէկ Ազատ նաճապետական կառա-  
վարութեան մը հիմնադիր եղաւ . Ըսեւէ որ Ազա-  
տութեան գաղափարը Հայոց մէջ կար . Պարսիկ-  
ներն ալ Հայերէն առին (1) : Ասոնց պէս ուրիշ  
բառեր ալ կըրնայինք գըտնել , բայց համառօտու-  
թեան համար կը օգտնէք :

Ասոր վրայ ուրիշ դիտելիք մըն ալ ունիմք : Ո՛ր  
լեզուն որ գրաբար և աշխարհաբար ունինէ՞ գրա-  
բարը աշխարհաբարէն շատ հարուստ է . ըսեւէ որ՝  
գրաբարը խօսողներուն միտքն ալ գաղափարի կող-  
մանէ շատ հարուստ էր : Եւ թէ որ մարդըս առաջ  
անկիրթ եղած՝ և ետքէն կրթութեան տակ մտած  
ըլլարնէ՞ հարկ կըլլար սա երկուքիս մէկը ըսեւ .  
կամ՝ թէ աշխարհաբարը հին լեզու է , և գրաբարը  
ետքէն հնարած է . կամ թէ աշխարհաբարը գրաբա-  
րէն հարուստ է : Ասոնց երկուքն ալ յայտնի սուտ  
են , և ըսող չի գըտնելիր :

Երևելի կենցաղագէտ մարդիկ՝ լեզուաց նոյնու-  
թիւնը ընկերութեան զօրաւոր կապ գիտնալով՝

Ծ . : (1) Ազատ բառին մեր մէջը ստուգաբանու-  
թիւն ունենալը՝ և Պարսից մէջ չունենալը՝ ըսա-  
ծիս ուրիշ մէկ ապացոյց մը կըրնայ բըռնելիւ .  
Քանզի թէ որ Պարսիկերէն Չատ կամ Չատէ  
բառերէն հանելու ըլլանքնէ՞ ծնունդ չունեցող  
կամ ազգը անյայտ , վաս ազգի (սոյսուզ) ըսելու  
պէս կըլլայ . որ բուն բառին նշանակութենէն  
շատ հեռու է :

Թէ որ ուրիշ աղգաց վրայ բռնացածներ կան նէ՛  
 իրենց իշխանութեանը տակը առած ազգերուն լե-  
 ղումն գործածութիւնը խափանել ուղած են այլև  
 այլ ճամբաներով . և միայն ասով իրենց դիտաւո-  
 րութեանը հասեր՝ և աղղը կատարելութեան աս-  
 տիճանէ վար ձգեր են : Ուստի կը տեսնենք որ՝  
 ամէն ազգի լեզումն ծաղկեալ տեսնը՝ նոյն ազգին  
 ուժովցած տեսնը եղած է . Յունաց լեզուն՝ Պե-  
 րեկղէսին տեսնը . որ երևելի զօրապետներ ունէին  
 Յոյնք , և Պարսից Թագաւորութիւնը դողացուցին :  
 Աղէքսանդրի յաջորդները տկարանալով՝ Հռով-  
 մայեցւոց իշխանութեան տակը ինկան նէ՛ լեզունին  
 ալ առաջինը չի մնաց . և թէ որ Հռոմայեցիները  
 այս լեզուն գիտնական լեզու ըսելով չի յարգէին  
 նէ՛ աւելի կը տկարանար : Եւ երևելի բանասէրք՝  
 Պողիւբիոսի լեզուն Պղատոնի և Քսենոփոնի լե-  
 ղումն անուշութիւնը չունենալուն , և Պլուտարքոս  
 Հերոդոտոսէն խնաստուն իբէն՝ անար զրուցվածքէն  
 շատ վար ըլլալուն պատճառ ասիկայ կուտան :  
 Եկեղեցւոյ հոյրապետաց մէջ ալ ամէն պերճախօս  
 վարդապետները Բարսեղ Աեսարացի , Ոսկեբերան ,  
 Սեբերխանոս , Գրիգոր Աստուածաբան , Գրիգոր  
 Նիւսացի , և այլն , Աստանդիանոսէն մինչև փոքր  
 Թէոդոսի օրերը կը գըրանենք . ըսել է՝ Նիկիոյ ժո-  
 ղովքէն մինչև Եփեսոսի ժողովքը , 150 տարի մը  
 չափ միջոց . Յունաց կոյսերութեան հանդարտ ժա-  
 մանակն ալ անկէց ետքը չէ : Հռոմայեցւոց աղէկ  
 մտանագիրները՝ Օգոստոս կոյսեր օրերն են .

խաղաղութիւնն ալ այն ատենն է : Հայոց թարգմանչաց ժամանակը ազգին հանդարտութեան ժամանակն էր . և մինչև վերջը գրականութիւնն ու հանդարտութիւնը մէկ ատենի մջ կը տեսնենք :

Չարմանքն այն է որ՝ ծանօթ ազգաց գրեթէ ամենուն ալ լեզուաց ռամկանալը կամ աղքատանալը իրարու մօտ ատենի մջ կը գըտնենք : Հայերէն աշխարհաբար լեզուն էն առաջ Մխիթար Հերացիին օրերէն կը գըտնեմք . անկէց առաջ այն լեզունովը գրութիւն չկայ : Եւ ասիկայ Շնորհալիին ժամանակակից էր . ժբ դարուն մջ : Իտալական լեզուն՝ որ Լատիներէնին աշխարհաբարն է , այն ատեններէն գրի առնըված է կըսեն Իտալացի պատմիչները : Գաղղիացւոց հիմնական լեզուին ամենէն հին յիշատակը՝ 842 թուին գըրված կը գըտնենք . որ է Բենեքորդ դարը : Սոմախացւոց լեզուն ալ այն ատեններէն է . ըսել է , երբոր Արաբացիները՝ Ափրիկէն Եւրոպա անցան : Յունաց այն ժամանակի հեղինակներուն լեզուն ալ հին հեղինակներուն ըսվածքէն կը հեռանայ՝ և նորերուն կը մօտենայ : Ասո՛ք ամենն ալ գաղափարաց պահասութե՛ գործ են և պատճառ . և բաւական կը ցըցընեն որ՝ աշտարակաշինութեան ատենը լեզուաց շփոթութիւնը գաղափարաց շփոթութիւն բերելով՝ թէ՛ իմաստնական և թէ՛ բարոյական կրթութիւնը տկարացոյց : Աստուածապաշտութիւնը թէպէտ առաջկուց ալ նահապետաց ատենվան պէս մնացած չէր , բայց անկէց ետքը աւելի տկարացաւ . քանզի բազմա-

Հմուտ հեղինակներ կրսեն որ՝ մարդոց մէջն աստուած սեպկող և պաշտըվողներուն առաջինն է Բէլ (1) և ծնողքը յայտնի մահկանացու մարդու մը աստուած ըսելը՝ մասց կատարելու թիւը պակսելուն վերջին աստիճանն է . և մէկ կողմն նայելով՝ անաստուածութենէն գեշէ : Քանզի կոսապաշտութիւնը՝ մարդոցս Ապտուծոյ վրայօք ունեցած գաղափարը ավրոված կը ցըցընէ . անաստուածութիւնը՝ նոյն գաղափարը ամբողջ կենթագրէ . և մուրուսութիւնը այն է որ՝ անանկ էակ գըտնըվիլը չի դաւանիր . կամ տաճա շիտակը ըսենք . կոյ մի չկոյ մի տէյի կը ասարակուսի (2) : Ուստի այս երկու գեշութենս

Ծ. : (1) Առաջին կուռք կամ սուտ աստուած՝ Բէլը ըլլալուն կը վկայէ երանելին Յովհան Խնասասեր հայրապետը ընդդէմ Պաւղիկեանց Տառնն մէջ . « Քաղդէացւոյն . . . զգերամբարձ . . . և եալն մարմնոյն տրամադրութեամբ՝ աստուա . . . ծօրէն իմն պատուով պատուեցին : Եւ սորա « խաւար շարապաշտութեանն զբոլոր փեղերս « ընդ իւրն կալեալ կուրացոյց . ըստ իւրաքանչ . . . և իւր լեզուաց այլաձևելով զնորա զանուն . . . « Քուշացիք՝ Նեբրովթ . Բաբելացիք՝ Բէլ » : և այլն : Եւ Պարդան վարդապետ Հայկոյ համար կըսէ . « Ոչ պաշտեաց ընդ եօթանասուն և մի « նահապետս երկրի զպատկերն Բէլոյ (Գովեստ « Լուսավորչի) :

(2) Անհնար է որ մարդըս խեղքը կըսրելով

սկիզբը մի և նոյն ժամանակի կուգայ :

Քրիստոսէ առաջ ազգերը իրար չի յարգելնուն համար՝ մէկ իմաստուն մը գիրք մը գրելու ըլլար նե՝ ուրիշ լեզուի իմաստունները անիկոյ բանի տեղ չի դնելով չէին թարգմաներ : Յոյնք գիտէին որ՝ Հընդիկներն ու Եգիպտացիները իմաստուն մարդիկ են : Բայց գիրքերնին Յունաց լեզու թարգմանած չեն : իմաստութեան հետևողները անձամբ կելլէին Հնդկաստան և Եգիպտոս կերթային : և սորվածներնուն հետ իրենց խելքէն ալ բաներ խառնելով ամենուն մէկէն վարպետը իրենք եղածի պէս կը ձևանային (1) : Քրիստոսի գալէն ետքը լեզուաց խրատիբը վերցըվէն զառ՝ այլ և այլ լեզու խօսին ալ մէկ յատուկ Աստուածային շնորհք մը եղաւ : և ստով՝ այլ և այլ ազգաց իրարու հետ հաղորդութիբը և կրթութեան ծաւալելը աւելի դիւրին եղաւ :

---

կամ փիլիսոփայներուն ըսածին պէս՝ հոյեցողապէս անաստուած ըլլայ : մարդոյս մըտքին դէմ է Աստուած չկայ ըսելը : ուստի Պլուտարքոս կըսէ : աշխարհի մէջ բնաւ արեւ չի ծագած տեղ գըռնելը՝ անսոճներու երկիր գըռնելէն դիւրին է :

(1) Աստուածաշունչի Եօթմանամից ըսված Յունական թարգմանութիւնը՝ Քրիստոսէ 300 տարիի մը ջափ առաջ ըլլալով՝ ըսածիս դէմ կուգայ : Բայց ասիկայ՝ Աստուածային տեսչութեան յատուկ գործ մըն էր կըսեմք : որ Յոյնք հին օրինաց տեղեակ ըլլալով՝ նորն ալ դիւրաւ ընդու-

## Պ Ա Տ Ճ Ա Ռ • 3 :

## Կենաց կարճութիւնը :

Ինչ մարդու մշտքին կարողութիւնը՝ այլ և այլ զօրութիւն ունի • մի և նոյն բանը երկու մարդու առաջարկեսնէ՝ երկուքին հասկընալը ճիշդ միակերպ չըլար : Եւ որովհետեւ գիտութեան յառաջագէժ ըլլալը՝ հիմնական կանոնները սորվելէն ետքը դիտողութիւններով և փորձերով այն կանոններուն ապացոյց գըտնելով կըլայ • որով կանոնները բացասելոյն եղանակը կը շատնայ և կը դիւրանայ • ուստի դիտողութիւնն ու փորձը գիտութեանց յառաջանալոյն և ծաղկելոյն շատ հարկաւոր բան է :

Ըսենք որ մէկ մարդ մը վարպետ աստղաբաշխ ըլլալով աստեղաց և մոլորակաց ընթացքներուն

---

նին : Այս պատճառիս չի հաւնողէն՝ ուրիշ պատճառ սորվել կուզեմք • և թէ որ ուրիշ ազգէ մը օրինաց դիւքալ այն ատենը Յունարէն թարգմանիկեցաւ նէ՝ կուզեմք իմանալ թէ ի՞նչ էր այն՝ և ո՞ւր մնաց : Մեր ըսած պատճառը չընդունիլ և ուրիշ պատճառ չգիտեմ կամ առանց պատճառի բան մըն էր եղաւ ըսելը ծաղրական է :

վրան մէկ բան մը գիտեւ լ սկսաւ . շատ գիտողութիւն  
կուզէ որ՝ այն բանին կանոնը և համեմատութիւնը  
և գործը գրանէ : Օրոց փոփոխութիւնը մտարակաց  
ընթացքներէն դուշակելը՝ մէկ երկու անգամ գի-  
տողութիւն ընելով լրմըննալու բան չէ : Սեպեմբ  
թէ՝ մէկ մարդ մը գիտողութիւն մը ընել սկսաւ .  
բայց անկէց վերջին հետևութիւնը հանելու իր  
կեանքը չօգտեց, մեռաւ : Ուրիշ մը նոյն գիտողու-  
թիւնները շարունակելու սկսելով թէ և առաջինին  
ձրգած տեղէն առնէ՝ մտածելու եղանակը տարբեր  
ըլլալով՝ գիտողութիւններն ալ տարբեր կը լլան . և  
Ադէքսանդրիոյ դպրոցին մէջ չորս հարիւր տարիէն  
աւելի աստղաբաշխութիւն վարպետներ կեցած իբէն՝  
այս գիտութիւնս անոնց մէջ թերի ըլլալը իմաս-  
տունները կը խոստովանին , և սպառճառը այս ըսած-  
նիս է : Հիմայ քիշ մը առաջ գացած է նէ՝ ընկե-  
րութիւններ հաստատուած ըլլալուն համար է . որով  
շատ մարդ մէկ նպատակի վրայ աշխատելով՝ երկա-  
րակեցութեան կողմանէ եղած պակասութիւնը մար-  
դոց շատութիւնով լեցուցեր են . և թէպէտ այս ալ  
թերութիւն ունի , քանզի մի և նոյն բանն է որ  
շատ մարդ մէկէն կը քըննեն . և այն բանը մինչև  
քանի մը անգամ չի կրկնելի նէ՝ հետևութիւն մը  
հանելու չափ ասպահովութիւն տրվող փորձ չի կըր-  
նար ըլլալ . բայց ինչ որ է նէ՝ Աքատեմի ըսված  
ընկերութիւնները գոնէ այն կողմէն գիտութեանց  
յառաջադէմ ըլլալուն մեծ օգուտ ունին , որ ըն-  
կերաց մէկին չի տեսածը՝ մեկալը կը տեսնէ . մէկին

չի խորհածը՝ մեկալը կը խորհի • մեկը մեկ կերպ կը մտածէ՝ և մեկալը ուրիշ կերպ • և ետքը ամեն մեկուն ըրած գիտողութիւնները և խորհրդածութիւնները մեկ տեղ գալով՝ իրարու հետ կը միանան, մեկ ամբողջ մը կը լլան, և եղածին չափ կատարելութեան կը մօտենան։ Սակայն ասոնք ասանկ իբէն ալ՝ հիներուն գիւտերուն մէջ անանկ բաներ կը գըտնեմք որ՝ նորերը մինչև գտեր են նէ՝ շատ յոգներ են • մինչև հիմա չի գըտնըված վարպետութիւններ ալ կան • մանաւանդ մեքենական և քիմիական գիտութեանց վերաբերեալ, որ հիներուն ունեցած ըլլալը յայտնի նշաններով ստուգված է։

Մարդս բարուց կողմանէ կատարելութիւն՝ կեանքը կարճընալէն առաջ ըսկըսու կորսընցընել, և երկարակեաց նահապեաց չարութեանը համար էր որ Աստուած ջրհեղեղը տուաւ։ Անկէց ետքը կեանքերը կարճընալ սկըսան նէ՝ թէպէտ պատիժ էր, բայց յատկապէս բարերարութիւն ալ էր • չըլլայ որ մահը մտնալով չարութիւնին ելելցընեն, և այլոց ալ չար օրինակ ըլլան։ Ասոր պատահական մեկ հետևութիւն մը եղաւ մեկ ալ ուսմանքներուն ետ մնալը • քանզի չարութեան օրինակ ըլլալու ժամանակ չունենալն իբէն՝ աղէկ կը թուութեան ուսուցիչ ըլլալու ժամանակն ալ պակասածի պէս եղաւ։

Բայց դուն Աստուածային խնամքը տես՝ որ աղէկ մարդոց երկար ապրելով՝ ուրիշներուն երկար ատեն օրինակ ըլլալը՝ բնական կարգի մէջ անանկ մեկ կերպով մը մը արուցեր է որ՝ ամեն ատեն աչ-



քերնուս առաջնէ և սովորական ըլլալուն համար միտք տալու արժանի բան մըն ալ չենք սեպեր. բայց յիրաւի մտածելու և զարմանալու բան է: Թէ որ աշխարհիս մեջն անժուժկալու թիւնը վերնալուն հնարը գըրանըվի նէ՝ շատ մը հիւանդութիւններ կան որ՝ անոր հետ կը վերնան, կը բնանք ըսել թէ ամենէն ալ կը վերնան: Ասիկայ ամէն մարդու խելք կը վկայէ. բայց մէկ շիտթ եղանակաւ մը. ուստի պարզել և բացատրել պէտք է: Թէ որ աշխարհի մեջ բարուց գեշութիւն չըլլար նէ՝ բնական գեշութիւն ալ չէր ըլլար պիտի ըսեմք: Ներսէ կայսեր ատենը Հռոմայեցւոց շատ գեշցած ատենն էր. բայց անանկ ալ հիւանդութիւններ ելան որ՝ առաջկուց տեսնելիս չէին. և քաշողներն ալ բժիշկներն ալ անունին չգիտէին: Սենեքա փիլիսոփայն՝ որ այն ժամանակի մարդն է, կըսէ. այսքան անհամար հիւանդութիւններ տեսնելով զարմանալ պէտքը չէ. մէկ մըն ալ կերակուր եփողներուն շատութիւնը նայէ: Ըսել կուզէ որ՝ կերակուր եփողները որքան շատնան՝ և իրենց արուեստը բարակցընեն, և մարդոյս ակորժակը բանալու համար վարպետութիւն բանեցընեն նէ՝ հիւանդութեան տեսակները այնքան կը շատնան: Եւ մէկ երևելի Քրոնոսըղ քարոզիչ մը՝ որ իր բարակ մըտքով ամէն բանի խելք հասցուցեր էր, կըսէ. մարմնաւոր հեշտութիւնները իրենց ետեւն իյնող մարդոցը ինչ տանջանք և նեղութիւն կուտան նէ՝ անոր նմանը յանցաւոր մարդոց տանջանք տրվող բռնաւոր լըս-

ված է մի : Մարդկային ազդի մէջ չի լսուած հիւանդութիւններ և գէշութիւններ բերին այս հեշտութիւններըս , որ բժիշկները գրեթէ ամէնը մէկ բերան կըսեն . արուեստին մէջ սլինա դժուար՝ և մէկ փորձը մէկալին չի նմանելով՝ կանոնի ասկ չի մըտնող հիւանդութիւնները՝ մարմնաւոր հեշտութիւնէ եկած հիւանդութիւններն են : Մահացու ըսուած մեղքերը մէկմը աչքէ անցնւր ըսած մըտքովս մտածելով , ամէնուն ալ ծայրը մէկ մէկ վտանգաւոր հիւանդութի կը գըտնես : Հպարտ մարդը թէ որ իրեն ակնկալութի ըրած պատիւը չի գըտնէ՝ և սըղտիկ իյնայ . և նախանձողը մէկ ուրիշին յաջողութիւնը իմանայնէ՝ սրտին ցաւէն կը ճանի ըսելը՝ ուսկիական զրուցվածք մըն է , բայց սրտին կիրքը կատարեալ կը յայտնէ : Բարկացողին յանկարծ կաթուած իջած մեռած գըտնելուան օրինակները չըսեմք , ասոնք շատ ալ ըլլաննէ՝ ամէնուն չեն պատահիր . բայց թէ որ ներսին ինչ ըլլալը՝ դըրսի նշաններէն՝ հասկըցվիլը ստոյգ էնէ՝ (որ մարդ չի կասկածիր ասոր) , մեկուն բարկացած ասենը մէկմը երեսին գոյնը նայէ . աչլըները նայէ . բազկերակն ալ բռնէ . և գէշ տենդէ (հիւմմայէ) բըռնըված հիւանդի մը երեսին և աչքին և բազկերակին հետ բազդատէ . երկուքը մէկ կը գըտնես : Ծայր՝ նստած տեղէն չեւեր , կերածը չի կըմնար մարտել : Ագահը՝ ժողված ստակը եվելցընելու համար միշտ մըտմըտքով կեանքը կը մահէ . և թէ որ գողի ձայն մըն ալ առնէ նէ՝ ահով դողով գիշերվան

քունը կը կորսընցընէ : Որկրամուտեան և բղջա-  
խոհուածեան համար ալ վերը ըսինք : Այս մեղքե-  
րես ազատ մարդը՝ ախտերէն ալ ազատ կըլայ •  
կեանքն ալ երկար կըլայ : Ուստի ամէն ատեն պա-  
հեցող և սրբակաց մարդիկ երկար ապրեր են • և  
մեզի օրինակի համար բաւական ըլլայ սուրբ Անտոն  
անապատականը, որ 251 թուին ծնաւ և 356 թուին  
մեռաւ, ըսելէ որ՝ 105 տարի ապրեցաւ • որ ոչ  
ամառը զինքը արեւուն տաքէն կը պահպանէր, և ոչ  
ձըմեռը պաղ հովերէն և անձրևէն և ձիւնէն • կե-  
րակուր եփոզները ասոր համար չլին • բայց ինքը  
կապրէր • աշխարհիս փափկութիւնները վայելէնք  
ըսելով՝ կայսերութիւնը իրարու ձեռքէ յափշտա-  
կելով՝ քսան և չորս կայսր մեռան ետեւ ետե : Հա-  
րանց վարքին մէջ ճգնաւորաց պատմութիւնները  
կարդացող մարդը՝ ասանկ երկարակեաց մարդիկ  
չատ կը գըտնէ • և կըրնամ ըսել որ՝ ուրիշ պատ-  
մութեանց մէջ ալ երկարակեաց գըտնելի նէ՝  
վարքը Հարանց վարքին մէջ գրվածներուն մօտ  
պիտի ըլլայ :

Ասոնք խորհելով Պաքոն փիլիսոփայն՝ որ բնա-  
կան կերպով մարդոյս կեանքը երկընցընելու ետեւ  
էր Բարաչելոսին պէս, (որ Խ գլխոյն՝ Բ յօդուածին  
մէջը յիշեցինք), կըսէ : « Թէպէտ և մարդոյս կեան-  
քը շարունակ խեղճութեամբ և յանցանքով լե-  
ցուն է, որ յախտենականութիւն ցանկացող մար-  
դուն աչքին ոչինչ բան մը պիտի երևի, բայց  
« քրիստոնէին պէտք չէ որ այս կեանքս ալ անար-

« գէ • քանզի կեանքը առաքինի գործոց միջոց մը  
 « ընելը իր ձեռքն է : Եւ յերաւի կը տեսնեմք որ՝  
 « Յիսուսի սիրելի աշակերտը ամէն առաքեալներէն  
 « եղել ապրեցաւ (1) • և եկեղեցւոյ հայրապետ-  
 « ներուն շատը մանաւանդ ճգնաւորները և անա-  
 « պատականները խորին ծերութեմ հասան • և կը բնաճ  
 « ըսել որ՝ Քրիստոսի գալստենէն ետքը ժամանա-  
 « կաւոր օրհնութիւնները շատը վերցան և հոգևորի  
 « փոխվեցան նէ՛ երկար կեանքը վերցած չէ (2) :

Ուսման և կրթութեան և բարուց կողմանէ եր-  
 կարակեցութեան պակասը կը լեցընէ զիրը • անոր  
 համար հասարակաց թէ՛ բարոյական և թէ՛ մտաւո-  
 բական կրթութեան յառաջադիմութի՛ ուղող մար-  
 դիկ իրենց գիտցածը գրով յետագայից կաւան-

---

Ծ• : (1) Ասոր պատճառը նոյն ինքն Յովհաննէս  
 Աւետարանիչը՝ հոգին աւանդելու ատենը ըսաւ •  
 « Ո՛ր զիս պահեցեր մինչև ՚ի ժամանակս յոյս՝  
 « անմերձ ՚ի խառնակութեմ կանանց : (Հանգիստ  
 Յովհաննու) : Այս պատճառիս Պաքսոն տեղե-  
 կութիւն չունի :

(2) Քրիստոսի ասած երանութիւններուն մէջ՝  
 Մովսէսի օրինապահներուն խոստացած երկրա-  
 ւոր աղէկութիւններուն մէջէն միայն երկարա-  
 կեցութիւնը կոյ • (մատթ • Է • 5) : Ուրիշները  
 հոգևոր բարիք են : Աւետարանի այս գլուխս  
 բաղդատէ Մովսէսի ըսածներուն • հետ • (Թ •  
 օր • Ի՞՞ • 1 = 14) :

դեն , և ասով չէ թէ միայն երկար ապրած՝ այլ և  
անմահ յիշատակի արժանի եղած կըլլան : Հաս  
հայրապետներ և շատ իմաստուն մարդիկ աշխարհս  
եկեր են , բայց օգտակար գիրք շինողներուն անու  
նը մինչև հիմա կը զրուցի : և մարդիկ անձամբ եր  
կար ապրիլը կորսընցընելէն ետքը՝ անունով երկար  
ապրելու կը փափաքին : բայց երանի թէ անունին  
հասարակաց բարեբարութեան մը հետ կապված ըլ  
լայ , քանզի անունին միայն գերեզմանին վրայ  
ձըգված քարին վրան կարդացիլը անզգամաց և  
անմտաց յատկութի կուտայ՝ Գաւթի մարգարէն .  
« Անդգամք և անմիտք կորիցեն , և թողցեն օտարաց  
« զմեծութիս իւրեանց : Գերեզմանք տունք նոցա  
« եղիցին յաւիտեան , և յարկք նոցա ազգէ մինչև  
« յազգ , և կարդասցին անուանք նոցա ՚ի հոշս իւր  
« եանց : (սաղմ . խ . 10 . 11 . 12) : Եւ ասանկ  
ները անասունէն շատ տարբեր չի սեպելով՝ « Մարգ  
« ՚ի պատուի էր և ոչ իմացաւ , հաւասարեցաւ ա  
« նասնոց անբանից » կըսէ : Եւ յիրաւի մեռնելէն  
ետքը անունին ոչինչ բաներու կապված մարդիկ՝  
Աղէքսանդր Մակեդոնացիին ցլագլուխ ըսված երի  
վարէն՝ և Պերիտաս անուն որսորդ կենդանիէն ինչ  
տարբերութիւն կունենան , որ երկուքին ալ մեռած  
ատենը անունին մշտնջենաւորելու համար Աղէք  
սանդր ասոնց անունով մէկ մէկ քաղաք շինեց (1) :

---

Ծ. : (1) Պլուտարքեայ զուգակշիռք , հատոր . և ,  
թղթ . 122 :

Բարեկիրթ զաւակ հասցընելը, ամեն մարդու ան-  
խըտրաբար իր ձեռքէն եկածին չափ աղէկութիւն  
ընելը, և ուրիշ ասոնց պէս բաներ կան որ՝ առանց  
ծախքի և առանց յոգնելու կըրնան ըլլալ, և անմա-  
հաւթեան ալ միջոցներուն աղէկն են: Այս աշխար-  
հիս մէջ անուանին կը մոռցըվի աէյի կասկած ընել  
պէտք չէ. քանզի Թո՛ղ որ իրօք անմահութենէն չեն  
վրիպիր անանկները, աշխարհի մէջ ալ յիշատակնին  
փառաւոր կըլլայ: ՍԷ Յովհան Գբնեցին՝ մարդ կային  
փառքէն փախչելով՝ անջուր հորի մը մէջ կը ճըգնէր  
նէ՝ վարքը հասարակաց բարի օրինակ ըլլալու հա-  
մար գըրվեցաւ և կը կարդացըվի: Ճգնաւորներն ալ  
լեռները անապարտները՝ զաղաններուն և անասուն-  
ներուն մէջ կապրէին՝ որ զերե՛ք մարդ չի ճանչնայ,  
անանկն ալ եղաւ որ՝ իրեն քովը գըտնըվողին պար-  
տականուի ձգեց, որ մարմինը Թաղէլէն ետքը՝ գե-  
րեզմանին տեղն ալ անյայտ ընէ: որ բնաւ յիշատակ  
չունենալով մոռցըվի: Բայց ան՝ որ իր շնորհքովը  
ասոնք պայծառ ճրագի պէս վառեց իւր եկեղեց-  
ւոյն լուսաւորուէր համար՝ մոռացութե՛ գրուանին  
տակը չի Թողուց: Այս կողմէն Աղէքսանդր և  
Յուլիոս Աեսար՝ որ միոյն անուանին դրուցել տա-  
լու համար աշխարհ արիւնով և աւերակով լեցու-  
ցին, ասոնցմէ աւելի բան մը չի կըրցան վաստղկիւ՝  
մանաւանդ՝ շատ ալ պակաս մնացին. քանզի ամենը  
մեզ գովեն ըսեն իքէն՝ խելացի մարդոց պարսաւելի  
եղած են: Բայց սուրբերուն յիշատակէն գալու-  
թիւնը չի զատիր:

## ՊԱՏՃԱՌ • 4 •

## Բռնական կառավարութիւն :

Սարգս ընկերութենէ դուրս չի կրնար ապրիլ . քանզի բնապէս ընկերութեան համար ստեղծված է : Անկարգ ընկերութեան մէջ ալ չի կրնար ապրիլ . քանզի ամէն արարածի սրահայանութի՛ մէկ կարգի մը կարօտ է . և ո՛ր կարողութեան վերաբերեալ կարգը կորսըվի նէ՛ , այն կարողութիւնն ալ կամ կը տկարանայ , կամ բոլորովին կը կորսըվի : Բնական կարողութեանց կարգը ավերըվի նէ , ինչպէս են մարտողութիւնը , արեան շքնան առնելը , և այլն . բնական կարողութիւնը կը տկարանայ . և առողջութեան տեղ ճիւանդութիւն կուգայ . և թէ անկարգութիւնը զօրանայ նէ՛ , անդամոց իրարմէ կախում ունենալը կը դադրի . և մարդըս կը մեռնի : Բարոյական անկարգութիւնն ալ բարոյական կատարելութիւններուն մահ է . մտաւորական անկարգութիւնն ալ մտքին կարողութիւններուն մահ է : Անոր համար՝ երբ որ Ադամ Աստուծոյ հրամանին անհնազանդ գըտնըվելով գլխաւոր կարգը ավերըվեցաւ՝ մարդոյս անդամոցն ալ իրարու հնազանդելու կապը քակըվելով՝ անհնազանդութիւն մը տիրեց . մարմինը հոգիին և հոգին մարմնոյն հակա-

ոսկի բաներ ուղեւ ըսկըսան, և ասոր բնական հե-  
 տեու-թիւնը մահէն զատ բան չէր կըրնար ըլաւ, որ  
 է կենսական գործարանքներուն իրարմէ կախում  
 ունենալուն կատարելապէս դադարիլը, կամ մարմինը  
 հոգւոյն սպաւորած շարժմանցը անհնազանդ ըլա-  
 լը, որով հոգին՝ սրբող և անմահ էակ՝ և մարմնոյ  
 կարգին գլուխը՝ մարմնոյ հետ գործ մը ունենալ չի  
 կըրնալով՝ մարմինէն կը զատուի: Ուստի Աստուծոյ  
 ըսածը, « Յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ՛ մա-  
 « հնու մեռանիցիք », իբրև սպառիժ սպառնալիք չէր,  
 ըլալէքը յայտնեւ մըն էր, ինչպէս երբ որ մէկու մը՝  
 աչքըդ գոցես և անանկ ճամբոյ քալեսնէ՛, ոտքըդ  
 քարի կը զարնես ըսելը սպառնալիք չէ, իրեն ըրած  
 անխոհեմ գործոյն հետեու-թիւնն է: Այս է Սողո-  
 մոնի ըսածը, « Աստուած զմահ ոչ արար (Իմաստ-  
 ան • 13) • քանզի թէ որ մահը իբրև սպառնալիք  
 եղած ըլարնէ՛, ինքը ըրած կըլար: Այլ « Ար-  
 « և դարու-թիւն անմահ է » • այսինքն՝ ամէն բան իր  
 կարգին մնալու ըլայնէ՛, թէ բնական և թէ բա-  
 րոյշական կարգի մէջ, անմահ կըլայ • քանզի Արդա-  
 րու-թի ըսելը՝ ամէն բան իր կարգին ըլալ ըսել է:

Բնական արդարութեան կամ բարեկարգու-թի  
 ավրելիլուն հետեու-թիւնը՝ կենդանարար հոգիին  
 մարմնոյն վրայ իր գործը չի կըրնալ կատարելն է, որ  
 է հիւանդութիւն և մահ: Բարոյական արդարու-  
 թեան ավրելիլուն ալ հետեու-թիւնը՝ իմացական  
 սկզբան մարդոյս վրայ ներգործելուն տկարանալ և  
 խանգարիլն է, որ է իմաստութեան և բարուց և



կրթութեան մասը և այսինքն՝ ազիտութիւնը և մա-  
լութիւնը և անկրթութիւնը։ Եւ այս կողմն թէ  
որ մարդըս անկրթ ստեղծվեցաւ, և ետքը ինքն  
իրեն խելքով կրթութեւն ճամբաները գտաւ ըսող-  
ներուն խօսքը մտածենքնէ, մարդըս մեռած ըս-  
տեղծվեցաւ, և ետքը կենդանանալուն ճամբաները  
ինքն իրեն գտաւ ըսելու պէս կըլլայ։ Թէ որ ան-  
կրթութիւնը կրթութեան պակասութիւնն է նէ՝  
առաջ կրթութիւնը եղած պիտի ըլլայ, որ ետքը  
պակասի։ Քանզի գոյակներուն վրան եղած  
յատկութիւնը պակասած է ըսելու համար՝ հարկ է  
որ գոյակը այն յատկութիւնը առաջկուց ունե-  
ցած ըլլայ։

Ընկերութեան մէջ եղող մարդոց կարգը՝ արդա-  
րութիւնն է. անոր համար մարդս ընկերական ըս-  
տեղծվեցաւ ըսող մարդուն հարկ է ըսել՝ որ ար-  
դարութեան առաջին սկզբունքները մարդըս Աս-  
տուծաւ առաւ. այս հետեութեանս հարկաւոր ըլ-  
լալը փիլիսոփայներն ալ կը ճանչնան։ Եւ այս ար-  
դարութիւնս քանի որ ընկերութեան գլուխ եղող-  
ին վարուցը կանոն եղած էր նէ՝ բանեցուցած իշ-  
խանութիւնը օրինաւոր ըլլալով ընկերութեւնը չէր  
քակվեր, ամբողջ կը կենար. քանզի մասնաւոր մար-  
դիկ արդարութեան դէմ գործելով կարգը քակել  
ուղէիննէ՝ գլուխ եղողը արդարութեւն պաշտպան  
կենալով՝ այն մասնաւոր մարդոց ըրածին առաջ  
առնելու ճամբան կը գըններ. և անով կարգը չէր  
ալօրվեր։ Եւ ասանկով ամեն մարդ հանդարտ և

ապահով մնալով՝ և իրարմէ կասկած չունենալով՝  
 իրարու հետ կը վարվէին, և միտքերնին իրարու կը  
 հաղորդէին . և կըթուծուէնը կը զօրանայր :

Կառավարութիւնը գլուխ և շոշին գործը՝ օրինաց  
 և արդարութեան գործադիր ըլլան է . այս վերցա-  
 ծին պէս՝ հասարակ մարդ մը կը ըլլայ . և իր գործը  
 ձգելէն ետքն ալ կառավարութեան գլուխ ըլլալ  
 ուղէնէ՝ օրինաւոր իշխան չըլլար, բռնաւոր կը ըլլայ :

Ամեն մարդու մը սքի մը արդարութիւն սկզբուն-  
 քը սպաւորված են . և երբ կը տեսնեն որ արդա-  
 րութիւնը պաշտպան չունի և ոտքի տակ կերթայ  
 կոր, անանկ կառավարութիւն տակ մնալ չեն ուզեր .  
 կամ իրարմէ միշտ կասկած ընելով իրարու հետ  
 վարվելնին կը քիչցընեն, կամ եղած տեղերնին կը  
 ձգեն այս դիտ այն դին կը ցրուին, կամ ամէն մարդ  
 իրեն իրաւունքը պաշտպանելու համար զէնք կառ-  
 նէ՝ և կապրտամբին, որ մարդկային անկարգութեց  
 միջ ամէնէն գէշն է . կամ շողոքորթելով բռնաւո-  
 րին աչքը մը անեւ՝ և իրենց իրաւունքին ասանկով  
 պաշտպանութիւն գըտնեմ ըսելով մէկ մէկ մանր  
 բռնաւոր ալ իրենք կը ըլլան . որ մարդութենէն ալ  
 դուրս բան է : Եւ ասոնց ամէնն ալ կըթուծեան և  
 մարդութիւնը գէմ բաներ են : Եւ բռնական կառա-  
 վարութեան հարկաւոր հետեւութիւնը ըլլալով՝ բռ-  
 նական կառավարութիւնը անկըթուծեան մեծ  
 պատճառ կը ըլլայ :

Եւ յիշուի թէ որ պատմութիւնները կարդա-  
 ւու ըլլանք նէ՝ կը հասկընանք որ՝ ինչ ազգի կա-

նազարուծեան մը բռնութիւն մտած էնէ՝ անոր  
մէջ բարբարոսութիւն և անկրթութիւն ալ մտած է :  
Մասնաւորապէս մեր ազգային պատմութիւնը մէկ  
մը աչքէ անցընեմք :

Հայկէն մինչև Աբայ և մինչև Կարդոս՝ ազգը  
անձնիշխան եղած ատենը աշէկ ծաղկած ալ էր . և  
նահապետաց շատը երևելի շինութիւններ ըրին  
Հայաստան : Աբամ՝ կրթութիւնը ինչո՞վ ըլլալն ալ  
հասկըցած էր . և Կեսարիոյ կողմէն Պայապիս Քաշ-  
եայ անուն բռնաւորին հետ պատերազմելով յաշ-  
ութեւ և փախցընելէն ետքը՝ իրեն մարդոցմէն Մշակ  
անուն մէկը հոն կուսակալ գնելով հրաման կընէ որ  
Հայերէն լեզուով խօսիլ սորվին այն ատղի մար-  
դիկ (խոր . ան . 14) . և կրթութեան տակ խօսելը  
անկէց յայանի է որ՝ այն կողմէն ըսկըսելով՝ մէկ  
դիէն Սերաստիոյ վրայով, և մէկ դիէն Մալաթիոյի  
վրայով մինչև Էրզնուրում և Տիարպեքիք և Վանայ  
կողմերը բնակիչներով լեցուց . որ այն ատղերը ըս-  
վեցան առաջին Հայք (Կեսարիոյու կողմերը) .  
երկրորդ Հայք (Միվազու կողմերը) . երրորդ Հայք  
(Մալաթիոյի կողմերը) և չորրորդ Հայք (Տիար-  
պեքիքու արևմտեան կողմը մինչև Եփրատ գետը) :  
Կարդոսէն ետքը մինչև Սկայորդի որ Հայոց առա-  
ջին թագաւոր Պարոյրին հայրն է՝ հազար տարի  
մտ ժամանակ կանցնի, պատմելու արժանաւոր բան  
մը գըտնելիս չէ . ուստի այսքան ժամանակի համար  
Մանթեզքիեոյի ըսածը կըսեմք . երանի այն ազ-  
գին՝ որ պատմելու արժանի բան չունի : Եւ պատ-

մութեան տեղ սա համառօտ խորհրդածութիւնս  
կընեմք որ՝ այսքան ատենի մէջ երեսուն և երեք նա-  
հապետ նստած են յորդուոց յորդի . և իշխանական  
ցեղը փոխված ալ է նէ՝ խոսվութիւն մը եղած չի  
սրտամըլեւան համար իրաւունք ունիմք ըսելու որ՝  
իշխանները ժառանգ չունենալով՝ մօտ ցեղի մը  
անցած է . և իրարու վրայ հաշուելով՝ իշխանութիւն-  
նին երսունական տարիէն ելել կը գըտնենք . և ա-  
սիկոյ ուրիշ թագաւորութեանց հետ բաղդատելու  
ըլանք նէ՝ Ասորեստանեայցը մէկ դի տանելով, ու-  
րիշներուն ամենէն շատ կը գըտնենք . քանզի Պար-  
սից թագաւորներուն տարին՝ իրարու վրայ հաշուե-  
լով՝ 17 ական տարի կելլէ . Հռօմայեցւոց կայսերա-  
ցը Օգոստոսէն մինչև կայսերութեան բաժանումը,  
կամ մինչև Վաղէս՝ 6 ու կէս տարիէն քիչ մը ելել .  
Վաղէսէն մինչև վերջին Վոստանդին՝ 11 տարի և  
3 ամիս : Միայն Ասորեստանեայցը կը գըտնեմք 35  
տարիի չափ : Եւ թագաւորաց երկար ատեն իշխելը  
շատ անգամ խաղաղութեան նշան ըլլալով՝ գինէ  
իր ազգին մէջ , էփ աղէկ կը թութեանց օգնութիւն  
կընէ : Պարոյրէն ետքը մինչև Վասէ թագաւորը՝  
որ անխոհմութիւն Աղէքսանդրի հետ պատերազմե-  
լով յազթըվեցաւ , և թագաւորութիւնն ու կեանքը  
մեկէն կորսընցուց , երևելի է Տիգրան Երուան-  
դեան թագաւորին օրովը Հայոց մէջ եղած կը թու-  
թիւնը : Արշակունի թագաւորաց առաջինը Վա-  
ղարշակ՝ թագաւորութեան բաները ինչ գեղեցիկ  
կարգի դրաւ , խորենացին կը պատմէ : ( Բ . 6 . 7 . 8 . )

անոր յաջորդը Արշակ՝ և Բաղու՝ կարգս ուղղու-  
 և թեանց գործեաց՝ կըսէ Խորենացին (Բ․ 9) ։  
 Անոր յաջորդը Արտաշէս՝ սև ծովէն մինչև Ճերմակ  
 ծով օրեկէն ետքը Հռոմայեցւոց տերութիւնը վայ  
 ալ աչք տընկելով՝ Ճերմակ ծով պատերազմական  
 նաւերով լեցուց ։ Ըսել է որ՝ ասոր օրը նաւարկու-  
 թեան արուեստաւ մտաւ մեր մէջը ։ Հիմա անանկ  
 վերցըված է որ՝ առաջկուց գըտնըվելուն զօրաւոր  
 վկայ չունենայինքնէ չկինք հաւատար ։ Այս թա-  
 գաւորաց կարգովը իջի՛ր մինչև Արշակունեաց թա-  
 գաւորութեան վերնալը ։ և ասկէց ինչ ըլլալը երա-  
 նելի Խորենացիին հարցնւր ։ և Վրդովեցաւ խաղա-  
 ւա ղութիւն կըսէ ։ արմատացաւ անկարգութիւն  
 (Գ․ 68) ։ Հայկէն մինչև Խոսրովայ ատենը մեր աղ-  
 գային պատմութեան մէջ նախարարաց անմիաբանու-  
 թիւն չկայ ։ և ասով ուրիշ կառավարութիւններուն  
 և ազգերուն ամենէն աղէկ է ։ քանզի հին թագա-  
 ւորութեանց մէջ յաճախ ապստամբութիւն չեւած  
 և բաժանումներ չեղած քիչ կայ ։ Հռոմ քաղաքին  
 հիմնադիրը Հռոմուլոս՝ իր եղբայրը Հռեմոս իր  
 ձեռքը կը մեռցընէ ։ պետութեան նախարարներն  
 ալ ղենքը կը մեռցընեն ։ և այն ատենէն տեսակ տե-  
 սակ անկարգութիւններ պակաս չեն ։ որ Ճօյա ալ  
 կը յիշէ Քաղաքավարութեան մէջ ։ Յունաց պատ-  
 մութիւն սկիզբէն մինչև վերջը քաղաքական անմիա-  
 բանութեանց պատմութիւն է ։ նոյն իսկ Ասորես-  
 տանեաց թագաւորութե մէջ՝ կինը իւր այրը մեռ-  
 ցընել ։ և զաւակը իւր ծնողին հետ պատերազմիլ ։ և

զօրքը իր Թագաւորէն սպասամբելով զօրապետին  
 Թագաւոր ընել և Թագաւորնին իր պալատին մէջ  
 քանտը դրածի պէս ընել, մինչև յաւաստեալով  
 ինքը զինք այրեց, ասանց մկնալ մեր ազգին պատ-  
 մութեանը մէջ չեմք տեաներ հին ատենները: Առ-  
 զին մէջ քաղաքական խռովութեանց առաջին կը  
 դըմնեմք պատմութեանց մէջ՝ առաջին Արտաշէս  
 Թագաւորին ժամանակը • Քրիստոսէ 90 տարի ա-  
 ռաջ, և Հայկէն 2017 տարի ետքը, անոր ալ ինչ<sup>Ք</sup>ն  
 և որո՞ւ ձեռքովը մեռնելը յայտնի է • քանզի խո-  
 բենացին ասանկ կը պատմէ • « Ոչ գիտեմ ասել  
 « յորպիսի ազգմանէ, ահագին իմն աղճուկ լեալ  
 « շփոթից, բազմութեան զօրացն զմիմեանս կոտոր-  
 աեալ • իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս  
 « ասեն, յիւրոց զօրաց (Բ • 12) : Եւ այս Որպէս  
 Ասեն ըսելը՝ կատարեալ ստուգութիւն չունեցող  
 խօսք մըն է ըսելու պէս է: Բայց անկէց ետքը քանի  
 որ տէրութիւնը տկարացաւ նէ՝ անկրթութիւնը և  
 նախարարաց անմիաբանութիւնը ելկեցաւ • անանկ  
 որ՝ ազգիս բնական չեղած և ետքէն մտած անմիա-  
 բանութիւնը և սիրոյ պակասութիւնը բնականի պէս  
 ըսկըսաւ սեպիլի • քանզի թէ որ այս մտութիւնըս  
 մեր ազգին վրայ բնական ըսալու չափ հինցած ըլ-  
 լար նէ՝ հին պատմութիւններուն մէջ յիշատակը  
 պիտի դըմնէինք:

Եւ այսպէս քանի որ մեր ազգին մէջ իշխանու-  
 թիւն մնաց՝ նախարարները բռնական կառավարու-  
 թիւն բանեցընել ուղիւով Թագաւորը իրենց կու-

սակից գըրանէին նէ՝ մէկ տեսակ գէշութիւն, հակա-  
 աակ գըրանէին նէ՝ ապստամբութիւն գրգռելով և  
 օտարաց ձեռքը տալով հազար տեսակ գէշութիւն  
 կը հանէին. և այսքան գէշութեանց մէջ կրթութիւնը  
 պակասիլը հարկաւորի պէս բան մը եղաւ. և առաջ  
 ամէն մարդ անկիրթ էր և ետքէն կրթութեան տակ  
 մըրանել սկսան ըսողներուն խօսքը՝ սուտ հանելու  
 կենդանի ապացոյց մը եղանք աշխարհիս մէջ, աղէկ  
 կրթութեան վիճակէն անկրթութեան վիճակը իյ-  
 նալովին: Բայց յոյս կոյ որ՝ մեր վրոյ խշտղար-  
 դարասէր կոյսերութեան հովանաւորութիւնը տակը  
 նորէն կրթութիւնը առաջինէն աղէկ և հաստատուն  
 կերպով մեր մէջը կը մըրանէ. մանաւանդ որ՝ գիտու-  
 թեանց և կրթութեան ճաշակը կառավարութե մէջ  
 մտած ըլլալով՝ ՚ի հարկէ անոր խնամոց տակը գըր-  
 նըված հպատակներն ալ՝ թէ որ բոլորովին անարգ  
 ըլլալ չեն ուզեր նէ՝ կրթութիւնը պիտի ընդունին:

Պ Ա Տ Ճ Ա Ռ . 5 :

Սուտանուն գիտութիւնը:

Մարդս Աստուծոյ հետ, և իւր գոյութեանը  
 հետ, և իրմէ վարերուն կամ աշխարհի մէջ իրմէ զատ

գրանըլած նիւթական և զգալի գոյակներուն հետ  
համեմատութի ունի . և այս համեմատութիս գիտ-  
նալն է՝ որ բուն անուամբ Փիլիսոփոյցութի կըսուի :

Այս համեմատութես սկիզբը մարդոյս իր գոյ-  
ութեանը մէջ է . ըսել է որ՝ գոյութեանը հետ Աս-  
տուծմէ առած է . անոր համար՝ բնական բառը իրեն  
ճիշդ նշանակութեամբը առնելով, մարդոյս բնական  
է Աստուածպաշտութի, որ է իրեն Աստուծոյ հետ  
համեմատութեան հետեութիւնը, և Աստուծմէ կա-  
խում ունենալուն դաւանութիւնը : Քանզի մեկ  
մարդ մը իրեն ստեղծողը Աստուած ըլլալը գիտ-  
նալէն ետքը անհնար է որ անոր մեկ պաշտօն մը չի  
մատուցանէ : Եւ ինքը բանական կենդանի ըլլալը  
գիտնալով որ անբան անասուններուն պէս միայն  
զգալի բաներով չի բաւականանար, զգալիներէն  
դուրս և միայն մտքով հասկընալու ճշմարտութիւն-  
ներսալ կուզէ, դիւրաւ խելքը կը պառկի որ, ինչ-  
պէս որ զգոյարանաց միջնորդութեամբը իմացած  
իրմէ դուրս բաներուն գաղափարը և ծանօթութիւնը  
առնելը իրեն Աստուած տուած է . (քանզի իրեն  
բնական է ըսելը՝ ստեղծված ասեմէն ունի ըսել է .  
և այսալ՝ ստեղծողէն առած է ըսել կըլլայ) . ա-  
սանկալ միայն մտքով իմացվելու բաները՝ կամ  
մըտքին կատարելութիւնը՝ Աստուծմէ սորված է :  
Պղասանի ըսածը ըսել չեմք ուզեր՝ թէ մարդը  
ծընած ասեմը մտքին մէջ բնածին գաղափարներ  
ունի, որ մեծնալով քանի որ միտքը բացվինէ՝  
մարդէ չի սորված իբէնալ անոնք գիտցած կըլ-



լայ (1) • այլ կըսեմք որ՝ անոնք Աստուած անմիջապէս առաջին մարդոցն յայտնած է , և մըտքին ալ անանկ կարողութի մը տուած է որ՝ շուտով հասկընայ : Այս կարողութիւնս ինչ ըլլալը և ինչ կերպով բացվիլը և ճոխանալը հասկըցընել՝ յատկապէս փիլիսոփայութեան վրայ գրված գիրքերուն կը վայլէ • մեզի առ այժմ միայն այնքանը բաւական է որ՝ մըտքի վերաբերեալ բաները ամենն ալ յայտնեալ ճշմարտութիւններ պիտի ըլլան • ըսել է որ՝ Փիլիսոփայութեան սկզբունքը զգալիներէ դուրս՝ միայն ուրիշէ սորվելած պիտի ըլլայ : Քանզի Փիլիսոփայութեան առարկայն՝ համեմատութիւններն են • և համեմատութիւնները՝ զգայարանքով չեն իմացվիր :

Ասոր համար գիտութիւնները առանց ապացուցի չեն ըլլար • ապացոյց ըսածնիս ալ անանկ բան մը ըլլալու է որ՝ զատ ապացոյցի կարօտ չըլլայ • լըսողները ամենն ալ անանկ է ըսելով հաւանութի

Ծ. (1) Ասիկայ քրիստոնեայ փիլիսոփայից մէջն ալ ընդունող կը գըանըվի • որոնց մէկն է Տըմէսդոն • հիներէն ալ՝ Կղեմէս Աղեքսանդրացիին և Որոգլինէսի և սուրբ Գրիգոր Նիւսացիին գրուածօցը մէջ անանկ զրուցվածքներ կը գըանըվին որ՝ այս մըտքիս առնելը շատ գիւրին է : Բայց ասոր դէմ էփ աղէկ ծանր և անըւծանելի դժուարութիւններ գըանըվելուն համար՝ հասարակօրէն ընդունելի չէ :

տան : Այս հաւանութիւնս տալու համար հօրկ է  
որ խելլինին հասած և գիտցած բաներնին ըլլայ •  
և ասիկայ ինչով գիտցած ըլլալնին մտածես՝ և ա-  
ւանդութեամբ ուրիշէ սորվելով է չըսես նէ՝ ուրիշ  
պատասխան գըտնելը անհնար է :

Քանզի զգայութեան տակ շինկած բաները սոր-  
վելու երկուքէն ելել ճամբայ չկայ • մէկն է՝ անանկ  
մէկէ մը ըսել և սորվելը՝ որ ասանկ բանի տեղեակ  
ըլլալուն վրայ ամենևին կասկած չըլլայ • և երկրոր-  
դըն է՝ խելքին դատումովը գըտնելը : խելքի  
դատումով գտնելած ըլլալը՝ անհնար է կըսեմք •  
քանզի դատելը՝ անսխալ բանի մը հետ համեմա-  
տելով՝ անոր յարմար գալը կամ չգալը սրտէլ և  
հասկընալ ըսել է • սէտք է մըտքին մէջ անսխալ բան  
մը գըտնելիլ և անիկայ մը տեղաց է • և ամէն մարդ  
ունի՞ մի • և ամենունը միակերպ է մի • և կըրնայ մի  
սխալիլ և սխալելու ըլլայ նէ՝ սխալը ի՞նչպէս հաս-  
կընալու է • և ի՞նչով շիտակելու է : Եւ թէ որ կըր-  
նայ սխալիւր նէ՝ անսխալ չէ • և թէ որ ամենուն դա-  
տումը միակերպ չէ նէ՝ հարկաւ միայն մէկը ճշմա-  
րիտ և շիտակ՝ և մէկալ կերպերը սուտ և սրխալ  
ըլլալու են • և ասոնց մէջէն շիտակն ու սխալը որո-  
շելու ի՞նչ կանոն ունիմք :

Մարդս իրմէ վարերուն հետ ունեցած համեմա-  
տութիւնը գըտնելու սխալներ ընէ ալ նէ՝ շիտակե-  
լը այնքան դժուար չէ • քանզի զգալի են • ըսել է  
որ՝ դատման կանոն՝ զգայարանները կըրնան ըլ-  
լալ • և ասոնք սխալին ալ նէ՝ իրար կըրնան շիտ-

կել (1) : Բայց մարդ մարդու հետ և Աստուծոյ հետ ունեցած համեմատութիւնները՝ որ են կրօնական և բարոյական պարտականութիւնները՝ ասանկ մէկ զգալի բանմը չունին , որ անոնցմով չափէ և սխալը հասկընայ :

Աշխարհի մէջ որքան ազգ կայ նէ՝ ամենն ալ գիտեն որ՝ մէկուն ունեցած ինչքը ձեռքէն առնել և փոխարէնը չի վճարելը՝ անիրաւութիւն է . ծնողքը չի յարգելը՝ մարդութենէ դուրս բան է . և ուրիշ բարոյական բաներու վրայ միակերպ տեղեկութիւններ ունին : Թէպէտ անանկ ազգեր կը գըտնըվին՝

Ծ. (1) Կըլայ որ չեն կըրնար ալ շիտկել : Բժըշկական պատմութեան մը մէջ գըրված է որ՝ գլխու տենդով (պաշ հիւմմասիով) պառկած ծանր հիւանդ մը՝ բերնին համը ավրած . ինքը սաստիկ տաքութեան մէջ . երեակայութիւնը խանգարած . իրեն անանկ կուգայ որ՝ գտնըված տունը բըռնկեր է . կրակ կայ ըսելով անկողինէն դուրս կը ցածկէ : Ասոր աչքը սխալեր է՝ կրակ տեսնելով . ականջը սխալեր է՝ կրակի գոռում լսելով . քիմքը սխալեր է՝ խանձի հոտ առնելով, որ շատ հիւանդներուն այս հոտըս կուգայ . և շօշափելիքը կամ բոլոր մարմինը սխալեր է՝ տաքութիւն իմանալով : Բայց ասոնց մէկն ալ սխալած չէ . սխալողը միայն միտքն է , որ ասոնց զգացմունքը որ տեղէն գալը չէ կրցեր դատել : Զգայարանքը չէ սխալեր , քանզի չի դատեր :

որ այս ըսածներըս գործով չեն կատարեր , բայց  
 ընդհանուր կանոնը չեն ուրանար . գողի մը հարցը-  
 նեա թէ՛ ուրիշին քրտինք թափելով վաստակած  
 բանը ինչ<sup>՞</sup> գողցար , ըրածըդ անիրաւութիւն չէ՞ր  
 մի , պատասխան կուտայ թէ՛ յիրաւի մեկուն ունե-  
 ցածը առնելը անիրաւութի՛ է , բայց . . . այս Բայցը  
 մեզի պէտք չէ . քանզի իւր դատումն է . ընդհանուր  
 կանոնը ընդունեց . քանզի ուրիշէն սորվածն է :  
 Եւ որովհետեւ ամէն մարդ ասիկոյ գիտէ՛ ամէն մար-  
 դու մեկէն սորվեցընող մը ըլլալու է : Եւ այս սոր-  
 վեցընողնս մարդ չի կրնար ըլլալ : Քանզի Քրիս-  
 տոսի ըսած խօսքը , « Մի զոք կոչէք վարդապետ ,  
 « զի մի է ձեր ուսուցիչ (մատթ . իգ . 8) . միայն  
 առաքեալներուն չեր , առ հասարակ ժողովոցոց ալ  
 էր . և ամէն ատենի ամէն մարդու ալ է : Ոք չէ  
 մեր ուսուցիչը . այսինքն՝ մարդ չէ . այլ Մի է . որ  
 է Աստուած . և ուսուցչին միութեան նշան և ա-  
 պացոյց՝ սորվեցուցածին միութիւնն է :

Ուրեմն՝ բարոյական և կրօնական կարգի ուս-  
 մանց մէջ մարդկային դատումը իրեն գաղափար և  
 չափ և կանոն բըռնելու է յայտնեալ ճշմարտու-  
 թիւնը . այսինքն՝ ամէն ատեն և ամէն ակազ ամէն  
 ազգաց մէջ ընդունելի եղած կանոնները : Թէ որ  
 ասոր հակառակը ընէ , և ասանց չափ իր դատումը  
 բռնելու ըլլայ նէ . աշխարհի մէջ քանի՛ մարդ գրա-  
 նրվի նէ՛ այնքանալ սրիսալ կըլլայ : Քանզի մար-  
 դոյս դատմանը մէջ շատ բաներ կը մըմնեն՝ որ կր-  
 նան ծրուեցընել :

Ողջամիտ փիլիսոփայութիւնը՝ առաջին մարդոց գիացած և ամեն տեղ ճանչցրված ճշմարտութիւններուն վրան հիմնեալ ըլլալով՝ ընդհանուր է . և ասոր հիմն է Աստուածային յայանութիւր . և քանի որ ասոր հեռեւի ըլլայնէ՝ կարգը աւել չըլար : Աստուածային յայանութիւնն ալ՝ մարդոցս մտաւոր յառաջագիմութեանը մեծ օգուտ ունենալուն համար՝ կրթութեւ աղբիւրը այս իմաստասիրութիւնն է : Բայց ասոր մէջ մարդու խելք մտած և դատաւորութիւն ըրածին պէս՝ կարգը կալրելի : Եւ առաջկուց մինչև հիմայ հասարակաց աւանդութիւնը իրենց խելքովը չափելու իրաւունք ունենալ կարծող փիլիսոփայներուն ըրածը՝ այս կարգըս ավել է : Արդա՛ փիլիսոփայութեանց պատմութե՛ գիրքը . խառն ՚ի խուռն բաներ կը գըտնես . միտքըդ անսնց ընտելանալու՝ և ըսածնին հասկընալու էփ աղէկ դժուարութիւն կը քաշես : Սուտ ըլլալուն առաջին և գլխաւոր նշան . քանզի ճշմարտութիւնը մարդոցս մտքին առարկոյն ըլլալով՝ ո՛ւր որ գըտնէնէ՝ դիւրաւ կը հասկընայ . և թէ որ փիլիսոփային դրութեանը մէջ մթութիւն կայնէ՝ կամ փիլիսոփային մտայը մընն պիտի ըլլայ այս մթութիւնը , ըսելէ որ՝ իրեն ըսածը ինքնալ աղէկ մը հասկըցած պիտի չըլայ . կամ միտքը ծածկելու կամք մը ունեցած պիտի ըլլայ . և յատկապէս բան չըսելու մըտքով ըսված խօսքէն ի՞նչ ճըշմարտութիւն կըրնայ հասկըցիլ : Մէկ փիլիսոփային ըսածը մեկուն դեմ կուգայ , անսնց ո՛րը ստոյգ է տէյի հասկընալու հա-

մար դատելու է, բայց ի՞նչ կանոնով: Թէ որ կարգացողը իր խելքին հասածը կանոն բրանէ և անով դատէ նէ՝ փիլիսոփայութիւն անոնցը չըլլար, իրենք կըլլայ . առանց դատողութեան ընդունի՞նէ՞ ընդունելուն ի՞նչ պատճառ պիտի ցըցընէ: Եւ ամէն մարդ խելքը հասածին պէս փիլիսոփայութեւն դրութիւն շինելով կը տեսնես որ դրութիւնները կը շատնան . մէկն ալ հաստատութիւն չունենար . և Եւրոպա այնքան խելացիներ կեցած իքէն ալ պէտք եղածին պէս փիլիսոփայութիւն մը չկայ՝ կըսէ Միտլերսոն: Եւ ուրիշ իմաստուն մը կըսէ . երեք հազար տարի է որ մարդիկ միայն իրենց դատողութեան լուսովը և իրենց խելքին հասածը կանոն բրանելով իմաստութիւնը՝ և իրենց պարտահանութիւններուն հիմը կը փընաբռնեն . և սրբան իմաստուն մարդ կայ նէ՝ այնքան ալ դրութիւն կայ . և սրբան դրութիւն կայ նէ՝ այնքան ալ տարակոյսը և երկրայութիւնը շատցած է:

Մարդըս իր խելքին ապաւինելով՝ ընել կըրցածը այսքան կըրնայ ըլլալ . և խելացիներն ալ կելլեն կըսեն որ՝ մարդոյս իրեն խելքէն զատ առաջնորդ պէտք չէ . առաքինութեւն ճամբան առաջնորդելու՝ միայն խելքը և դատողութիւնը բաւական է: Բայց դատողութիւնը ի՞նչ է . տեսնել մընէ . և սրբան մըշուշներ և կիւրքեր կելլեն առաջը՝ որ տեսութեան յստակութիւնը կը խափանեն: Անն մարդ մէկ մէկ զատ դատում ունի . ասոնք իրարու հետ ի՞նչպէս միաբանելու է: Անանկ է նէ՝ միայն

դատումը մարդոցս բաւական է ըսելը սուտ է :

Եւ այս ստուծիւնս մէկ անփաս ստուծիւն չէ : Ստոյիկեան փիլիսոփայները ճակատագիր կայ ըսին . ամէն բան ի՞նչպէս ըլլալու է նէ՝ հարկաւ անանկ պիտի ըլլայ . անոր վայ խելք յոգնեցընել և ուրիշ կերպի դարձընել ուղելը պարայ բան է : Այս կարծիքըս ունեցողը ի՞նչ կընէ ուրիշին աղէկութեանը համար . բան մըն ալ չընէր . քանզի պիտի ըլլայ նէ կըլլայ, ընել պէտք չէ աէյի միտքը դրեր է : Յայտնի է որ այս դրութենէս մարդկութե՛ օգուտ մը՝ և կրթութեան յառաջադիմութիւն մը չըլլար :

Եպիկուրեանները՝ բուն խելացիութիւնը աղէկ ապրելուն ճամբան գիտնալն է կըսէին . մարդոցս միտքը հոգ և երկիւղ ձըգելու բաները մըտքէն հանելու՝ ուրախ բաներ դընելու է անոր տեղը . ուստի՝ Աստուած մարդոցս ըրածին չի խառնըվիր կըսէին . հանդերձեալ կեանքը կուրանային . միայն այս պատճառով որ՝ մարդս ասոնք մտածէ նէ՝ ընկելիքը չի կըրնար ընել . երջանիկ կեանք չի կըրնար վարել : Բայց յայտնի է որ՝ ասոնք՝ մէկ մարդ մը մըտքէն հանելու ըլլայ նէ՝ ընկերութիւնը քակվելուն ալ իր ձեռքէն եկածին չափ պատճառ կըրնայ ըլլալ :

Վիւնիկեան կամ Շնական ըսված փիլիսոփայները՝ երջանիկ ըլլալ ուզողը ազատ ըլլալու է կըսէին . և որովհետեւ կըսէին որ՝ մարդոցմէ ամընձալը՝ ուրիշին

կարծիքին ծառայ ըլլալ է (1), ուստի ամբընալն ալ վերցուցեր էին. և իրենց մէջը մըանող մարդը կըրթելու համար՝ յատկապէս բաղմուտեան մէջ ամբընալու բաներ ընել կուտային: Եւ ամբընալն ալ մարդոյս մեծ սանձ մընէ:

Ուրիշ փիլիսոփայներն ալ ուրիշ կարծիքներ ունեցան. բայց մեր միտքը փիլիսոփայական աղանդոց պատմութիւնը շինել չըլլալուն համար այս երեքըս միայն յիշեցնիք՝ որ կրթութեան պէտք կըլամ բաները արմատէն կը քակեն: Յոյսը՝ Սոցիկեանները վերցուցին. Աստուծակ վախը՝ Եպիկուրեանները, և մարդոցմէ ամբընալը՝ Ենականները վերցուցին: Եւ այս երեքս ալ զատ զատ՝ կրթութիւնը վերնալուն պատճառ եղան: Եւ այս փիլիսոփայութիւնս վերջին դարու մէջ զօրանալով՝ երբոր Եւրոպա ամէն տեսակ փիլիսոփայութիւններու սրշտպաններ և կուսակիցներ գըտնըվեցան, Քուսնաս անանկ վիճակի մը հասցուցին՝ որ բարբարոս ըսված ազգաց մէջ անոնց ըրածը ընող կարծեմ թէ չէր գըտնըվեր. և ասոր վրայ կարդալու բան է Մուսիւթիւնիսն շինած պատմութիւնը:

Վերջ բանիս. մարդըս առաջ ամէն կատարելու-

---

Ծ. : (1) Ասոր ալ արմատը ուրիշ գէշ կարծիք մընէր. մէկ գործքի մը աղէկ կամ գէշ ըլլալը հասարակութիւն կարծիքէն զատ կանսն չունի կըսէին. բայց այն կարծիքը հասարակութեան մէջ որիկ զօրացած ըլլալը հոգ չէին ընել:



Թեանց աղբիւրին մօտ էր • քանզի առաջին մարդը  
անմիջապէս անոր ստեղծածն է • և ետքը մեղօք ան-  
կէց հեռանալով՝ անկատար կուռքեր հնարեց ինքն  
իրեն • կամ բոլորովին անաստուած եղաւ :

Առաջ ամեն մարդու լեզու մէկ ըլլալով՝ իրարու  
միտք դիւրաւ կը հասկընային և կը հասկըցընէին •  
և ետքը լեզուները բաժնըվելով՝ տեղեկութիւներն  
ալ բաժնըվեցան • մեկուն գիացածը մեկալին հա-  
ղորդելու միջոց չի մնաց :

Առաջ մարդիկ երկար կապրէին • ետքը կեան-  
քերը կարճըցան • սորվեցընողին ալ՝ սորվողին ալ  
ժամանակը պակսեց :


Առաջին նախահարք՝ իրենց ցեղին վրայ արդա-  
րութեամբ և հայրական գթով տիրելով ժողովուրդը  
ամբօփ կը բռնէին • ետքը իշխանութիւն սիրող  
մարդիկ ելան • տիրելու եղանակին մէջէն արդա-  
րութիւնը հանեցին • և ժողովուրդը իրարմէ զստ-  
վելով ցըրուեցան :


Առաջ Ադամ Աստուծակէ ինչ որ սորված էր նէ՝  
այն ճշմարտ գիտութիւնը որդուց որդի անցնելով  
ամեն բան բարեկարգութեան մէջ էր • ետքէն փիլի-  
սոփայներ ելան • Աստուծոյ յայանած ճշմարտութիւնը  
մէկ դի ձգեցին • իրենք իրենց դատմամբը ճշմար-  
տութիւն փընտրուելու ելելով՝ ամեն բան տակնու  
վրայ ըրին :

Անանկ է նէ՝ կրթութիւնը աշխարհի մջ հին է •  
անկրթութիւնը ետքէն մտաւ : Եւ կրթութիւնը  
քրիստոնէութենէն անհնար է որ զստվի • քըրիս-

տանեայ չեղող ազգաց մէջ արտաքին ձևով կըրթու-  
թեան պատկեր կը գրանւրվի . բայց կըրթութիւն  
չէ : Իրեն շահը չե նայելով ուրիշին օգուտ ընել  
սորվեցընողը միայն քրիստոսնէութիւնն է . որ իրար  
սիրեւ կը սորվեցընէ , չէ թէ մեր ընկերը մեր  
անձինը պէս սիրելով . այլ ինչպէս որ Քրիստոս  
մեզ սիրեց նէ՛ անանկ սիրելով . և Պատուիրան նոր  
" տամ ձեզ, զի սիրիցէք զիմեանս . որպէս սիրեցի  
և ես զձեզ : . . Մեծ ևս քան զայս սէր ոչ որ  
և ունիցի , եթէ զանձն իւր զիցէ 'ի վերայ բարե-  
և կամաց իւրոց ( յովհ . ժԳ . 34, ժԵ . 13) : Այս  
սէրըս չեղած տեղը բուն և ճշմարիտ կըրթութիւն  
ըլլալ անհնար է :

Վ Ե Ր Զ











ՀԵՐՈՆ ԿՆՔԱՊԻԿԵԼ Ե ԿՐԻՍՏՈՍՅԱՆ

25/11-42 P.

